ՀԱՅԱԳԱԶԵՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

ՊԷՅՐՈՒԹ, 2003

Յատուկ շնորհակալութիւն՝
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան,
որուն միտքական օժանդակութեան շատ բան կը պարտի
այս հատորին հրատարակութիւնը

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀԱՏՈՐ ԻԳ.

ՊԷՅՐՈՒԹ, 2003

PUBLISHED BY THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

VOLUME 23

BEIRUT, 2003

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆ՝ ԶԼՐԴ ԴԱՐՈՒՆ

Հայագիտութիւնը տարբեր ժամանակներու մէջ դրսեւորուած է որոշակի անհամաչափութիւններով:

Այսօր եւս, հայագիտութեան բնագաւառներ (լեզու, պատմութիւն, քաղաքական գիտութիւններ, տնտեսագիտութիւն, եւն.) եւ բնագաւառներու հատուածներ (շարականներ, ցեղասպանութիւն, սփիւռք, եւն.) յաճախ իրենց արժանի խորութեամբ չեն ուսումնասիրուիր:

Ոչ բոլոր նորագոյն ուսումնասիրութիւնները կը կատարուին գիտատեսական արդիական մեթոտներու համապատասխան: Համաշխարհային հասարակագիտական նորագոյն եզրերու, ելակէտերու, հարցադրումներու, մօտեցումներու, տեսութիւններու եւ բաղդատական ուսումնասիրութեանց համեմատաբար քիչ կը հանդիպինք հայագիտութեան մէջ:

Իւրաքանչիւր աշխարհագրական շրջանակ կը յատկանշուի գրեթէ միալեզու հայագիտութեան գերակշռութեամբ: Երբեմն չեն օգտագործուիր տուեալ նիւթին առնչուող բոլոր լեզուներով անհրաժեշտ սկզբնաղբիւրներն ու գրականութիւնը:

Լոյս տեսած ուսումնասիրութիւններէն բոլորը չեն որ անհրաժեշտ տարածում ու գիտական արձագանգ կը գտնեն: Միաժամանակ, հայագիտական այս հրատարակութիւնները համազօր ընդգրկումով չեն թափանցեր հայ իրականութեան կրթադաստիարակչական բոլոր ասպարէզները:

Ժամանակակից հայ իրականութիւնը առ այսօր բաւարար ուսումնասիրութեան չ'ենթարկուիր:

Միանշանակ չեն հայագիտութեան առաքելութեան սահմանումները. «Ինչո՞ւ համար հայագիտութիւն» հարցումին պատասխանները զանազան են:

Վերոնշեալ իրողութիւնները, ինչպես նաեւ այլ հարցադրումներ կարելի է ամփոփել հիմնական մէկ վերնագրի տակ՝ «Ինչպիսի՞ հայագիտութիւն 21րդ դարուն»:

Սպառիչ պատասխաններ չկան այս բոլորին, ի հարկ է: Բայց իրեւ առաջին քայլ անհրաժեշտ կը գտնենք հայագիտական ոսկեփորիկի մը յառաջացումը՝ համացանցային ծառայուն կայք մը, ուր մէկտեղուին եւ առնչուին հայագիտական բոլոր ճոռութիւնները: Կայք մը, ուր առիթ տրուի բազմակարծութեան՝ փոխադարձ յարգանքի եւ պատշաճութեան սկզբունքներու յարգումով:

Փորձի, գիտելիքի, տեսակէտի փոխհարստացման համար անհրաժեշտ քայլ մըն է նաեւ ճեղ մասնագիտական հաւաքներու, սեմինարներու կայացումը, ուր անմիջական եւ դէմ յանդիման միջավայրի մէջ հետազօտողներ քննարկեն հայագիտական հանգուցային տեսական, փաստական եւ գործնական հարցեր:

Հայկազեան Հայագիտական Հանդէսի խմբագրութիւնը հաճոյքով կ՚ողջունէ որ նման միջոցառումներ պիտի օժանդակեն հայագիտութեան բազմակողմանի յառաջընթացին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հայր Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Արտա Էթմէքճի (ի պաշտօնէ) - Արշալոյս Թոփալեան - Արմէն Իրմէչլեան - Արա Սանճեան - Անդրանիկ Տագէսեան (պատասխանատու քարտուղար)

ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐՈՒ ՄԱՐՄԻՆ
Սիլվիա Աճէմեան - Ժիրայր Դանիէլեան - Երուանդ Երկանեան - Հրանոյշ Խառատեան - Մուրատ Հասրաթեան - Հրաչ Չիլինկիրեան - Մկրտիչ Ց. Պուլտուքեան - Մեղա Տատոյեան - Սիւզըն Փեթի – Պերճ Ֆազլեան

Հայաստանի մէջ ՀՀՀի ներկայացուցիչ՝ Արծուի Բախչինեան

EDITORIAL

WHAT TYPE OF ARMENIAN STUDIES IN THE TWENTY-FIRST CENTURY?

The development of Armenian Studies has been marked with certain disparities at different periods.

Even today, different fields (language, history, political studies, economics, etc.) and sub-fields (religious hymns, the Armenian Genocide, the Armenian Diaspora, etc.) within the overall domain of Armenian Studies are often not analyzed with the appropriate depth that each of them necessitates.

Not all of the latest studies are carried out according to modern research methods and techniques. Rarely do we encounter in Armenian Studies the use of the latest terminology, scientific premises, queries, theories and comparative studies all too common in the social sciences worldwide.

Every geographical area is characterized by the dominance of a single language in the works of Armenian Studies produced there. In certain cases researchers do not make use of all the indispensable primary sources and literature available in different languages.

Not all the studies published are distributed adequately or get the necessary scholarly reviews. At the same time, these Armenological publications are not reflected sufficiently in the informative and educational activities directed at the Armenian people as a whole.

The contemporary Armenian reality has not been studied adequately to date.

There is no consensus on the definition of the mission of Armenian Studies. The answers given to the question "Why Armenian Studies?" do vary.

These facts and perhaps other related issues as well can be summarized under a single title: "What type of Armenian Studies in the twenty-first century?"

There are no comprehensive answers to all these questions, of course. However, as a first step, we find it necessary to establish an extensive website of Armenian Studies, where information can be assembled regarding all new developments in the field. This website should become a pluralistic forum, based on the principles of civility and mutual respect.

Another necessary step to achieve the regular sharing of viewpoints, knowledge and experience in the field of Armenian Studies is the convening of relatively small specialized academic gatherings and workshops, where experts can exchange views face to face on various pivotal theoretical, factual and practical issues in this domain.

The editorial board of the *Haigazian Armenological Review* is convinced that such measures will benefit the all-inclusive advancement of Armenian Studies.

EDITOR IN-CHIEF
The Very Rev. Father Antranik Granian

EDTORIAL BOARD
Antranik Dakessian (executive secretary) – Arda Ekmekji (ex-officio) – Ara Sanjian – Arshalouyse Topalian – Armen Urmeshlian

CONSULTATIVE BODY
Sylvia Agemian – Megerditch H. Bouldoukian – Seta B. Dadoyan – Berj Fazlian – Murad Hasratian – Hranush Kharatian – Susan Pattie – Jirayr Tanielian – Hratch Tchilingirian – Yervand Yerkanian

The Representative of the *Haigazian Armenological Review* in Armenia: Artsvi Bakhchinyan

ԳԱՂԱՓԱՐԻ ՁՈՀԸ՝ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

Մեծ անհատականութիւն մը՝
որ կը սաւառնէր իր ժամանակին
քնկերային, մտաւոր երեւոյթներուն վրայ[1]:
Արտաչէս Յարութիւնեան

ԳԱՂԱՓԱՐԻ ՁՈՀԸ ԵԳԻՊՏԱՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Մէկ մէկ հայ գաղթօճախ ունեցած է մտաւորականու-թիւնը, որքան եգիպտահայ համայնքը։ Ազգային ոլորտի իրազործութիւններուն առիթով՝ եգիպտարնակ ականաւոր հրապարակագիրներ միշտ բանի գործուցած են իրենց գիրակից ժամը[2]։ Ականաւոր հրապարակագիրներու մէջ փաղանգին յառաջամարտիկը եղաւ Արփիար Արփիարեան։

Գրիգոր Զոհրապ՝ Արփիարեանի դիմաստուերը ներկայացնելով, չատ ուշագրաւ կերպով հարց տուած է. «Ի՞նչպէս պիտի ըլլայ այս կեանքին ծերութիւնը. վերջ ի վերջոյ ու՞ր կանգ պիտի առնէ գինքը տանող ճառա-կը... »[3]։

«Ժուռաւոր եղաւ այդ կեանքին գաղրնկերումը...»։

Ինքնագիտակցութեան մէջ, արդարեւ, հազուագիւտ երեւոյթ է անհատի մը երեք մահափորձի ենթարկուիլը՝ իրագործուած իր տեսիլքի հակառա-կորդներուն կողմէ։ գէթ հայ իրականութեան մէջ Արփիարեան եղաւ մեզի ծանօթ այդ անգուգական պոհը...։ Արփիարի կենսագիրները՝ որոշ նկատումներով, խուսափած և ար դ մ կ տարուած են եր մ հափոր-ձները մանրամասն նշելէ· արտեզ, ոսկին եզած նիհիլոգին չգագ-րուիան կը ներկայացնենք երեք ահափորձերուն ամփոփումը՝ քաղուած ժամանակակիցներու յուշերէն, եւ անձնական մեկնած բարձա-կուռքի մը մանրամասնութիւնը՝ հազորդուած իր իսկ կողմէ։

Ա. ՄԱՀԱՓՈՐՁ

տարբերուած է առաջին մահափորձին եւ անոր պատճառներուն մասին, Ան կը գրէ. «1895 Դեկտեմբեր 2: Երկուշաբթի իրիկունն էր, երբ Արփիար Արփիարեան, որ Բանկալթիի Ս. Յակոբի կայուածներէն մէկուն մէջ կը բնակէր իր եղբօր Տիգրան Արփիարեանի հետ, ուշ ատեն, բնակարանը գացած միջոցին, Թագսիմի պարտէզին դէմ՝ դաշունահար վիրաւորուեցաւ դաշնակցականի մը կողմէ:

Արփիար, հակառակ իր ստացած ծանր վէրքերուն, կրցած էր տակաւին ճիչեւ տալ հասնիլ եւ փողոցին դուռը բաղխել: Բայց երբ դուռը բացած էին՝ արիւնլուայ գետին տապալած էր, ինքզինքը կորսնցուցած:

Տօքթոր Զօհրապ, որ մօտերը կը բնակէր, իսկոյն կանչուած էր եւ նախնական դարմանները տուած:

Այս մահափորձը աննակնկալ մը չէր ո՛չ իրեն եւ ո՛չ ալ մեզի համար: Ամիսներէ ի վեր Դաշնակցութիւնը մութին մէջ, ընդհանրապէս Հայրճիկի եւ մասնաւորաբար Արփիարեանի դէմ կը գործէր:

«Արփիարին սեւացրէ՛ք» հրահանգը նկած էր արդէն եւ խղճի մտօք - եթէ կարելի է այս բացատրութիւնը գործածել հոս - կը գործադրուէր: Դաշնակցականները բնաւ բեռան լայր կը տարածէին թէ Արփիար մատնիչ է, թէ Նազըմ փաշայի մարդն է, թէ ամէն գիշեր աւետ հետ կը ճաչէ, եւն.»[4]:

ՄԻՋԱՆԿԵԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄ

Ան յարձակումի մասին կը պատմէ ինք՝ Արփիար, Փարիզէն Լոնտոն՝ Հնչակեան կուսակցութեան գեղչոնական վարչութեան ուղարկած 18 Մարտ 1897 թուակիր նամակին մէջ. «Դիշերը հայոց վրայ *conference* կար: Գացի: երբ լմնցաւ դուրս նետեցի, բանը երկու բարեկամի հետ կը խօսէի, յանկարծ կոնակէս բռունցքի հարուած մը զգացի իջաւ. կը փախչէր, վազեցի ետեւէն ու գաւազանիս միջոցաւը դաս մը տուի, այնքան ուժգին զարկի գլխուն որ հատկենկ գաւազանս կոտրեցաւ: Ուրիշներ ալ վրայ հասան...: Խօսայող չկար: Ոտնիկաւորութիւնը վրայ հասաւ եւ առաջ ճանիկ փրկեց այդ ողորմելին:

Այստեղ գտնուող դաշնակցականները կը պահեն զինքը. զգետս չիներ եմ, ու ամէն տեսակ պէտքերը կը հոգան»[5]:

Բ. ՄԱՀԱՓՈՐՁ

Փարիզի այս միջադեպէն քանի մը տարի ետք, այս անգամ Վենետիկի մէջ, 1903 Փետրուար 22ի իրիկունը, կատարուեցաւ մը անցած

տանեն, Արփիարեան մահափորձի կ՚ենթարկուի՝ ատրճանակի երեք հարուածով...։

Մակայն այս անգամ մահափորձը ունէր այլ դերձակապատճառ...։

Արփիար չատ լաւ գիտէ՝ որ Վահէին[8] գործն է այս։ Քեռապաչին Օահան գինք կը տեղեկացնէ՝ քէչ «զուշակութիւնդ ճիշդ է. իր գործն է եղեր բեզի դէմ եղած սպանութեան փորձը։ Գահիրէի մէջ որոշեր են, Առոմ Ապաճեանի տունը. ճարտօ ալ Գահիրէէն գտեր դրկեր են»։

Այս մահափորձին մասին մանրամասնութիւններ ի չատ կու գան 1922ի աշնան իրիկուն մը, երբ Պուքրէշի Մոյիլոս պողոտային վրայ գտնուող գարեջրատուներէն մէկուն մէջ, Մխիթարեան Միաբանութենէն՝ Հ. Մկրտիչ վրդ. Պոյուրեան կը հանդիպի անեանօքի մը, որ կը պատմէ հետեւեալը։

«1907-ին էր[9], լաւ կը յիշեմ, Ընտղեանց կամ Վարդանանց տօնին օրը, երբ կատարուեցաւ մահափորձը Արփիարի դէմ։

- Ես այն առեն հոն էի, ո՛րքան երիտասարդ, ո՛րքան տաքարիւն...Երբ Արփիարը գետին իյնայ, մութին մէջ էր...կը դիտէի...ամէն աննիւթ իտալացիներ հոն կը վազէին, մինչ Արփիար, ուշաթափ փրուած էր սալայատակին...օտարները շրջապատեցին, հետզհետէ գալարուող հայը, որ չէր մեռած...Աննաւօթները կը մեղքնային հէգ մարդուն վրայ, իսկ ես իմ անկիւնէս կ՚անիծէի բախտը որ գնդակը իր նպատակին չէր հասած...

- Ինչե՞ր կ՚ըսէք, պարոն, եղաւ պատասխանս, դուք այդքան չարամիտ մէկը չէք երեւիր...

- Ան առեն այդպէս էր։ Խեղդ, անմիտ, խաբուած երիտասարդ մը որ կը հաւատար իրեն ըսուածներուն...

- Յետո՞յ, շատ մնացի՞ք Վենետիկ։

- Նոյն գիշերն իսկ արդէն շոգենաւ մտայ։ Անցագիրս գրպանս էր, վիզա եղած։ Իմ «գործս» վերջացած էր, առելի ճիշդը, ձախողած...»[9]։

Այդ վայրկեանին Հայր Պոյուրեան անեանօքին կը պատմէ մահափորձէն ետք խուճապը մը վարդապետանոցում։ Հետ Արփիարի տուած իր արձակութիւնը։ «...Իտր քունով աչքերս էր մահճակալին մէջ, բերնացիչի ազդեցութեան տակ։ Քովը գրուխաս մայրապետ մը կը հսկէր։ Վերը մահացու չէր բարեխնամարար, եւ ի դիբախտութիւն գինք սպաննել ուզողներուն։

Սպասեցի որ արթննայ։

Կէս ժամ ետք արթնցաւ, ու ժպիտ մը գծագրուեցաւ դէմքին վրայ։

Անցած ըլլայ Պր. Արփիար: Երա՞զ է թէ իրականութիւն: Ո՞ր գիմովին հարուածը քեզ հոս բերաւ:

- Նորավէպդ տպեցի՞ր. գէշ չէ, տպէ...

- Չգէ՛ հիմա հիմ վիպակները, այս նորավէպին ճայիններ, ի՞նչ կը նշանակէ այս դէպքը:

- Ջիս սպաննել ուզեցիք, բայց չյաջողեցաւ. ուրիշ ոչինչ: Գիտէի արդէն: Իննի գրած էիմ Եգիպտոսէն, բայց լուրջի չէի առած եւ գրեթէ մոռցած էի:

- Ժամը քանիի՞ն պատահեցաւ:

- Տասնին, երբ տուն կ՛երթայի, հրացանի հարուածի մը ձայնը լսեցի հաստ մըն ալ ետեւէն, չորս կողմս նայեցայ, ոչ ոք կար: Քիչ մը առաջ գացի, զգացի որ վիզիս բրտինքը կը վազէ: Ջրտինքս սրբեցի, եւ փողոցի լամբին տակ բաշկինակիս նայեցայ, ու տեսայ որ արիւն է եղեր... խեղճ մոլորածի մը քաջագործութիւնը...

Արփիար առողջացաւ, տակաւին ապրեցաւ ու ինքն իր ոտքով գնաց իր գերեզմանը, Գահիրէ, որ վերջապէս կուսակցականներէ բռնադրուած մահացու գնդակը հասաւ իրեն:

Հայը սպաննեց Արփիար եւ Հայը արձան մը կանգնեց անոր հոգեկոչտին վրայ ...»[10],

Շատ երկար լռութենէ ետք, Անժանօթը կ՛եզրակացնէ.

«- Վարդապե՛տ շատ ուրախ եմ որ Արփիարը քեզի անձամբ ծանօթ եղած է. կրկին ուրախ ու երջանիկ եմ որ հիւանդանոց այցելած էք եւ աչուչտ հոգացած: Անհունօրէն երջանիկ եմ որ յիմար խելքս նկատ գնդակովս չընեաւ այդ մեծ մարդը: Ես այն ատեն մոլորած էի, չէի գիտեր: Կեցցէ՛ Արփիարը ...»[11],

Գ. ՄԱՀՄԱՓՈՐՁ

Արփիարեանի դէմ կատարուած վերջին ոճիրը՝ հարցէն տարբեներէ ի վեր քցուած եւ ամիսներէ ի վեր պատրաստուած էր «Ընկ. վոհմակին» կամ «դրամաշորթի խմբակին» կողմէ, գործադրուելու Համար 1908 Փետրուարի 12ին, Քորնէյլիոյի գիշերը, ժամը 9ի առնելերը, Գահիրէի ապետական մէկ թաղին մէջ. Երբա էլ-Մահախ, ուր կը բնակէր առ Վահան Քէթէհան՝ որ Արփիարի անկեանք մարմինը տեսած է Ապտինի ատենականատան բակը, անոր տպաւորութիւնէն Հարիւր երկու ժամ ետք, կը յայտնէ՝ թէ «Ոճրագործի խմբակին առաջին չտեսանակութիւնը չէ ան...»[12].

ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՆԴԷՍԸ

Արփիարեանի մոնրիմներուն դիմումով, ու. Եպիսկոպոսի Առաջնորդ Հօր՝ Մկրտիչ եպս. Աղաւնունիի, եւ Գաւառական ժողովի Ատենապետ Պարոն Նուպարի տնօրինութեամբ՝ որոշուած է ապագային յուղարկաւորութեամբ յարգել անոր քիչատակը։

Ուշրոթի իրիկուան դէմ, Գահիրէէն ամէն քարէ սուտար բազմութիւն մը՝ չուրջ 2000 հոգի, ժողովական, մտաւորական, պաշտօնատար թէ վաճառական, բժիշկ թէ փաստաբան, արհեստաւոր գաւակարգը՝ առանց բացառութեան գացած է Պէյն-էլ-Մուրէնի ճակոճքին, խառնուելով բազմութիւնն յառաջացնելով։

Բազմաթիւ ծաղկեպսակներու պռնաւոտ պարտէզի մը մէջտեղ, քաւչապարդ մահարեմին վրայ՝ մեռոպեաց գագաթին մէջ, Հանգչած է ինչ որ Արփիարեանը եղած է...։

Մոնրիմներու մէջտեղ, գասին մէջ իրրեւ սգակիր կեցած է իր եղբօրորդին՝ Փիլիպ Արփիարեանը, վիշտէ քոչուն մը նման...։

Դալն ու Հանդիսաւոր մեռելական արարողութենէն ետք, բեմ բարձրացած է Մկրտիչ եպս. Աղաւնունի եւ գգացումով լի դամբանական մը խօսած։ Դամբանականներ արտասանած են նաեւ Վահան Մարգիսեան եւ Քէքէեան, որոնց տխուր պերճախօսութիւնը՝ գրական արտարգիութեամբ արտասուագին, խորապէս յուզած է ներկաները։ Կարդացուած է նաեւ Քրիքիսէն՝ Մշոյճի ցնցող Հեռագիրը։

Յուղարկաւորները, քաղաքը անցած է Մուսքիէն, Ամասպա-էլ-Քասրէէն եւ Քդիսասան պողոտաէն։ Յուղարկաւորները առջեւէն քալած են՝ Առաջնորդը, Պարոն Փաշա Նուպար, Փիլիպ Արփիարեան, Արփիարեի մոնրիմները եւ գրագէտներ՝ իրրեւ սգակիր։ Քաղաքը կանգ առած է Օփերայի հրապարակը՝ ուրկէ սկսած է կառքերու անհատոնում շարանը։

Մարմինին գերեզմանատան առջեւ՝ դագաղը վար առնուած է կառքէն եւ ուսամբարձ տարուած մինչեւ մատուռ, ուր մեռելական ազգքնորհ եղբ. դաբժեալ ուսերու վրայ բարձրացուցած տարած են անոր վերջին հանգրուանին սեմին վրայ[3]։

ՁԻԵԴ ԵՒ ԱՆՁԻԵԴ ԲԱՆԵՐ ԱՐՓԻԱՐԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Միքայէլ Վարանդեան հետեւեալ կերպով կը նկարագրէ Արփիարեանի դիմանկարը՝ «Պատանեկութենէ յետոյ ալ» ինք «Վերակացուներու» հնչակեանութեան պատգամին յայտնուեցաւ Արփիար Արփիարեան, որ արդէն իսկ վարկաբեկուած էր 1890-ի իր ծանօթ «Մեծ»

ճող[14]: Իր շուրջ յարուցուած ամբաստանութիւններով ու վէճերով ևս ամբողջ տարիներ զբաղեցուց հնչակեաններ եւ Դաշնակցութիւնը...:

Մարզուած գրչի տէր, մեծատաղանդ աւծակազիր եւ հրապարակագիր՝ Արփիար Արփիարեան, տարաբախտաբար, պոլսական վատթարագոյն տիպի գրողներէն էր, անսկզբունք, աննկարագիր, միանգամայն անպէտք քաղաքական կուսակցութիւն մը վարելու համար եւ շատ չանցած, կնքեց իր մահկանացուն, եղերական ձեւով, իր իսկ ընկերներու գնդակներուն տակ...»[15]:

Յարիներ ետք, բանաստեղծ Արամ Երկաթի՝ իր «պատանեկան յուշերուն վրայ յենլով, Ժուռաւոյեի մէջ նկարագրած է «մեծ գրագէտին մահը, աւերը աճչուն դէմքին պատկերը, աւեր բաղումը...:

...Ծանաձոռանը երբ աւեր դէմքին գիծերը պատ մը խաւճգարած, սահմռկեցուցած էր, տեղի տուաւ յետոյ աչեռուն աղջորը ժպիտի մը, որ դագաղին բացուելուն պէս՝ յառեցաւ մեզի, աղամաճղի ճման կաթծր եւ չուչաճի ճման քնքոյշ:

...Ու այդ մեռելին դէմքը կարծես ոչ մէկ գիծով կ'արտայայտէր ցաւը, որ զգացած էր վերջին պահուն: ...Մեռելին դէմքը պահած էր տարօրինակ ժպիտ մը: Թերեւս այսպէս կ'ըլլայ ժպիտը երկարատեւ չարչարանքէ վերջ մահացած տուրքերուն: Ի՞նչ ըսել կ'ուզէր այդ տարօրինակ ժպիտը: Հասկցող մը կա՞ր արդեօք: Չէին ըմբռներ մանաւանդ աւեռը, որ դեռ աւէծք կը կարդային ոճրագործին դէմ: Երբէ մէկը իր հոգիին մէջ զգար այդ աղամաճղին լուսաշող սլաքը, այդ չուչաճին երկնաթոյր ծաղկումը, անշուշտ պիտի ըմդմիջէր դամբանախօսները պռռալով աւեռց երեսին.

Չէ՞ք տեսներ որ մեռելը կը ժպտի, ուրեմն ինչու դեռ կը շարունակէք ձեր կոկորդիլոսի արցունքները»[16]:

Վրթիարեանի գէմ եղած ամբաստանութիւններու մասին վճռական խօսքը պատմութեան քովով, Հաքոբեանի համբագրագիտ մինաս Թէօլեան կը գրէ. «12 Փետրուարի 1908ին, մինչ նպարավաճառի մը խանութէն դուրս կ'ելլէր առօրեայ իր գնումը կատարելէ ետք, Գահիրէի մէջ, իր երբեմնի գաղափարակից ընկերներուն կողմէ ահաբեկումի ենթարկուեցաւ ու եղերականօրէն կեանքի իր գիրքը փակեց հայ հրապարակագրային, հանրային եւ գրական անդաստաններուն վրայ արդիւնաչատ վաստակով յայտնի մեր մշակներէն Արթիար Արթիարեան՝ «Հայրենիք Ժամագրի յեղափոխական» հեղինակը. Վերակազմեալ Հնչակեաններու յառաջապահ բարեշրջականը, Իրաւպաշտ գրակա-

նութեան դրօշակիրն ու «Լուսաբեր»ի հիմնադիր գաղափարաբոյն խմբագիրը:

Մղուած ենք միանալու անոնց՝ որոնք ցաւանան կը դարձնեն աւերը գաղափարապաշտութիւնը ու հայրենասիրութիւնը, որուն հաւատալու պատճառներ կու տան մեզի իր գրականութիւնն ու հրապարակագրութիւնը, անշահախնդիր մարդու ալ դիմագիծը: Արդարեւ, Արփիարեան - ըստ յաւատեղեակներու - արհամարհած է միշտ նիւթական դիրքերն ու նիւթապաշտական ծարաւները, մերժած է ոսկիին վայրը եւ այդ փառքով սոսքացող ազնուաշուքներու սակարկութեան փորձերը, «օրհնեալ գերդաստան»ներու փառասիրական տենչերը... Եղած է պարզ մարդ մը, պարզուկ գրագէտ մը, պաճիր-հացի մարդ մը՝ իր արժանապատուութիւնը բարձր պահելու համար նիթին հեղինակութենէն...»[17]:

ՀԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակագիր եւ գրաքննադատ Գուրգէն Մխիթարեան՝ փուքիւտուքեամբ ուժանապրած է Արփիարեանի խմբագրութեան օրերուն Լուսաբերի գրաչարներէն Ափոպլարի վկայութիւններէն՝ խոսմարդոյ Արփիարեանի մասին.

« - Չենք կրնար բացատրել թէ ո՞րկէ հաւաքուած էր այնքան ուժ, այնքան հպարտութիւն, այս պզտիկ, այս տէրտիչի կերպարանքով մարդուն մէջ, որուն միակ զէնքը իր գրիչն էր, հառաւ եւ կծու խայթոցով:

- Պարզ մարդ մըն էր իր յարաբերութիւններուն մէջ եւ իր հագուստովն ու կապուստովը:

- Նկարագրով չատ անկախ մարդ էր, հպարտ եւ ուղղամիտ: Աճօթի կը մնար բայց երբեք դիրք ու պաշտօն ապահովելու չէր մտածեր: Կ'ըսէր իր կարծիքը առանց վարանումի, ուղղակի, ճակատին, ինչպէս կը գրէր, սուր ու խայթող:

...«Լուսաբեր»ի խմբագիր նշան:

Այն ատեն «Լուսաբեր» փաշայական (Պօղոս Նուպարի կուսակից) օրկան մըն էր եւ կը գտնուէր Տոքթ. Քէչէճեանի, [Նազարէթ] Տաղաւարեանի եւ վարժարանի տնօրէն Քիւրքճեանի վարչութեան ձեռքը: Արփիար առանձնից խմբագրապետութիւնը ամսական 4 ոսկիով եւ սովորականին պէս անկախ ուղղութեամբ:

Տպարանը Շարա Մահմուտ Ալիի նկուղի մը մէջ էր, մութ եւ խոնաւ, պատերէն ջուր կը կաթկթէր, Արփիար մեր ճօտը նստած, լռիկ կ'աշխատէր:

Այդ տարին (1906), Ռ[ուբէն] Որբերեան իր «Ծիածանները», անուն քերթուածներուն հատորը հրատարակած էր Ճիպուտիի մեծահարուստներէն Մ. Գէորգոֆի ծախքով, անոր նուիրուած եւ ի նպաստ Բարեգործական Միութեան, որուն քարտուղարն էր Տքթր. Տաղտարեան:

Առաւօտ մը կանուխ Վարչութենէն Տաղտարեան, Քէչէճեան եւ Աճտոնիկեան տպարան եկան Արփիարը տեսնելու, հոն չէր, երբ հարցուցին մեզի:

- Հիմակ կու գայ ըսինք մենք, այս անակնկալ այցելութենէն քիչ մը զարմացած:

Երբ եկաւ, Տաղտարեանը խօսելով ըսաւ.

- Պապա Արփիար, քեզի հետ տեսնուիլ կ'ուզենք:

- Ինծի՞ հետ, ըսաւ ան, ապշահար ձայնով, որովհետեւ չէր ուզեր անոնց հետ խօսիլ:

Գլխարկը ճեղքը նստաւ աթոռի մը վրայ:

Տաղտարեան խնդրեց որ գրախօսական մը գրուի «Ծիածանները»-ու մասին եւ այդ առթիւ սակայն քանի մը փաղաքշական խօսքեր ըսուին փաչային ներկայիս: Միայն թէ, աւելցուց ան, ձայէ որ «Վանեմ.» բառը գործածես, խմբագրականներուդ մէջ ալ չես գործածեր կոր. չե՞ս գիտեր թէ փաչան անգութական մարդ է եւ մեղք ունի «Վանեմ.» բառը չգործածելը:

- Այդ գրախօսականին տակը ի՞նչ պիտի դրուի, Ա. Ա., այնպէս չէ՞, պատասխանեց ան, որեմն «Վանեմ.» բառը չի գործածուիր:

Տաղտարեան բարկացած եւ ձայնը փոխելով ըսաւ խստօրէն.

- Բայց գիտե՞ս թէ դուն մեր վարձուորն ես:

Այս խօսքին վրայ Արփիար, յանկարծակի ապտակ մը ուտելու պէս, սկսաւ դողդողալ զայրոյթէն եւ գունաթափ՝ անոր դառնալով ըսաւ.

- Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր, վարձուո՞ր, ես ձեր վարձուո՞րը, է՛հ, է՛հ ...

Տաղտարեան քանի մը բառեր ծամծմեց եւ դարձանել ուզեց իր սխալը, ըսելով թէ՝ «այսինքն մեզի կապուած ես ըսել կ'ուզեմ» եւ նման խօսքեր փնտռեց ...

Արփիարեան այնքան վրդոված էր եւ այնքան վիրաւորուած, որ այլեւս առանց լսելու խօսքերը շարունակեց.

- Օ՜, ինծի Գրիգոր Արծրունիի պէս մէկը որ 14-15 բոպլի կը դրկէր ամէն մէկ յօդուածիս, «վարձք» բառը չի գործածեր, դուն ինչպէս բեթաճղ կ'առնես այդ խօսքերը: Տեա՛ս, քեզի կ'ըսեմ որ քու հառնուդ կը պակսի միայն, հառնուդ ...

Տաղաւարեան զգաց, որ սայթաքած էր չատ գէշ կերպով. եւ ինքզինք զսպելով, ըսաւ.- Ինչ որ է, քեզի շատ ծանր կը նստեցնէինք, բայց պապայի տեղ դրած ըլլալնուս համար կը ներենք:

Հետեւեալ օրը սակայն, պաշտօնէն հեռացուցին:

Արփիարեան, անվրդով, ամբողջ երկու ամիս պզտիկ սրճարանի մը մէջ չարունակ յօդուած գրեց, առանց երաւարակելու. «Լուսաբեր» Շոգիկեանի եւ Քիւրքճեանի ձեռքը մնաց եւ հետզհետէ իմկաւ:

Վարչութիւնը հարկադրուեցաւ նորէն Արփիարեանի դիմել, որ ելլաւ այս անգամ 8 ոսկի ամսականով եւ պայմանով որ բոլորովին ազատ ըլլայ ու չգործածէ «Վանեմ.» բառը:

Մենք շատ ուրախ էինք անոր ճանապարհը այս կերպ վերադարձնելը:

...Այս միջոցներուն էր որ «Ազատ Թեմ» թերթը կը երաւարակուի Արզուեանի եւ Լ[եռն] Լարենցի[18] խմբագրութեամբ: Առանք ամէն միջոցի դիմեցինք վարկաբեկելու եւ հալածելու համար զայն:

Անգամ մը երբ Արփիարեան սրճարանը նստեր կը գրէ եղեր,- ասիկա իրեն պատմեց մեզի,- Լարենց ներս կը մտնէ, կը մօտենայ Արփիարեանի, ու հայհոյելով, «Ինչ ձորէն մեզի դէմ կը գրես կոր» ըսելով ապտակ մը կ'իջեցնէ: Արփիարեան որ չէր ճանչնար Լարենցը անոր ով ըլլալը կ'ուզէ հասկնալ. Լարենց երբ իր անունը կու տայ, Արփիարեան սաստիկ զրգռուած կ'ըսէ.

- Ծօ, արիկայ, քեզի գրչիս ծայրովը պիտի սպաննեմ:

Հետեւեալ օրը անգլիացի ոստիկանապետը եկաւ, որուն հաղորդուած էր այս դէպքը Վարչութեան կողմէ, եկաւ եւ պնդեց որ տայ անունը թէ ո՛վ էր յարձակողը, ձերբակալելու համար: Արփիար մերժեց ու եւէ բացատրութիւն. միայն կտրուկ ըսաւ.

- Չէ փաշա, ես պիտի սպաննեմ զայն գրչիս ծայրովը, ես ...»[19]:

ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ան իր ամբողջական գործունէու Համար վիրաւորուեց եւ մեր մեծապոյն հրապարակագիրն ինչպէս նաեւ ամասւոր գործունէութեան բոլոր երեւոյթներուն մէջ avant guardeի մարդն[20] *Արփիարեանի դիմաստուերը, առորեւ կը հրաւարակենք հայ ազատագրական չարժման պատմութեան՝ ժթ.-ի. գարերու դէմքերէն՝ Միհրան Տամատեանի յուշագրութեան վերլուծանոր Տամատեանի քոզած ձեռագիրներուն մէջ գտած նոր էջեր, ուր կան չատ կարեւոր տեղեկութիւններ Արփիարեանի մասին:*

Տամատեանի գրական քոզօնը՝ ասկէ ետիզ քառատուն տարի առաջ, ամփոփուած գտանք երկու մեծ մեծութեամբ ճամպրուկներու մէջ,

բառական խառնակ վիճակով, նկատելով որ ժամանակի ընթացքին՝ կուսակցական հետաքրքիր ընկերներ փնտռուք կատարած էին այնտեղ...։

Իր աշխին՝ սկսին Զարուհիի բարեհաճ թոյլտուքեամբ՝ առաջին աչքնեւուքեանս տեսքայ հազիւ տեսանելի պուտքեամբ մատիտագիր ձեռագիր մը՝ 21,5x27,5 սմ. մեծուքեամբ, չթուագրուած եթէ դեղնորակ քերթերու վրայ գրուած, որուն վրայ՝ առաջին անմիջական պրուքենէն հետք, Տամատեան 38 տրրագրուքիւն եւ բաւերում կատարած է։

Տամատեանի ձեռագիրը. ինչպէս նաեւ կատարուած մէջբերումները կը ներկայացնենք նոքնուքեամբ, առանց ուղղագրական, կէտադրական կամ այլ փոփոխուքիւններու, միայն երբեմն [] ով բաւերումներ կատարելով։

Իր յուշագրուքեան մէջ, Տամատեան անհրաժեշտ նկատելով չեչոիլ անցեալի տիրական դէմքի մը եւ բարակից դէմքերու մասին անդրադառնալու չարժառիքը, եզրակացուցած է, թէ՝ «Արփիարի մասին այս չափազանց երկար ... գրութիւնս՝ իմ կարծիքով կարեւոր էր իբրեւ ներածութիւն եւ բանալի ծառայելու համար այս պատմութեան մէջ յիշատակուելիք այն անձերուն որոնց մէջ դէր ունեցած էր անիկա»

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Արփիար Արփիարեան՝ որուն վրայ թէր ու դէմ խիստ շատ խօսուած է թէ՝ նախայեղափոխական շրջանին եւ թէ՝ ամբողջ յեղափոխական շրջանին՝ միշտ իր եղերական մահը, եւ անկէ ալ վերջ, քիչերուն այնչափ ծանօթ եղած է որչափ իմծի եւ ան՝ այնպիսի տարօրինակ, արտակերպ եւ առեղծուածային անձ մը եղած է որ՝ քիչեր կրցած են թափանցել իր բուն էութեան [խորքը], ասով կը բացատրուի այն երեւոյթը որ, - կուսակցական կիրքն ու առնչութիւնն ալ խառնուելով գործին մէջ, - ան շատերու աչքին եղած է աննման եւ աներեսակ հասարակական գործիչ մը, եւ ոչնչեան շատերու աչքին՝ հասարակ էնթրիկան մը[21], դաւաճան մը, մատնիչ մը, մարմնացեալ սատանայ մը: Մինչ սատանայացնողները շատ սխալած են, բայց չարաչար սխալած են գինք անարգութեան սիւնին գամողները:

Արփիար, Վանեցիկի Մուրատ-Հռափայէլեան վարժարանի աշակերտ եւ Ալիշանի ծեռնասուն[22], որ իրեն ծածկանուն ընտրած էր «Յուշիկք Հայրենեաց Հայոցի «Հայկակը»[23], որ 1876-80 թուականներուն Կ. Պոլսոյ մէջ տիրող ազգային ոգեւորութեան շարժիչ ուժերէն մին ե-

դած է, որ եղած է միմ Արտաշատեան Ընկերութեան[24] (վերջէն բաղկացուցիչ մաս Հայոց Միացեալ Ընկերութեանց[25]), հիմնադիրներէն եւ ամէնէն եռանդուն աշխատաւորներէն, ախոյեան հայ ազգի դատանական հատուածներուն միջեւ աճխտրական սերտ գործակցութեան, ժամանակակից հրապարակագրութեան մէջ ազատական շունչ մը մտցնողներէն առաջինը[26], ճաեւ առաջինը տաճկահայ եւ ռուսահայ մտաւորականութեանց միջեւ յարաբերութեան կապ հաստատողներուն, Դրիգոր Արծրունիի «Մշակ»ին երկար տարիներու աշխատակցութեամբ՝ վերոյիշեալ Հայկակ ծածկանունով[27], Ազգային Ժողովին մէջ պայքարող ճախակողմեանը որ Նուրեան Էֆէնտին[28] ապտակեց[29], պայքարող խմբագիրը Մասիսի, Արեւելքի եւ հիմնադիրը ժողովրդականէր *Հայրենիքին*[30], հեղինակը այդ թերթերուն համով-հոտով «Օրուան Կեանք»երուն [31] եւ «Հողվրտիք»ներուն[32], հեղինակը վերջապէս «Կարմիր Ժամուց»ին[33], *դատաճան* մը, *մատնիչ* մը չէր եւ չէր կրնար ըլլալ:

Իր համբաւաւոր «ծարեցաբննութիւնը» որ իրրեւ իր մատնչութեան փաստ, ժամանակով հրատարակուեցաւ «Դրօշակի»ի մէջ[34], կեղծ տոքիւման մըն էր[35], զոր մատնիչ Քիւրքիւճիէֆ[36] ինք դարբնած ու ծախած էր դաշնակցութեան, որուն ինք հատուցով կամ չհատուցով այդ տօքիւմանին հարազատութեանը, զայն գործածեցին իրրեւ զէնք Արփիարին դէմ: Քիւրքիւճիէֆ մարդ մըն էր[37] որ իր գնդիս կեանքին պէտք եղած դրամը հայթայթելու համար ամէն միջոց մերելի կը գտնէր: Սկսաւ իրրեւ յեղափոխական, Կ. Պոլսէն փախաւ իրրեւ յեղափոխական, Պուլկարիոյ մէջ ազատաշունչ թերթ[38] եւ գրքոյկներ[39] հրատարակեց առեն մը, մասնակցեցաւ առաջին անգամ Տիւնամիթներու պատրաստութեան գործին[40] զոր յետոյ ինք մատնեց եւ յետոյ իրրեւ թուրք կառավարութեան լրտես Կ. Պոլիս նկատ ու շատ անձեր հայեր մատնեց. բայց իր արծաթասիրութեամբը ամէն բան ընելու ընդունակ ըլլալով՝ միեւնոյն ժամանակ Անգլիական) դեսպանատան կը հաղորդէր թուրք կառավարութեան գաղտնիքները եւ, ո՛վ հեգնութիւն, դրամի սիրոն, շատ մը հայ բանտարկեալներ ալ ազատած է: Այս այնչափ ճիշտ է, որ երբ Քիւրքիւճիէֆ սպանուեցաւ ահաբեկիչի գնդակով[41], Անգլիական) դեսպանը յայտնած էր թէ Հայերը ի՞նչպէս իրենց դատին բարեկամ եղող անձեր մահապատիժի կ՚ենթարկեն: Դեսպանին այս խօսքը

պատմած էր Չայեան Իվիաս էֆէնտիին[42] Խարբախեանեան Ներսէս եպիսկոպոսին[43] եւ այս վերջինը պատմեց ինծի:

Արփիարի «մատնչութեան» այս կնոջ տօքիմանը Թիւրիմճիէֆէն ստացողները եւ անոր դէմ օգտագործողները եղան... [Յովհաննէս] Իւստֆեան[44], Մելքոն Կիւրճեան (Հրանդ)[45] եւ Աւետիք Լալայեանց[46]: Ասոնք Արփիարի հետ գաղտնի յարաբերութիւններ ունեցած էին[47] 1894 թուականին եւ խիստ հատաւօրէն Արփիար եւ [Յովհաննէս] Շահնազար[48] որոշ աստիճան համակրութիւն ցոյց տուած ըլլային դէպի դաշնակցութիւնը՝ որուն Կ. Պոլսոյ հիմնադիրներն էին յիշեալները: Բայց երբ օր մը դաշնակցականները սպառնագրով[49] պահանջեցին Պոլսոյ հայ թերթերէն չհրատարակել թուրք կառավարութեան պաշտօնական յայտարարութիւնները («Շնորհիւ Վեհ. Սուլթանին՝ Կարնոյ, Վանայ... եւն., վիպաէրներուն մէջ անդորրութիւնը կատարեալ է - *առաջիւ պէտքէմայ տզյո*»), - պահանջ մը որուն համակերպութիւնը պիտի յանգէր բոլոր հայ թերթերուն դադարումին, - Արփիար առաջինը եղաւ այդ անգործադրելի պահանջին դէմ ծառացող եւ անվրդով հրատարակեց պետական պաշտօնական յայտարարութիւնը, մինչ ուրիշ հայ թերթեր՝ սպառնալիքին սարսափէն շուարած՝ ոմանք մեքենայի խանգարում, ոմանք տօն պատրուակելով օր մը չհրատարակեցին իրենց թերթերը, եւ յաջորդ օրը բաջալերուած Արփիարի բոնած դիրքէն՝ հետեւեցան անոր օրինակին[50]: Դաշնակցութեան պատգամը արհամարհուած էր. այն օրէն վճռուած էր Արփիարի դէմ տեսորը մեազեալը՝ «հարցաքննութեան պատճէն»[51] եւ այդ տեսորին իբրեւ պատճառանք ծառայելու համար էր որ պատրաստուեցաւ[52]:

Արփիարի դէմ իբրեւ գէնք գործածուող երկրորդ տօքիմանը իր համբաւաւոր *մեղայագիրն* է: Այս մեղայագիրը ի հարկէ չի կրնար պաշտպանուիլ, բայց երկու մեղմացուցիչ պարագաներ կան. առաջինը այն է որ, մինչ բոլոր միւս բանտարկեալները իրմէ առաջ ազատ արձակուեցան, իրեն՝ բանտէն արձակուելուն իբր պայման *պատասխանատուած* էր այդպիսի գրութիւն մը որ, սակայն ուրիշին վճռաւ մը չէր տար, այլ ինքզինք միայն կը ստորագնէր: Երկրորդ մեղմացուցիչ պարագան կը հասկցնան անոնք միայն որոնք Արփիարի հոգեբանութիւնը ծանէն ճանչցած են: Արփիար երբ ինքզինք պարտաւորուած զգար իր համոզումին հակառակ բան մը գրելու, այդ գրութեան մէջ կը դնէր այնպիսի ծայրայեղ չափազանցութիւններ եւ այնպիսի բացառիկ շեշտ մը՝ որոնք անոր կու տային գրեթէ զաւեշտական կամ երգիծարանական բնոյթ: Արփիար կը կարծէր այդ կերպով զինք բռնադատողին քթին խնդալ:

Արփիար այնքան վստահ էր ազգին մէջ իր կատարած դերին վրայ, որ կարեւորութիւն չէր տար գրածներուն եւ կը հաւատար որ ուրիշներն ալ կարեւորութիւն պիտի չընծայէին անոնց:

Օրինակով մը բացատրեմ:

Ամէն տարի գահակալութեան տարեդարձին[33], մայրաքաղաքի ամէն ազգի թերթերը ստիպուած էին գովասանքներ հիւսել Սուլթանին: Արփիարի գովասանքները իրենց չափազանցութեամբը ամէնքը կը գերազանցէին եւ ամէնուն խնդուք կը պատճառէին, եւ ինք էր առաջին խնդացողը: Օրինակ «Ճնորհիւ վեհ. Սուլթանին, չոգեկառքերը երկրին մէկ ծայրէն միսը կը սուրան, երկրին մէջ ճարտարարուեստը, արուեստները, վաճառականութիւնը աննախընթաց կերպով կը ծաղկին, հանրային կրթութիւնը այն աստիճան զարգացած է որ անգրագէտ մարդ չէ մնացած լայնածաւալ կայսրութեան մէջ. բոլոր ժողովուրդները անսահմանօրէն երջանիկ՝ միաբերան կ'աղօթեն վեհ. Սուլթանին արեւշատութեանը համար եւ կը մաղթեն որ ան *յաւիտեանս «անմահ մնայ»* իր կայսերական գահուն վրայ»:

Իր այսպիսի գրութիւնները կը նմանէին, օրինակի համար Սարգիս Միճաելեանի[34]: Դրօշակի մէջ՝ Սուլթանին գահակալութեան տարեդարձի մը առթիւ[35] հրատարակած երգիծաբանական այն հրաշալի գովերգութեան որ կը վերջանար «պիւլէր եաշա՛, ծօ Համիտ»[36], բացագանչութեամբ:

Իր թերեւստութեան մէկ քանի արտայայտութիւններուն եւ իրրեւ յեղափոխական իր մէկ քանի սխալներուն համար՝ զորօնք քառեց իր եղերական մահուամբը, իր գործը անտեսելը եւ իր յիշատակը աղաւաղելը մեծագոյն ապերախտութիւն մը պիտի ըլլար ազգին կողմէ:

Գանք իր նկարագրին ժխտական կողմերուն:

Արփիար անհանդարտ միտք մըն էր, երեւակայութիւնը սուր էր եւ մտածումները արագ: Կենդանի չարժանկար մըն էր իր միտքը...տակաւին չարժանկարը չհնարուած: Ինչ որ ուրիշները մեծ ճիգով եւ երկար ժամանակի մէջ կրնային յղանալ ու ծրագրել, ինք վայրկենապէս կը յղանար ու կը ճեւակերպէր: Ամէն առաւօտ, ազգային գործունէութեան կատարեալապէս մշակուած ու մանրամասնուած ծրագրով կ'արթննար, ծրագիր որուն գործադրութիւնը տարիներու աշխատանք կը պահանջէր, ու ինք զայն կը պարտադրէր հաւատարմի մը ջերմեռանդութեամբ, հոգ չէ՛ թէ այդ ծրագիրը իր երէկ յղացած նոյնքան մշակուած ու խնամուած մէկ ծրագրին տրամագծապէս հակառակը ըլլար, թէ մին ծայրայեղ պահպանողական ըլլար եւ միսն ծայրայեղ յեղափոխական: Հակասութիւնը երբ մատնանշէիր, ի՛նքն ալ կը խնդար,

բայց վերջին ծրագիրը իրրեւ յաւագոյն կը ջատագովէր, մինչեւ այն օրը որ նորագոյն ծրագիր մը յաջորդէր անոր: Ան սկզբունք չունէր, եւ երբ այս նկատմամբ զինք կը մեղադրէին, «իմ սկզբունքս սկզբունք չունենալն է», կ'ըսէր: Արփիարի մեծագոյն թերութիւնը իր յեղեղուկ նկարագրին մէջ կը կայանար: Իր հետ ամէնօրեայ չփման մէջ եղած ժամանակս, եղած են օրեր ալ որ, իր այլանդակ խօսքերէն դառնալով՝ իր հայրենասիրութեան վրայ, իր զգայուն սիրտ ունենալուն վրայ խակ կասկածած եմ. եւ անոնց յաջորդ օրը մանուկին յանձնած է համակ հայրենասիրութիւն բուրող այնպիսի սրտայոյզ եւ անվարանելիօրէն սրտառուխ «հաղվադիք» մը կամ «Օրհասի կեանք» մը, որ հիացած եւ ափ ի բերան մնացած եմ: Արփիարի այս յարատեւուխս նկարագիրը լաւ ուսումնասիրած էր Շահնազար, որ ինք ըլլալով հաստատ նկարագրի եւ սկզբունքի տէր անձ մը, Արփիարի յօրաւածները չէր հրատարակեր «Հայրենիքի» մէջ առանց զանոնք հակակշռէ անցընելու, եւ շատ անգամ բուռն վիճաբանութիւններ կ'ունենար անոր հետ: Այս հակակշռին շնորհիւ էր որ Հայրենիք ունեցաւ միատեսակ ուղղութիւն մը եւ Արփիարի յօդուածները այնքան հաճոյքով կը կարդացուէին:

Արփիար սաստիկ վախկոտ մարդ էր՝ վտանգի հանդիպ. բայց իր գրութիւններուն մէջ՝ վերջին աստիճան համարձակ եւ յախուռն էր, առանց բնաւ վախնալու իր հակառակորդներէն. իր գաղափարներուն (թէեւ յարափոփոխ) քաջութիւնը ունէր: Ան պայքարը կը սիրէր, հակառակորդները որքան ալ բուռն յարձակումներ ընէին իր անձին դէմ, անոր հոգը չէր. կարծես ճոյնիսկ կ'ախորժէր ուրիշներու բննադատութեանց նշանակ դառնալէն: Ան կը տառապէր երբ ուրիշները կը դադրէին իր վրայ խօսելէ. այն առեն մէջտեղ քար մը, կոռախնձոր մը կը նետէր ու պատճառ կ'ըլլար որ հակառակորդները նորէն իրենց ջերմեռանդ իրեն դէմ:

Ան սակաւապէտ էր եւ ժուժկալ, արթնցութենէ ու կնասիրութենէ հեռու, բայց միանգամայն կիներու հանդէպ խիստ քաղաքավար ու մեծարող: Սկիզբներն, Պօլսոյ մէջ, լաւ կը հագուէր, միշտ սեւ զգեստ կը կրէր, բայց երթալով կոկիկութիւնը կորսնցուց, վերջին ժամանակները փճքի ըլլալու աստիճան[37]: Այս արտակեդրոն մարդը շատ անգամ խնճորով ու հացով կ'անցընէր իր օրը, ընդհանրապէս ուժան végétarien[38] ճաշարանները կերակուր կ'ուտէր, բայց օր մըն ալ յանկարծ խելքին կը փչէր ու կ'երթար ամենէն փառաւոր ազնուապետական ճաշարան մը կը ճաշէր, եւ որովհետեւ հակառակորդներ շատ ունէր, 'թաւական էր որ մէկ անգամ, զինք այդպիսի ճաշարան մը տեսած ըլլային, իսկոյն կը տարածայնուէր որ Արփիար չռայլ կեանք մը կ'ան-

ցրնէ...: Ան դրամն ալ չէր սիրեր. աղքատ ապրեցաւ ու աղքատ ալ մեռաւ:

Ան կասկածոտ ու ոխակալ էր. իր հակառակորդները հալածելու համար նոյնիսկ պատմութիւնը կը խեղաթիւրէր: «Կ. Պոլսոյ պահպանողական վարչութիւնները» յօդուածաշարքին[59] մէջ, իր հակառակորդ Նուրհան Յովհաննէս Էֆէնտիին[60] (Պէշիկթաշի գերեզմանատան խնդրին առթիւ[61]) տուած է խորամանկութեան այնպիսի չարաչուք դեր մը՝ որուն Մաքիավէլլին[62] անգամ պիտի նախանձէր. դեռ ուրիշ դիտաւորեալ աճճչտութիւններ ու չափազանցութիւններ ըներ եմ իր գրութիւններուն մէջ: Գումգափուի դէպքին[63] առթիւ [Խորէն] Աչըգեան Պատրիարքի[64] հետ յանուն Հնչակեան կուսակցութեան իր իրր թէ ունեցած տեսակցութիւնները, զորոնք կը նկարագրէ «Նոր Կեանքի մէջ[65], բոլորովին մտացածին են, բայց այնքան ճարտարօրէն յարմարցուած, որ իրրեւ ստոյգ պատմութիւն[66] կը կարդացուին...:

Այսպիսի բարդ խառնուածքով մարդ մը կրնար, եթէ կ'ուզէք, անհատ, անպատասխանատու յեղափոխական մը ըլլալ, - եւ իրօք յեղափոխական եւ ամէն կանոնի ու ստանդարտի դէմ ըմբոստ միտք մըն էր, - բայց պէտք չէր որ ըլլար յեղափոխական կուսակցութեան մը անդամ, եւ ոչ երբե՛ք յեղափոխական դնկավար մը: 1880 թուականէն ի վեր զինք մօտէն ճանչցած ըլլալով կանուխէն այս գաղափարը կազմած էի իր մասին, մեր Կ. Պոլսոյ առաջին յեղափոխական կազմակերպութիւնը[67] իրեն հետ կը յարաբերէր, կը լսէր իր խորհուրդները եւ թելադրութիւնները, բայց զինք կը նկատէր միայն համակիր մը:

Մենք իր մասին նոյն գաղափարը յայտնած էինք առաջին անգամ մեզի հետ բանակցութեան [մէջ] մտնող կովկասահայ յեղափոխականներուն ալ, որոնք արդէն՝ իրրեւ Մշակի ծանօթ բոքակից, մեզմէ առաջ անոր հետ տեսնուած եւ միեւնոյն գաղափարը կազմած էին իր մասին: 1894ին, երբ բանտէն կ'ազատուէի[68], զարմանքով Կ. Պոլսոյ Հնչակեան վարչութեան անդամ գտայ զինքը[69]: Կուսակցութեան մը մէջ մտածը եւ պատասխանատու դեր մը ստանձնեցը մեծագոյն դժբախտութիւնը եղաւ այս մարդուն, որ իրրեւ ինքնատիպ հրապարակագիր, սրամիտ քննիկագիր, վիպագիր եւ երգիծաբան[70] դեռ շատ բեղմնաւոր կեանք մը պիտի կրնար ունենալ եւ որ ի վերջոյ զոհը եղաւ ան՛ոճ որոնք յեղափոխական գործին մէջ [իր] մուտքը դիւրացնելու սխալը գործած էին[71]:

Լոնտոնի մէջ, երբ տակաւին ոեւէ գժտութեան պատճառ չունէինք[72] իրարու հետ, եւ քանիցս իրեն բարեկամական խորհուրդ տուի քաշուիլ կուսակցական կեանքէ ու նուիրուիլ անկախ հրապարակագրական կեանքի, «Ձեռ գրութիւններդ այնքան ինքնատիպ եւ հետաքրքրական են որ անոնք միշտ պիտի կարդացուին թէ՛ քու բարեկամներուդ եւ թէ հակառակորդներուդ կողմէ» ըսի: Ասա՛ղ, իմ խորհուրդներս ուշադրեցի ու քշնամութեան վերագրեց եւ միայն այն ատեն զանոնք վերյիշեց եւ ինծի իրաւունք տուաւ (վկայ իմ բարեկամ Ճարտարապետ Քիւրքեանը[73]), երբ արդէն շատ ուշ էր, եւ իր երբեմնի կարծեցեալ բարեկամները եւ անարժան պաշտպանեալները իր դահիճները պիտի ըլլային:

Արփիար իր ամբողջ կեանքին մէջ, իր գրիչով ու գործով՝ - իր գիտցած ու հասկցած կերպով - ազգին ծառայեէ զատ ուրիշ հաճոյք եւ ուրիշ գրաւում չունեցաւ, ու մեռաւ անողոք քննադատի եւ պայքարող հրապարակագրի պատճէշին վրայ: Ան երբ մեծ սխալող մը, բայց միեւնոյն ժամանակ մարդ մը: Կռվկատասխ - բացատրութիւնները յարգելով - բացարձակապաշտ եւ դաժան սկզբունքներու անշարժական ծայրին կառչած քառակուսի գլուխ մտաւորականները երբեք պիտի չկրնային հասկրնալ Արփիարի ներքին մարդը եւ անոր բուն ոգին, երբ անիկա՝ իր առեղծուածային խառնուածքով ու թեքնուածիո ճկարագրով դժուարահասկնալի մարդ մըն էր, նոյն իսկ տանկահաս հասնեմատօրէն առեղի ճկում եւ չարմարող մտաւորականութենէն շատերու համար:

Միհրան Տամատեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 *Արփիարեանի մասին ուսումնասիրութիւնեան մը համար՝ քննադատ Արտաշէս Յարութիւնեանի գրի առած հոլիկով, Հասահատեցէն 1913ի տուեններէն, տե՛ս՝ Ազգասէր Գրականութեան եւ Արուեստի, թիւ. 18, փարիզ, 1935, էջ 44.*

2 *Հասահատ Գահիրէ, Ա. տարի, 1913 Յունուար 1/14, թիւ. 1, էջ 1, 3.*

3 *Մեսրոպ, 1922, թիւ. 3992.*

4 *Ծերուանդ Օտեան, Տասնհինգ Տարի Գործի Դաշտ, 1895-1909, Վենետիկ Մխիթարեան, 4. Պոլիս, 1914, էջ 5-6.*
Նման մեղադրանք՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ)ի հաղթական հասահատեան եր նկատած, գրած էին. ՀՅԴի կամեսագրութիւնը եր Հասատած. «Մահատարածը ձգ հարերի վերաբերմամբ ընդունում է միմիայն անպայման ապացուցուած դատապարտութեան դէպքում: Վարչական կեանքում» (Դրօշակ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Մրցան, No 3, Փետրուար [1922], էջ 12). Իսկ քէ ինչ վիճք կար Արփիարի

գէմ Հոմո քաղքի մէջ՝ Օսման կը մեկնարանէ- «Կարելի է ըսել որ մեկէ առելի պատճառներ կային (Արփիարեանի դէմ այս կատաղի հարձակումին)։ Նախ Արփիարեան այդ թուականին բազմապէկ գիրք մը կը վայելէր յեղափոխական շարժումին գլուխը։ Նեանը չգտնուած ժողովրդական բերդի մը ՀԱՅՐԵՆԻՔԻ խմբագրապետն էր, հնչակեան Պոլսոյ կեդրոնին անդամ էր, ՄԵԱԿի եւ ՀՆՕՄԿի թղթակիցն էր. երկու թերթեր որոնք մեծ ազդեցութիւն մնէին յեղափոխական շրջանակներու մէջ։

ՀԱՅՐԵՆԻՔԻ հեղինակութիւնը շատ մեծ էր ժանապանդ Պոլսոյ մէջ։ Տարիէ մը ի վեր գրեթէ ան էր ազգային քաղաքականութիւնը վարողը։

ՀԱՅՐԵՆԻՔԻ ու անոր խմբագրապետ Արփիարեանի այս առտնութիւնն ու ենդինակութիւնը բնականաբար արգելք մըն էին Դաշնակցութեան, որ չէր կրնար իր դիրքը զօրացնել այսպիսի հակառակորդներու հանդէպ։ Նոյն թուականներուն Պոլսոյ դաշնակցական միջավայրը կամ պետն էր [Ռովհաննես] Խանէեան եւ ինքն էր որ սկսաւ ՀԱՅՐԵՆԻՔԻ ու Արփիարեանի դէմ պայքարը։ Եւ սակայն Խանէեան մտերիմ բարեկամն ու խորհրդականին էր Արփիարեանի՝ միմեան որոշ բուական մը կամ առելի միջոց միեւնոյն առեն ՀԱՅՐԵՆԻՔԻ հանդէպ։

1895 Յունիսի Պապը Ալիի ցոյցէն ետքն էր որ Դաշնակցութեան հակառակութիւնը սկսաւ Արփիարեանի դէմ։ Այդ ցոյցը, ինչպէս յայտնի է, միմիայն հնչակեան կուսակցութիւնը կազմակերպած էր, իբր թէ կառավարութեան վրայ ճնշելու եւ Հայաստանի բարենորոգմանց ծրագրին գործադրութիւնը փութացնելու համար եւ ոչեր արդիւնք չունեցաւ այլ երէ ընդհանուր ջարդերուն պատրուակ ըլլալ։ Այդ ցոյցին յայտերեց ժողովուրդին նկեղեցիներու մէջ հաւաքուիլը, խաչերու փակումը, եւն. որոնց ամէնքն ալ հնչակեան վարիչներու խորհուրդովն ու գործակցութեամբը եղան։

երբ ոեպուպլիկան միջնորդութեամբ ժողովուրդը թողուց նկեղեցիները, երբ խաչերը վերաբացուեցան եւ երբ առնրեայք հանդարտութիւն տիրեց, այն առեն Դաշնակցական բռմիրէն ազատնագրերով պահանջեց որ հայերէն թերթերը ինքնաբերաբար գադրին՝ կառավարութեան դէմ ցոյց մը ըրած ըլլալու համար։

Այդպիսի ցոյց մը թէ անիմաստ ու ապարդիւն պիտի ըլլար եւ թէ՝ միանգամայն այնպիսի տապալապարիչ ժամանակ մը պիտի վտանգէր բերդերու արտօնատէրերն ու խմբագիրները, որոնք կառավարութեան կողմէ երբեմն յայտնի յեղափոխականներ ու խռովարարներ պիտի նկատուէին։

ՀԱՅՐԵՆԻՔ, ԱՐԵՒԵԼՔ եւ ՃԵՐԻՏԷԻ ՇԱՐԺԻՔ հաւասարապէս տապալած կարծիք կնիքով նամակները։

Արեւելք եւ Ճերիտէ իրար անցան եւ Չարեհ Նոտարեան, Բիւզանդ Քէլեան ու Տիգրան Միլէէնեան փութացին մեզի մօտ հասկնալու համար թէ մենք ինչ պիտի ընէինք, օրակարգի իրենք ալ մեր օրինակին հետեւէին։

Բնականաբար ամէնքն ալ այդպիսի անխորհուրդ ցոյցի մը հակառակ էին եւ կը զգային թէ ինչ փորձանքներ կրնար տեղի ունենալ իրենց գլխին, բայց միա կողմէ կարծիք կնիքը կար որ այդ թուականներուն մեզական ազդեցութիւն մը կ'ըներ ամենուն վրայ։

Յունիսեան Շահնազար եւ Արփիար Արփիարեան բազառիկ կերպով յայտարարեցին թէ այս սպառնալիքին առջեւ տեղի չպիտի տային եւ «Հայրենիքի հրատարա-

կոպիտը պիտի չպատճառէին եւ խորհուրդ տուին միաձգուն իրենց օրինակին հետեւելու (Առեան, էջ 7, 18, 14, 15)։

*Իսկ քիչ մ'ետքը կը գնահատէր Հ.Ը.Դ.Ն Արփիարեանի ընկերացը՝ իր յայտ կոչ գալ Դպրոցի խմբագրութեան գրկուած Հ. Վռամեանի 5/17 Քառատար, 5/18 Փետրուար եւ 15/22 Փետրուար թուակիր նամակներուն մէջ. «Գալով Արփիարի խնդրի, օրը մէկ նոր բան երեսս կ'ելլայ։ Ամենայ օր այցելութեան գացած էի իրեն, խօսքի մէջ ըսաւ թէ առողջանալուն պէս պիտի գանայ ազատութիւնները ծաղրել ազգի մէջէն. ակնարկութիւններէ անպակաս էին Մկրտչի եւ Հրանտի նկատմամբ» (Տե՛ս՝ Գիտուն Հայ Միջնադարեան Բանասիրութեան, Հատոր Ա., Քաւերով Հայրենիքը ուսումնասիր, Կրատարութիւն Հ. Ց. Դ. Ալիշանի Գիրք. Գոմիտէի, Պոլիս, 1934, էջ 208)։ ...«Այս վայրկեանին իմացայ թէ Հ[այրենիք] իր վերջին թուին մէջ Արփիարի ապաշնորհաց փորձին մասին կատաղի յօդուած մը տպած է. տակաւին չեմ կարդացած, տակաւին կը զարմանամ։ Սակէ չարաչար մը առաջ Արփիարը յայտարարած էր թէ ինքը հանգուցած է որ ատենկաճուրդին մէջ կատարել տուած այդ փորձը, քանի որ միւնչեն հիմա ոչ մէկ խոզարգութիւն, ոչ մէկ ձերբակալութիւն այդ փորձին առթիւ եղած է, ուստի հաշնակցականները չէին։ Մեր կարծիքը կը հաստրդնենք ձեր որ չպզտիկը կարդալ։ Մենք նշմարեցինք թէ Արփիարին պարզապէս սկսած է վախնալ մեր բոռ եւ խանդ դիտելով, ժողովուրդին իր դէմ տածած անվստահութիւնը տեսնելով, եւ գրգռել ուզած չէ մեզ, ատոր եւ այդ յօդը տարածած է. բայց Հ[այրենիք] իր այդ չիմար ըմբռնողով գործը ապրեց. կը կարծեմ ուրիշ տեսակ պէտք է պատասխանել անոր, խօսքով եւ գործով։ Ինչ որ է՝ կը կարդանք եւ տպաս (Նաւթ, էջ 272)։ ...«Արփիար երկու օր առաջ Եւրոպա գնաց, կամ, ինչպէս կ'ըսեն իր ծարդիկ, փախաւ. բայ գտած փախչելու պէտք ունցող մը։ Գիշեր զոզաղիպութիւն Հ[այրենիք]ի վերջին հրատարակութեան հետ, compagnie սկսելու են։ Ձեր կարծիքը չհաղորդեցիք դեռ. ծառիր էր բան մը գրելու. ձեր կարծիքն է արհամարհել ու անցնիլ, մեր չարժադիրները չեն կրնար փոխուիլ այդ խնդրակնիքով ազատ ձեռնոցնիրէն։ Արդէն պիշը բանի ծուռ գիծ-ծռիի վիճակին մէջ են. Ջէյթուն խայտառակութիւն ըր երբ իրենց հանգոյ (Նաւթ, էջ 282)։ եւ Հասկ՝ կ'նգրախոցուի, քէ՝ ա՛ւրօշակի յանուն յոյսինը չարագուշակ թռցաւ, եւ դասական ըլալիքը գուշակելով, 1896 փետրուար 8/20ին, կծիկը դրաւ Պօլսեն, ատենկաճուրդան աչակցութեանը» (Մատենադարան Դպրոցին, 15 Դեկտեմբեր 1960, խմբագրութեան հանգիստ թիւերը, էջ 38)։

Ատարջ գալ հոգ, նոյն պատահարը՝ իր յարակից պատճառներով, Ծառեան կը նկրկատագրէ օրագիր գրչէ «Արփիարեան բայի Հայրենիքէն, կանոնաւորապէս կ'աչխատակցէր նաեւ ՄՇԱԿԻՆ ու ՀԵՆՉԱԿԻՆ եւ այս կերպով բարոյական մեծ ազդեցութիւն մը ձեռք ձգած էր եւ իրեն դէմ գրգռած էր շատ մը հանգամանքներ։ Պատը Ալիի ցոյցէն եղաւ, որ հետեւանք ցոյց մըն էր, այդ հանգամանքները անդի առաջնեցաւ։ Ձեռքի տակէ սկսած վարկաբեկել թէ՝ Արփիարենանը եւ թէ՝ Հայրենիքը զոր կը ջանային ծերկայացնել իբրեւ հետեւանքով ճանապարհ Նազլի փաշայի պաշտպանութիւնը վայելող բերք մը։

Պղտորի պէս բան մըն ալ փորձնիմ Հայրենիքի դէմ որ չյաջողեցաւ։

Բերնէ բերան լուր կը տարածէին որ ամէն չարաթ Շահնազար, Արփիար եւ [Լեւոն] Բաշտեանեան Նազլին բնակարանը կը ճաշեն, բոլորն ալ անկոր գրագրատրութիւններ։ Բոլոր պատը գոյը կու տային տեսնելու որ Արփիարի դէմ հակառակութիւնը երթալով կը ծաւալնար։ Անտրոպոգիր նամակներ, խուլ սպառնալիքներ պակաս չէին։ Նոյնիսկ տէրօրի խոսքեր ճէյտեղ եղած։

Արփիար այնպես կը հաստատ թէ դայլնակցականնները, իր գլխատոր, կամ առնչ ծիչտը, միակ բլնաճինները պիտի չհամաձայնէին գինքը, տեղւոյն ներթափել եւ ասոր հաճար իր անձնական պաշտպանութեան բնաւ հոգ չէր տաներ:

Այդ միջոցին ինք իր եղբօր Տիգրանին եւ ծերունի ծօրը հետ կը բնակէր Տիկին Սանճարեանի տունը, Ս. Յակոբի Հիւանդանոցին պատկանող տան մը մէջ:

Իրիկուն մը, ուշ ատեն, Քաղքէնի մարզպետին առջեւէն անցած ատեն, յանկարծ մէկը կը ցցուի իրեն դէմ ու քանի մը դարձյնի հարուած տալէ ետքը, խոյս կու տայ:

Արփիար կը զգայ թէ վիրաւորուած է, բայց ոչի հետաքնրքով կը փորձայ տուն ու գանգակը կը զարնէ:

Հազիւ թէ դուռը բացուած, զգայագիրկ կ'իյնայ գետին: Անմիջապէս բժիշկները կը կանչուին որոնք կը հաստատեն թէ վէրքերը թէեւ ծանր, բայց մահացու չեն:

Հետեւեալ օր Շահնազար այս ճակատագրը կը պատմէ Հայրենիքի մէջ այնպիսի մեկնութիւններով որոնք հաճոյ չեն թուիր կաթողիկոսութեան եւ բերդը կը խափանուի անպայման կերպով:

Արփիարի տպաքինումը կը տեւէ ամիսէն աւելի, որու միջոցին Լեւոն Պարապետ կը հեռանայ Պոլսէն նախ Սեբաստիա եւ ամէն երթալու համար: Իսկ Արփիար ուրթի եղելէ բիչ յետոյ, ծանկալար կը հեռանայ Պոլսէն եւ կ'երթայ Լոնտոն (*Ամատ, «Գրական Միչտատներ», 1894-1914», Պոստոն, 1920, Գ. տպագր., էջ 10-20, էջ 803-804*).

5 *Մանկան Եարկպազ, Հրդեհոտ Հրդեհոտման, տպագրած Ալմափրէս, Պէյրութ, 1987, էջ 78:*

6 *Ալիքսան/Վահէ Ալպուհան - 1874-1935:*

7 *«Ժամանակէ մը ի վեր՝ Վերակազմեալ Հնչակեան դրօշին տակ սպրդած կարգ մը ինքնակոչ եւ իրենք զիրենք Հնչակեան բանակին առաջնորդ ցոյց տուող ու այս ա-ռթիւով հրամաններ, սպառնագիրներ խրկող եւ դաւադրութիւններ ու ոճրագործութիւններ տպչրող ներելուկ խմբակին ցնդացքն-ի՛ խորհրդ. Փարիզէն Հնչակեան-բէն՝ Ալար, «ասնդրադառնալով այդ խումբին ապզամնաս ցնդացքին ու արդէն կատարուած չարիքներէն ճախապատրաստելով դնս կատարութիւնները, «Ալաց Նահապետ մը մէյ մէյ կը յաչտէ. «Միթէ Պ. Արփիար Արփիարեանը սպանելու համար եգիպտոսէն Վենետիկ տեռոռներ խրկողները ասոնք չեղա՞ն: Ինչու՞, ի՞նչ կ'ոգէին այս երեսուն տարուան ապզային գործիչէն:*

Որովհետեւ՝ յիշեալ ամէնք թէ՛ 1890ին եւ թէ՛ 1898ին Հնչակեան Ընդհ. Ժողովներէն Կեդրոնի անդամ ընտրուած ըլլալով, ինքնաբերաբար հրամայական տուած ու պահանջած էր որ Կեդրոնին համաթատուութիւնը Պատգամաւորական Ընդհ. Ժողովին ներկայացուի ըստ օրինի: Այս արդար եւ օրինաւոր պահանջումին վրայ գինքը սպանելու ոգեցին, որպէսզի՝ անոր հրապարակ նետած տեղեկութեան ամբաստանութիւնը, Կոստանդնուպոլսոյ Ընդհանուր Ժողովին մէջ չի քննուի. որովհետեւ շատ մը ուրիչ բաներ ալ երեսան պիտի գային, որով այդ ծորտուտ խումբը Կոստանդնուպոլսոյ կեդրն պիտի հալածուէր ու պիտի չխնչպխուէր» (Ալար, «Ազատագրական-ներ. Ասպ Նահապ, Հայոց Հնչակեան Ընդհ. Ընհատրակներուն, Փարիզ 10 Մայիս 1908, էջ 3, 10):

8 *Պէտք է ըլլայ 1903:*

9 Հ. Մկրտիչ վրդ. Պասուրեան, «Երջիկոյ Երջիկոյենէն Դէպ Վինեպիկ Մէջ Ճառելն Մաճախօրհնէքը», Արժ., 15 Մարտ 1974, էջ 2։

10 Նոյն։

11 Նոյն։

12 Երջիկոյ գոհ գնաց հոգեբարոյական գաւակցութեան մը (Երջուհան եւ Հիկ., որոնք վիրակապիակ Հէյմէնան գաւակցութեան անուն խրոցիկներով՝ յանգոյցներին հայ թզափոխութիւնի «1908, Յորինքշաբթի, Փետրուար 12ի գիշերուան ժամը 9ի առեն-ցնող, Գահիրէի ազգուական մէկ բարձր անկիւնը՝ Շարա էլ Մահախ, ուր կը ցնակէր հայ տէրտիչը, երբ դանդաղաքայլ կը բարէր դէպի իր բնակարանը, վայրագօրէն կը սպաննուի կոմակէն՝ ատրճանակի երեք հարուածով..., ծանր վայրկեանական կ'ըլլայ:

Ոճրագործը՝ բնիկ Տիարպեքիրցի Պետրոս Հնաշենան փախած սպառում կը ձերբակալուի խաչիրի մը եւ դանդաղաբի մը կողմէ, ծեղակիցները՝ որոնք կը հսկէին ոճրագործութեան, ծանր ծակ կը փախչին իսկ բուն թեւադրիչները՝ օձիքնին ձեռք չեն տար եւ մէկ անկիւն կ'անհետանան:

Եպիսկոպական կառավարութիւնը ճանրակրկիտ քննութեան կը ձեռնարկէ եւ ծեղակիցները յոչորէն կը հետապնդէ, սակայն՝ միայն Հնաշենան կ'ենթարկուի օրէնքին խստութեան եւ կը դատապարտուի ճահառան ...:

Հինգշաբթի առաւոտ կանուխէն, աղէտաւոր լուրը ամբողջ Գահիրէի մէջ տարածուած է կայծակի արագութեամբ: «Լուսաբերս» օրուն խմբագրապետն էր որթացեալ Արքիարեան, զգալացոնք յանելուած ըլլալով կը հաճէ իրենցան դէմ, ոճիրը նկարագրելով եւ զոհին կենսագրականը ներկայացնելով, իր պատկերին հետ (*Մուշեղեան Ազգասիրաց Երջիկոյ Երջիկոյենէն. Մահագրականին Հայերէն Մամլիս. Գահիրէ, 18 Յունիս 1911, Վիճակագրական Տեղեկութիւն Եւ Ազգաբնակչութեան Կը Նայիրէ Հնաշենական Վիճակով Մուշեղեանի Բանեմեայնաւորեալ, տպագր. Յայտնի Ն. Պէրգէրեան, Գահիրէ, էջ 11, 19, 23*)։

Ոճրագործը՝ Հնաշենան միչտ խանգաղած է իր ինքնութիւնը պարտիկ, սակայն՝ գրաւորական իր յանանխոյնէն առուգիրով, ամերիկեցիներ իր հաշիւներին կրցած են հաստատել, քէ ան Ամերիկի Միացեալ Նահանգներէն է, Տիգրանակերտի Ալի Փաշայր գիւղէն, Ազգիւնորդի ծնողքի որդին, այդ գիւղին 27-28 տարեկան։

13 *Մուշեղեան, էջ 23-26։*

Սպանութենէն ետք, Երուանդ Միմաքէլեանցեան փիլիսոփայական տրտում ժամանակով կը գրէ այս մասին. «Այդ կլորիկ, քոնքորիկ, դողդոջում ճարպուկը՝ որ յոթերորդ գիշեր, Իսմայիլիէի ազգուագնեական բաղիս մէկ փողոցին անկիւնը, մութին մէջ դիտապատ իմկաւ, որուն փնտրէ փնտրէ արիւնլուայ մարմինը Գահիրէի մուսուրական հիւանդանոցին ասամբարձ Մարմինացի զինեզմանոցէն ներս մտցուց ուրբաթ օր, ճերմակ լոյսի ու խռնուտ ծիւնաշատ մը. այդ ճարպուկը հսկայ ծրդի էր սակայն:

Հսկայ ծրդի էր, որովհետեւ վերջին երեսուն տարուան հայկական կեանքը՝ կովկասէն մինչեւ Միջերկրական յետին սահմանները, ո. արտասահման, իր ուժովութը չեզոցց, իր ազնուկովը չեզոցց, իր տարտնովը տարտնացուց:

երկար առեց, իր գեղումները պիտի տեսնե, իր աղմուկը գետեզմանին փոխն ալ անպիճ, պիտի լսուի դեռ, եւ կարելի չէ հաշուել այն ժամանակը որ հայոցինը այլ ձեւ պիտի դարձի Արփիար անունի հմայքէն ապրուելու, անով ապրենալ, անով ոգեւորուիլ, անով արհեստալ, անով զարուեստալ, անով ընդվզիլ:

Հանգէպ մեզ էր ան որովհետեւ, բոլոր այն հազուագիւտ էակներուն պէս որոնք ճակատագրականօրէն իրենց ծագումին ծայրագոյն ամբոխները կը չարժեն, օրին մէկը չատուած մը հզաւ երկրպագուներով ամբարտակուած, այնչուաններու, եւ փառաբանութիւններու բանձր խումբի մը տակ ծածանուտ, որիշ օր մը գետնաքարաց, պատուանդանէն խորտակուած կուռք մը ըլլալու համար հայհոյուելու ու անէծքներէ հալածուած, յետոյ յաղթանակով նորէն կանգնելու համար իր խարխափին վրայ, նորէն պաշտուելու, նորէն փոթորկելու, եւ վերջապէս նորէն իյնալու համար ճշմարիտ հանգիստ մը չտեսնելու:

Ոճրախառն հրէշներու արարիչն տխուր ոճրագործը հարկ իսկ չեմ տեսներ ըսել, բեւ ասիկա եղեռն մը ըլլալ, որուն համար ամբողջ ազգ մը մէկ չարժումով ոտքի պիտի ելլար «վրէժ» աղաղակելով, եթէ սակայն մեր ազգը կործանումէ այն վայրէջքին վրայ չգլլար, որ արագագնաց [կը] տանի կ'երթայ հիմա:

Անահիտանման ոճրի մը սահմանումը յոգ ա'լ պատմութիւնը ինք ըրէ, իր տեսած ու աշջինց դատակնիքովը: Անհետացած մեծ ճարտուճ յիշատակին առջեւ ոճիրը ինքնին կը գոհնկատայ իւծի համար, տառնկ անատեակաւ, անմարդկային բանի մը զոհ ալ չեմ ուզեր նկատել այդ եղակաւ դէմքը՝ որուն ծագառակէզ կարօտը պիտի բաշեմ ու միայն իր պարտողները, այլ եւ իր ժառանգաւորներն իսկ, որոնք՝ գուցէ, օր պիտի գայ որ բարեհաւատ ճեռուցինն ծննդոցներնուն պիտի զարնեն անոր արուեստը խանձ ըլլալուն համար...» *(Երուանդ Մրմրեան, «Արփիար Արփիարեան եւ գեղեցիկ նորը», Մեր Հարցերը, [Ա· տարի], 1910, էջ 189-190, 192).*

Արշակ Տոպալեան, «Արփիարեանի տպաւորչական անհրաժեշտութեամբ», կը յորդորէ. «Այդ ոճիրն ալ մեր կազմեց հայ ազատագրական չարժումը անպատուող արարք մը, առանց որեւէ չափով նպաստելու հայ պայքարող ուժերուն զօրացման, ընդհակառակն իբր արդիւնք ունենալով ընդլայնել հակակրութիւնները Վերակազմեալ Հնչակեան։ Կոտակցութեան դէմ եւ խորացնել մեզմէ անհամամարդկութիւնները որ արդէն սկսած էին զանազան պատճառներով այդ կոտակցութեան մէջ։ Ազգասէր վրդովմունքս յայտնեցի Անահիտի յօդուածի մը մէջ, որ եղերական մահով վերջացող այդ կեանքին արժանիքներն ու թերութիւնները առարկայականօրէն ճառնանիչ ընկով հանդերձ, կը պատասպարտէի վատառակաւոր գրագետի մը եւ հանրային գործիչի մը դէմ կատարուած այդ ոճիրը» *(Ա· Տոպալեան, «Կիլիկեան Երազը եւ Ազգասէր Գրագէտները», Մեհեան, նոր շրջան, 1935, Ը· տարի Թիւ 3-4, Մարտ-Մայիս, էջ 32, 44).*

14 «Արփիարեանի Մեղայագիրը [իր] տեսակին մէջ անզուգական պիտի համարուի, ինքն իրեն, իր յարակից պատգամներով եւ հետեւորիւններով ամենատարօրինակ ոճիրի մը հանգամանքն ունի:

Արփիարեան «ժառանգ» գետեղելով իր Մեղայագիրը *Արեւելքի* մէջ [12-24 Յունուար 1891, թիւ 2098)] բերքը հետապնդակ հանել կու տայ, ստատնալով խմբագրութեան *(«Լրատուական Տեղեկագիր», Ժառանգաւոր Դպրոցին, 15 Դեկտեմբեր 1890, էջ 30)*, իսկ «Արեւելքի» խմբագրութիւնն ընդդիմացաւ: Մեղայագիրն իր բերքում գետեղելուն: Այդտեղ փաստ (Ա. Արփիարեան) հասկանալի կերպով ազդարարում է երբ իր պատանեքը չկատարվէ՝ «Արեւելքի» խմբագրութիւնը «ժանրապես կը տուժէ...Բայց այդ բերքի խմբագրութիւնն այդպիսի ամօթից յետոյ հարկ է տեսնում Արփիարեանին

80 *տիպը պարզ պատճառներ, Աբդիւլհամիտի «թամահանգամիից Պատմութեան էջերը պրի առնելով, ներկայացուցած է զգ. Պարոյր Պահպանոգլեան Վարչութիւնները, հետևեալ չորքով.*

«Ա. 1880-1887, Վարչութիւն Նազիմեան էֆէնտիին, Նոր Փեահը, Ա. տարի, թիւ 1, 1 Յունուար 1888, էջ 3-7, «Բ. 1887-1889, Վարչութիւն Մագուտ Միհան Պէյին, թիւ 3, 1 Փետրուար 1888, էջ 39-41, «Գ. 1889-1892, Վարչութիւն Գ. Մահակ Զաքարեանին, թիւ 3, 1 Փետրուար 1888, էջ 41-43 եւ թիւ 5, 1 Մարտ 1888, էջ 68-74, «Դ. Յունիս 15ի Յուլիս 15. Հետեւանքները, թիւ 7, 1 Ապրիլ 1888, էջ 99-105, «Ե. 1892-1901, Վերադարձ Խորէն Ա. էպիսկոպոսի Պատրիարքութեան, թիւ 9, 1 Մայիս 1888, էջ 128-140, «Զ. 1892-1901, Դիվանատուներ. թիւն Ազգին էֆէնտի Ուղեւորութեան, թիւ 10, 15 Մայիս 1888, էջ 148-150, «Է. Դիվանատուներ. թիւն Ազգին էֆէնտի Ուղեւորութեան, թիւ 11, 1 Յունիս 1888, էջ 159-173, «Ը. 1892-1894, Երկրորդ Վարչութիւն Մագուտ Միհան Պէյին, թիւ 12, 15 Յունիս 1888, էջ 185-188, «Թ. Երկրորդ Վարչութիւն Մագուտ Միհան Պէյին, թիւ 13, 1 Յուլիս 1888, էջ 198-203, «Ժ. 1892-1894, Պահպանոգլեան Վարչութիւնը Ջնջուած, թիւ 15, 1 Օգոստոս 1888, էջ 231-234.

Որպէս վերջաբան՝ Աբդիւլհամիտի յաջորդները կ'ներկայեն հետեւեալ կերպ. «Այս ուրուագիծն նպատակն էր հայ ժողովուրդին ուշադրութիւնը հրաւիրել հետեւեալ երեւոյթին վրայ: Հայոց պատրիարքարանը տասը տարի չտրուեցաւ, Հայ ազգին երեսփոխանական ժողովին համաձայնութեամբ, պահպանողական ու բրքաւոր պատրիարքներու եւ վարչութիւններու բացարձակ իշխանութեանը տակ մնաց. ոչի խոչ 1889-91ի ազատական վարչութիւնը հանգարտական քաղաքականութեան հետեւող չէր այլ պաշտպանէն ուղղակիտ մարմին մը որ ուզեց ազգին չահերը օսմանեան օրէնքներով պահպանելու համար պատրաստ էր: Եւ սակայն այդ բրքաւոր տասնամեայ պատրիարքութիւնը ճիշդ այն արդիւնքը տուաւ որուն անհաճոյ էին եւ անպատճառ թէ՛ օսմանեան կառավարութեան, թէ՛ բրքաւոր կոսակցութեան: Ծարտութիւն պատրիարքով եւ Նազիմեան էֆենտիով 1885ին սկսուած եւ Աշըգեան Խորէն պատրիարքով ու Մագուտ Միհոն պէյով 1894ին վերջացած քաղաքականութիւնը հետեւեալ արդիւնքները տուաւ.

Ա. Օսմանեան իշխանութեան առեւի երբեսպէս պարտուած Խրիմեան Հայրիկը ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեցաւ:

Բ. Սահմանադրութիւնը որուն չնչումին կը հետամտէր կառավարութիւնը, եւ որ 91ին ի վեր պարտքեան պատապարտուած էր, վերակենդանացաւ:

Գ. Դարձեալ 1891ին եւ ոչ իսկ իրր Կրօնական ժողովին անդամ վաստրացուած Իզմիրեան Մատթէոս եպիսկոպոսը Թիւրքիոյ Հայոց պատրիարք ընտրուեցաւ:

Դ. Դարձեալ 1891ին եւ ոչ իսկ իրր Կրօնական ժողովին անդամ վաստրացուող Ալէքսեան Գրիգորիս եպիսկոպոսը Կրօնական ժողովին առանձնապետ ընտրուեցաւ, ու քիչ ետքն ալ Պիլիկիոյ կաթողիկոս:

Ե. Օսմանեան կառավարութեան ծառայող հայ պաշտօնեաները պատրիարքարանի գործօն ժողովներէն վերարուեցան:

Զ. Ազգային իրաւունքները եւ առաձնաշնորհումները վերակենդանացան:

Է. Հայկական հարցը՝ որուն երբոպայի խնդիրներու օրակարգէն չնչումին կը հետամտէր Դռուը, երբոպայի արեւելեան ամէնէն մեծ խնդիրը եղաւ, եւ Հայաստանի բարենորոգութիւններու ծրագիրը պատրաստուեցաւ երեք պետութիւններու պաշտպանութեամբ.» (Նոր Փեահը, թիւ 16, 1 Օգոստոս 1888, էջ 254).

ՈՒ «Մուրատ Ապտիւլ Համիտ իր հաստատում բնակութիւնը հաստատած էր Եղջոյի ամարանոց պալատը, որմէ գրեթէ կիս էր Պէշիկթաշի Հայոց գերեզմանոցը, եւ առտուընին աչքին առնուազ կու գայ գերեզմաններու տխուր տեսարանը, որուն տեղ կը բարձար գուարճալի պատկեր մը տեսնալ: Այս նպատակով պատրիարքէն խնդրուեցաւ որ գերեզմանոցի ոսկրները վերցուին, եւ գերեզմանը արդուհիին թողուի: Խնդիրը սկսած էր 1887 յունուար 15-ին, եւ մասնաւոր գիրք փոխանակուած էին արքունեաց նախարար Ղազի Օսման փաշայի եւ Ցարտիւճ (Վենետիկեան) պատրիարքի միջեւ:

Պատրիարքը կ՚առաջարկէր իր կողմէն գերեզմանոցը պարտէզի փոխարկել առանց ոսկորները շարժելու, եւ միանգամայն արտօնութիւն կը խնդրէր Ընթայի գերեզմանոցին եկեղեցին վերաշինել եւ ճամբուն կողքը չթաղուած մասին մէջ կատուածներ կառուցանել: Իսկ փաշան առարկեց առաջարկը կը մերժէր, եւ վերջիններուն համար միջնորդել կը խոստանար, որովհետեւ խնդիրը արքունեաց հետ էր, պատրիարքը առանց միջնորդի ուղղակի կապեր դիմելը յարմարագոյն տեսնուեցաւ:

...Պատրիարքին տարած գիրով կը բացատրուէր գերեզմանոցներու մուիքական նշանակութիւնը եւ գերեզմաններու անձեռնմխելիութեան կանոնը, եւ այնտեղ օրէնքով փոխանցումը եւ գրաւումէ ազատ ըլլալը, եւ ժողովուրդին կրօնական զգացմանց տագնապը, եւ կը խնդրուէր կայսերական գրասիրութեան չնորհը: Դիմումը իր յաջող ելքն ունեցաւ: Սուլտանը կը հրաժարէր, որ գերեզմանոցին միայն պատերը վերցուին, եւ փոխանակ վանդակապատեր դրուին, բարեր եւ ոսկրներ՝ հող ածելով յատ ծածկուին, ծառեր տնկուին, սեփականութիւնը Հայոց ճնայ եւ մերթընդմիրթ բահանաներ կարենան գալ եւ գերեզմանները օրհնեն (*Ծրմանեան, Ազգապատում, Գ. Հատոր, Բ. տպագրութիւն, Գէյրութ, տպ. Մխ.եան, 1961, Հատոր 2681*):

Հրապարակագիրի դրիչով, նոյն գէպքին ժամանակակիցներէ կ՚ամբաստանէ Աբդիւլհամիտ. «Պէշիկթաշի գերեզմանատան խնդիր մը ծագեցաւ 1887ի սկիզբներէ: Եղջոյզի պարտէզն ու քեօշկը հետզհետէ առնի կարեւորութիւն ստացած ըլլալով, 1865էն ի վեր ո եւ է բարում արգիլուած էր արքայական գրասենեակին մերձակայ հոդերուն վրայ: Հիմա Եղջոյզը ոչ թէ գրասենեակի մը այլ Սուլթանին ճշտիճտական բնակարանն էր թէեւ, սակայն տասը տարուան մէջ սուլթանը բնաւ չէր չիջած այդ մոռցուած հին մեռելատունը, երբ մէկէն ի մէկ 1887ին անոր գրաւումին չչուկը սկսաւ տարածուիլ: Սուլթանին թեզնածին գաղափա՞ր էր այդ խորհուրդը, ոչ ոք որոշ բան մը գիտնալ կարող էր: Այդ յանկարծական պահանջումը երեսուն կու գար Նուրեան էֆէնտիին օրովը ուստի եւ մեծկակ խաղի մը կասկածը արթնցաւ մտքերու մէջ: Պէշիկթաշի անպէտ գերեզմանատան գրաւումով շիտիճներու անբռնաբարելիութեան սկզբունքը անկած կը ցնծէր յեղող անկէ եղբը Ընթայի գերեզմանատան յաջիտութիւնը հնարաւոր ընծայելու համար Նուրեան էֆէնտիի եւ Մարկիզ Միւշիրի Ղազի Օսման փաշայի միջեւ համաձայնութեան մը գոյութիւնը կասկածուեցաւ:

Այդ Ընթայի գերեզմանատունն ալ 1865էն ի վեր կը ճնար լքեալ, Խրիմեանի Պատրիարքութեանը արտաքին գործերու նախարար Խալիլ Շերիֆ փաշա բեւ մտաքերեց պետական կալուածի վերածել հարիր հազար ոսկիներու արժէք ունեցող այդ յաւերժատուղ հողը, սակայն ժողովրդային յուզումը պատատուերեց նախարարը հրաժարիլ բարձանքէն: Քիմնորական իշխանութեան այբերը միշտ յառած կը ճնային գո-

բանողներէ չբղաւպատուած, ապրելական վերաբաշխումէն կարեւոր հողի մը վրայ ո-
րուն դէմը կը տարածուի Ազեսեան դաշտը:
Բերայի գերեզմանատան գրաւումէն Նուրհան Էֆենտի կը յուսար բազմաթիւ շահեր
որոնց մէջ պզտիկ տեղ մը չէր վիճակուած իր փոխարինութիւն Բերայի եկեղեցիին
կաթնոտ գումարի մը «պարգեւին» յոյսին. միայնակ խնամակալ Բերայի թաղին.
Նուրհան էֆէնտի իր անկախ տարաձայնութեան տակ պիտի ուզենար այդ գումարին
գործածութիւնը: Իսկ Ղազի Օսման փաշային ջերմագին բարեպաշտութեան
շնորհիւ ակնկալելու ամէն իրաւունք պիտի վայելէր տակաւին «Մէհթերխէի բարե-
բաղդ կարգերէն զուրկ պարտուճան:
Երբ արդարեւ Սուլթանը «հիւանդ» յայտնած էր պարտէզի վերածուած տեսնել իր
թեակաբաւին ճօտ բայց ալբէն հեռու Ծովեզրատունը, այդ օրինակ փափաք մը պար-
զապէս «հրամանի քաղաքավարական հոմանիշը կրնար համարուիլ, ու անբաղա-
դատութեան վերջին խօսքն էր օսմանեան կայսրութեան միահեծան պետին, իս-
լամութեան խալիֆային հրամանը զոյաւոններու ժողովքի մը հրապարակային վի-
ճաբանութեանն ու որոշումին վճռանգներում ենթարկել:
Այսպիսի դժուար պարագայի մը որ խնդացի եւ ճշմարտապէս ապրածէր վարչապետ
մը, բեւ կառավարական պաշտօնեայ բայց իր կառավարութեան ալ անշահախնդիր
ծառայող պարկեշտ պաշտօնեայ մը ըլլար, խնդիրը պիտի լուծէր անճայն անչշուկ,
պատճառգրական ու կաթոլիկասական չբղանակներում մէջ:
Երբ Սուլթանին փափաքին մերժողական պատասխան մը եկեղեցիին վերջնական
էր, այդ պարտականութիւնը միայն պատրիարքը կրնար կատարել, «պաշտելով»
Սուլթանը յղիացուցել «պարբերաձիւս» ժողովքին քարեպաշտական զգացումները.
Սալթան Համիտ բաւական ըրբռնիտ էր ցնծութեու համար «պարայանքին» ներքին
նշանակութիւնը: Իսկ երբ ազգային չահերը կը պարտաւորէին Պատրիարքարանը
տեղի տալ, խնդիրը պէտք էր լուծել կաթոլիկասական բազարիկ տնօրինութեամբ:
Լոկ կարգադրութիւն մը սակայն չէր կրնար նպաստել Նուրհան էֆէնտիին չահե-
րուն, որոնց միակատար յաջողութեան պայմանը ազգային «սահեղ ընդիմադրու-
թեան մը» չահեչահումին կատակերգութեան մէջ կը փնտռուէր: Ընձախնդրական
այս աննշուկ ստրով վարեց Նուրհան էֆէնտի Պէշիկթաշի գերեզմանատան հարցը:
«Սահեղ ընդիմադրութիւն մը չահեչահած ըլլալու պատիժը վայելելու համար հարկ էր
նախ այդ ընդիմադրութիւնը ստեղծել:
Նուրհան էֆէնտիին ամբողջ ապրելարդարդարութիւնը կայացաւ ժողովքը չտարեգնելու,
զգուշութեան մէջ: Կրօնական ու քաղաքական կրկնակի համգամանքով այսքան կարե-
որ խնդիր մը Ազգային ժողովին վերաբերելութեանը կ՚ենթարկուէր առանց վարչու-
թեան կրօնական ու քաղաքական ժողովներուն համաձայն ձէկ տեղեկագրին, որմէ
երեսփոխանական մարմինը կարենար առաջնորդուիլ: Ենգամ մը որ փոխանակ էջ-
միածնի գիմելու վարչութիւնը Պոլսոյ Ազգային ժողովին վճռին կ՚ենթարկէր գերեզ-
մանատան մը կրօնական հարցը, տարբական խանձարութիւնը կը պահանջէր զոնէ
նախապատուութիւնը տալ քաղաքական ճկատումներու, ժողովը ընդհակառակը ե-
կեղեցական Համագումարի մը կենսագործը տուաւ: Խրիմեան յայտարարեց թէ ինք
պիտի չի թողլատրէ գերեզմանատունը յանձնելու համար մինչեւ իսկ կաթոլիկոսա-
կան հրամանի մը գործադրութիւնը: - Կաթոլիկոս եմ, գոչեց:
Ու Ընտրիանց տօնախմբութիւնը, այդ փետրուարի 7 երեքշաբթի օրն իսկ, սրտերը
յուզող պերճախօս ատենաբանութեան մը առիթ ընծայեց ապագայ կաթոլիկոսին որ
շատ չանցած գլուխ պիտի կանգնէր գերեզմանենոցը յանձնել փափաքող եպիս-
կոպոսական խնբակին. բայց այդ պահուն Սապատչի միշտակները հրարոցոց կը

խանդաղատէին այն օրուան տաքուկ արեւին մէջ Պատրիարքարանին մեծ սրահը զինուորնալ կենդրոհանոցներուն սրտերը: Ու կը հրճուէր Նորեան էիէնտի այս բոլորովմէն, բայց երբ ալ կարծեց թէ ցնդդիմադրութիւնը իր ոգած աստիճանին հասած է մէջ տեղ ցնծագնա ահաբեկիչ սարսռանով մը հակառակորդները անձնատուրեան հարկադրելու.

- Երէ պերեզմանատունը չի տար ազգին պետիք կրակ պիտի բալի, կրա՜կ, գռռաց...» (Ակրիխորեան, տկ. Պոլսոյ Պահպանողական Հարցեր-Բիւրեղը, Նոր Ժեռք, Ա. տարի, թիւ 1, 1 Յունուար 1898, էջ 6-7).

62 *Նիկոլա Մոլթկեն (1800-1891) ծնած եւ մեռած է Պրեսլաւ։ Պետական-քաղաքական գործիչ, հրապարակախօս, պատմաբան, բանաստեղծ, քառակրգիր եւ քաղաքական ազգմարմարտավարական տեսարան։ Ծանօթ կը մնայ իր հանրաբանը՝ «Պատերազմի մէջ պետութիւն»։*

63 «1890 յունիս 15-ին, Վարդավառի տնտեսի կիրակին, որ միանգամայն Տաճկաց Գուրպան պայրամին առաջին օրն էր, կամուխեն կը սկսին Գալաթա հասարուիլ խումբ խումբ ապգայիններ, ընդհանրապես գառասպիներ, եւ գաղտնի կոտակցութեան մը յարտոններ, որ 1887 դեկտեմբերին Բերայի մէջ հրատարակուիլ սկսած *Հնչակ* անսարթերին անունէն *Հնչակեան* կոչուիլ սկսած էին, եւ 1890 տարւոյ սկիզբէն մայրաքաղաքի մէջ ընդոստ եւ յանդուգն ցոյցերու ծեռնարկող վարիչ մարմին կազմած էին: Այդ մարմինին հաճոզմամբ իրը թէ մայրաքաղաքի մէջ ցոյց մը պիտի կարենար երթապան միջադեպերու եւ Թուրքիան գործերու բոնադատել, ոստի կ'օգտուին այդպիսի ցոյց մը կազմակերպել: Պահանջմունքիր մը կը պատրաստեն ժողովուրդին մէջ գրուելու, եւ կը խորհին զայն յուզմունքից կերպով հրապարակ հանել, եւ [Խոչէն Աշըգեան] պատրիարքին ծեռքով կայսեր ներկայացնել տալ: Ցոյցին գործադրութեան յանձնարնին կ'առնեն Ցարդուհիւ Ճանկիւլեան Վասնեցի եւ Համբարձում Պօյաճեան Համշենցի. վերջին պահուն՝ առաջինը կ'ըլլայ թէ պահանջմունքիրը առաւօտեան ժամերգութեան առեն եկեղեցւոյ մէջ կարդացուող, եւ թէ պատրիարքը ճահուան ապառնալիքով եւ ատրճանակներու ցոցադրութեամբ դէպի կայսերական պալատը երթալու ստիպողը, միւս երկրորդը ամբոխին մէջ դիտուղի եւ խնդոզի գեր կը վարէ:

Ցարմի է որ պատրիարքը չէր կրնար այս տեսակ պատրաստութեամբ կայսեր ներկայանալ, եւ կը ջանար գործին ծեւը փոխել եւ ամբոխը գրուել, միւնու իսկ կը խոստանայ միա օրը պաշտօնական այցելութեան առիթ գրուածը տալնիլ:

Այդ բոլոր ցոյցերու կարգին, կայսեր կողմէ նուիրուած *յաղագին* (սուլթանական կնիքի նկարը, որ կը խորհրդանչէ ծոյնիներն իշխանութիւնը - Տ.Գ.) վրայ կը խոյանար Ճանկիւլեան, ու վար առնելով կը բախտէր:

Պատրիարքը ճարահատ եւ ճահուան սպառնալիքին ներքեւ չուարած, բոնութեան հպատակելով տեղի կու տար, եւ ամբոխը հնոց պատրիարքարանէն կը մեկնէր:

Միտորը բնչում վրայ՝ ոսիկանութիւնը տեղւոյն վրայ կը հասնէր, երբ արդէն պատրիարքն ու ամբոխը դէպի Ցաստրդիա յառաջացած էին, գնացքը հասած տեղը կը կեցնէր, եւ պատրիարքը յոյնի մը ծերձակայ տունը կը տարուի, իրեն հետ Ճանկիւլեանն ալ, որ պատրիարքին պաշտպանութեան դերը ստանձնած էր. ամբոխէն 27 գլխաւորներ կը ծերբակալուէին, եւ ցոյն տան մէջ հարցաքննութիւններ եւ հետազոտութիւններ կը սկսէին, որոնց կը ճախագահէր Տէրվիշ փաշա՝ կայսեր յատուկ հրամանով, զի կայսրը ցոյն պահուն պալատի հանդիսական արարողութեանց մէջ կը

գոմեր ոչ մի ժամանակ, ասպիսանութեան նախարար Քեամիլ պէյը պաշտօնական կ՚ըլլար, ժանտախտին արդում չգտնուելու համար եւ պատաստան կ՚ենթարկուէր, եւ Նազմ պէյ անոր կը յաջորդէր:

Երեսիցս մէջ թուրք կարգադրողը եւ թուրան կատրող կը փնտռուէին, իրեն շարժուձեւի պետերը, մոլլիսկ Ճանկիւլեանի ապրեալ, որ հանդարտօրէն նստած էր պատրիարքին ճօտ, միւնչեւ որ երկուքն ալ մոլի իրենց երեսը ակամառոնեաններէն կը վկայուէր, եւ ան ալ ծերբակալութեան եւ հալցաքննութեան կ՚ենթարկուէր պատերազմական առեանի առջեւ եւ տպարապետի նախագահութեամբ:

Սասունի հետապնդութեամբ յառաջ կը տարուէր զինուորական առեանին պատասխանատուները, եւ Օգոստոս 8-ին վճիռը կը հրատարակուէր, որով Տարտրիսի Ճանկիւլեան մահուան, եւ կալանքական ընդմէջ ցմահ բերդարգելութեան, եւ ութիչ երեք ամիսներ 15 եւ երիզ ալ 5 տարուան բերդարգելութեան կը դատապարտուէին, 16 հոգի ալ անպարտ կ՚արձակուէին (*Աքթապատառամ Գ. Հառոր, Հատուած 2047*).

Աքա առումով, «Լզգային կեանքի նոր շրջանը՝ որ 1879ին սկսած էր, կը յանգէր 1890 Յուլիս 15ին. Գոմ Գարուի ցոյցը անցեալի մը վերջակէտն էր ու ապագայի մը մեկնակէտը,- կը պատմագրէ *Աղթիւրեան* (*Աղթիւրեան, Պատմութիւն, էջ 177*).- Պատրիարքին թաւնթաւտոփինը, եւ Ազգային Վարչութեան առննապետին բերահատուցիչը ժողովրդային շարժումի մը հնարաւորութեան մասին, անիսուածինի ցրիւ 1890 յուլիս 15ի ցոյցը: Գործնական յեղափոխութեան թուականը բացուեցաւ այդ օրը Գում-Գարու: *Բայց՞ը մը թէ չարիք մը այդ ցոյցը* (*Աղթիւրեան, «Մուկիս» 15ի Մայիս Ու. Հետեւանքները, Նոր Փեռեր, Ա. տարի, Թիւ 7, 1 Մարտ 1898, էջ 98-102*).

Իսկ թէ ինչպէս որոշուած էր այդ ցոյցը՝ կը պատմէ՝ Քանկիւլեան. «Ս. Պոլսոյ Վարիչ Մարմնոյն ընկերները ծիշտ ժամուն ներկայ էին ժողովին: Ժողովը միաձայնութեամբ որոշեց որ ցոյցը տեղի ունենայ Գում Գարուի Մայր եկեղեցւոյ եւ Պատրիարքարանի մէջ, Յուլիս 15 Կիրակի, Գուլդաան Պայրամի առաջին օրը:

Հակառակ մեր երեք ընկերոջ փափաքին, մենամասնութեամբ որոշուեցաւ խաղաղ ընել, ո՛չ թէ զինեալ, որոշուեցաւ պահանջմունքները մի արդի վիճակը մեր մէկ ընկերոջ տնտ Աշըգեանի միջոցաւ ներկայացնել Համիտին: Որոշուեցաւ որ ցոյցին գլխաւոր դիմավարները ըլլան երկու ընկերներ. ընկերներէն մին «Լոաքնոցի» ժամանակ պահանջմունքները կարդայ Մայր եկեղեցւոյ առագ խորանէն եւ միւս ընկերը Աշըգեանը առնչուի Պալատ երթայ եւ պատրաստուած պահանջմունքները ներկայացնի, իրր Հնչակեան Կոմիտէի ներկայացուցիչ: Ցոյցին սկիզբէն միւնչեւ վերջը ցուցարար ընկերները պիտի ենթարկուին երկու զինուոր դիմավար ընկերներու հրահանգներուն: Իսկ Խան Ազատ, Մեզտրեան, Սիմէոն եւ Ներսիսեան չպիտի մասնակցէին ցոյցին, որպէսզի հանդարտ պարագային երէ ձերբակալուէին, Թորք կառավարութիւնը տարեհպատակ Հայերու մասնակցութեան տեղեակ չըլլար: Երկու դիմավար ընկերները պէտք էր վիճակով ընտրէին, որուն համար 15 վաչկեան դադար տրուեցաւ (*Ե. Գ. Քանկիւլեան, Մէկտասներորդ Վարիչ Մարմնոյն Անդամին, Ա. Հատոր, Գ. Մաս, Հատուածներ «Աքթապատի» Թիւ 36, տպագրած «Աքթապատ», Գէյրութ, էջ 186-190*).

Մինչ, ցոյցին Հանդիսիներէն՝ Տամատեան կը յուշագրէ. «1890ին, Մայիս ամսուան ընթացքին ժամանեան կառավարութիւնը Կարինի մէջ կը կատարէ բազմաթիւ ձերբակալութիւններ: Կարնոյ հայերը տեղւոյն Հնչակեան մասնաճիւղին առաջնորդութեամբ ցոյցերի իսաղաղ ցոյցեր կազմակերպեցնին: Ցոյցին կը հետեւի Կարնոյ կոտորածը:

Երբ Կարինի այս դէպքերուն լուրը կը հասնի Պոլիս, Հնչակեան ղեկավարները ի նշան բողոքի, կը կազմակերպէ 1890 Յուլիս 15ի (հին տոմար) Գում Գաբուի խաղաղ ցոյցը որ յետոյ կը վերածուի կառավարական ծիւանատուներուն արիւնոտ պատահարին: Այդ ցոյցին առթիւ կը ձերբակալուին Ծարուխիան եւ ուրիշ մէկ քանի Հնչակեան ղեկավարներ: Գում Գաբու ցոյցէն ետք, կ. Պոլսոյ Հնչակեան ղեկավարները կը կատարէ մէկ քանի անարձկչական գործողութիւններ» (Գ. Յ. Էնֆիէճեան, Տասնամեակի Քննական Ընչացքը Հնչակեան Շարժման (1890-1900), Ուխտաւորներ Տասնհարիւր, Քիւռեղեան Գրադարան, Գահիրէ, 1968, էջ 40):

64 Կ. Պոլսոյ պատրիարք՝ 1886էն-1894:

65 «Կ. Պոլսոյ Հոգեւորական Մարմնի պատուիրակին հանգամանքով, Արքիեպիսկոպոսական տանակցութիւնը՝ Գում Գաբուի ջարդին առթիւ, Հոգին Աչդիճան պատրիարքին հետ, տեղի ունեցած է Շաբաթիկ Ազգային խորհրդարանը, 1890 Յուլիս 19ին (Նոր ժամանակ, Ա. տարի, թիւ 5, 1 Մարտ 1908, էջ 74):

66 Այս մասին Աչդիճանեան ալ կ՚ակնարկէ՝ թէ «Արքիեպիսկոպոսը յանգոյն իր ամենայական տեսակէտներուն հանդամալ պատրաստի յարաբերութիւն ունի» (Աչդիճանեան, Մեհեան Յիշատակ, էջ 100):

67 1887ին արդէն կազմուած էր եւ կը գործէր Պոլսոյ տեղական կազմակերպութիւնը, որուն Վարիչ Մարմնին անդամներն էին՝ Մուրատ (Համբարձում Պէշամեան), տեսակցական Գրիգոր Աճեպոկեան, տեսակցական Մարգար Մոմճեան, տարեկիրցի Գրիգոր Աչդիճեան, Յարութիւն Շաքրեան, տեսակցի Յակոբ Արապեան, Երուանդ Պէշամեան: Անոնք Մարտէնի մէջ հիմնուած Միլրոյէ Փարթուզալեանի «Հայոց Հարցասիրական Միութեան» հրատարակի եւ գործունէութեան համակիր եղած են, առանց այդ միութեան մէկ մասնաճիւղը դառնալու: փոխադարձութեամբ տարածած են Փարթուզալեանի Հրատարակական Ձեռնարկած եւ այլ գրքոյկները (Անանիկեան, Քիչատուկեր, Մասն Ա. եւ Բ., Կ. Պոլիս, 1913, էջ 108-113, 118-120): Անոնցմէ ոմանք Վարիչ Մարմնին անդամներուն վրայ կ՚ուսնեան՝ Միհրան Տատեան պարծանքի, Հրանդ Ազատ Հարիւնի, Հրանդ Մարգար Վարժապետեան, Յակոբ Գալանճեան եւ Գրիգոր Տէր Բաղտասարեանց (նոյն, էջ 129):

«Արքիեպս Արքիպաշան, Լեռն Բաշալեան եւ իրենց քանի մը զարմիպաշնիցներ ի բնից տարաձայնութեան ձերբեն ունէին նոթաճասում ասկնի չափ դրամ:

Վարիչ Մարմնոյն յառաջիմութիւնն ի նկատի ունենալով, ձեզ հետ հանդամայնութեան մը գալու կամ միանալու փափաք մը յայտնեցաւ իրենց կողմէ, եւ մենք չատ սիրով եւ ուրախութեամբ ընդունեցք իրենց առաջարկը. ոչ թէ միութեան տեսակէտով միայն, այլ մեզմէ շատ բաժեր էին եւ մենք արդէն պէտք կը զգայինք այդ կարգի ոյժերու:

Բանակցութեան սկսուեցաւ բայց գաւօք օրէի պէտք է ըսել թէ այդ բանակցութիւնները արդիւնաւոր ծայի մը չյանգեցան: Արքիեպիսկոպոսին խումբը ունէի պահպանողական ոյլորոյ, պարկան կը դնէր միութենէ վերջ իրենց առած նոանհանգիներով գործել, առաջարկ որ ունէի դիանագիտական կերպով խնդիրը կարգադրելու կը միտէր: Քանի որ Հայաստանի մէկ ծայրէն միւսը արիւն կը հոսէր, քանի որ հարստահարութիւններն օր ըստ օրէ կը չատնայինն որոշ եւ միտդամիք կերպով, եւ վերջապէս՝ քանի որ մենք Յեղափոխական Կազմակերպութիւն մ՚էինք, բնականաբար չէինք կարենայինք խոժերին առաջարկին ընդունիլ, եւ տոխպուած էինք բանակցութեան վերջ

տալը: Ըստ Հանդէսի խմբագրի՝ «Ի Պոլիս ոչ ոք կարդում էր Հայկական Հանդէսը, որովհետև ոչ ոք գիտէր հայերէն կարդալ» (Հանդէս, էջ 138-139).

Մանուկ, կամ՝ Մկրտիչ Խրիմեան Հայր Միսիթարեան մի գործակից, անդրանիկ՝ «1890 թ., «Հնչակ»-ի խմբագրութեան կողմէ դրկուած պատուիրակներու հետ՝ Հանգիպումի մէջ, շատ ապահով տեղ մը, երկու ամիս բանակցելէ ետք, Կազմակերպութիւնը, Պոլսոյ եւ գաւառներու՝ Սերտութիւն, Վաճի եւ Մուշի իր մասնաճիւղերով, Հնչակեան կազմակերպութեան դրօշին տակ կը մտնէ՝ Հնչակեան անունը կրելով» (Զաքարեան, *Հատոր Գ.*, էջ 8-9). Ա. Հատ.՝ «Հնչակեան կազմակերպութիւնը կը հաստատուի Պոլսոյ մէջ շատով տարածուելու երկրին մէջ ու ընդ որում անջատ չարժառիթները կը միացուին Հնչակեան կազմակերպութեան եւ անհիմնապէս պղտորելու համար ընկերվարի ճամբայ կը հանձին զանազան ոտրտուքիւններով: Տանջատեան այս յեղափոխական շրջանակին մէջ առաջնորդող կարկառուն դէմքերէն մէկը եղաւ» (Տէվեանեան, էջ 40).

68 «Ես՝ [Տանջատեանի] բանտէ արձակուիլը 1894 Մայիսի վերջերը, ծանրորակէս կը զգայի իր ծերբակալութեան տարեդիմի: Ոչնչի որ Սուլթանական մերօնով ազատ արձակուած, թորք կառավարութեան եւ ոստիկանութեան աչքին ան դրաված էր փուչ մը: Միա կողմէ իր անակնկալ կերպով բանտէ ազատումը ոմանց մտքին մէջ կասկածներու տեղի տուած էր: Իսկապէս կարելի չէր բացէ ի բաց տանիքներու վրայ յայտարարել այն պատրազամներն ու դարձուածքները, որոնց արդիւնքն էր իր ծերբանն արձակուելը Սուլթանին կողմէ» (Տէվեանեան, էջ 91-92).

69 «Պօլսի Հնչակեան վարչութիւնը 1895 բանակի (այստեղ երկուսին մը կամ Արփիարեանի Կ. Պոլսոյ Հնչակեան վարչութեան անդամակազութեան թուականին չորք. Տանջատեան կը վկայէ թէ՝ «1894ին երբ բանտէն կ'ազատուէի զարմանքով Կ. Պոլսոյ Հնչակեան Վարչութեան անդամ զոսյ միներ» - Տ. Գ.) սկզբին իր անդամ հրաւիրում է Արփիար Արփիարեանին: Պոլսի Հնչակեան մասնաճիւղին չէր կարող յայտնի չինել Արփիարեանի անցեալից գոնէ երկու փաստ- յեղափոխական պատրուակով Կովկասից փոքրած որոշ գումարի կլանումը եւ նրա ծրանուր Մեղայագիրը: երբ այսուհանդերձ մասնաճիւղը դիմում է արդէն արատաւորած անձնաւորութեան աջակցութեան, դա պարզ ցոյց է տալիս, թէ որքան տարօրինակ էր արդէն այդ ժամանակ հնչակեան գործիչների բարոյական մակարդակը եւ թէ որքան քիչ պահանջներ էր դնում Հնչակեան մասնաճիւղը իր պատասխանատու գործիչների նկատմամբ:

Հնչակեան Կեդրոնի ասելով՝ Արփիար Արփիարեանը անյայտ պատճառներով յապաղել է նախ ստորել Կ. Պոլսի Հնչակեան Վարչութեան մէջ եւ դառնալ նրա անդամ եւ նա Կեդրոնը, իստին բորբոքել է, այդ կամայական ընդունելութեան դէմ, իմանալով Արփիարեանի անցեալը, որպէս նաեւ ամենքին արդէն յայտնի լինելով մի քանի գծեր նրա այդ անցեալից» (*Հ.Յ.Դ. Կովկասեան Բիւրոյական Մարմնոյն, Համառօտ Դիտողութիւն*, 15 Մարտ, 1899, էջ 3).

70 *Աւելի մանրամասն՝* Գասպարի *Մանուկեան, Հնչակեան Հնչակութիւն, Հատորիկ Առաջին*. Գ.Մ. Տպագրութիւն, Երեւան, 1968, էջ 78-214, 255-284; Նաեւ՝ Նոյնի՝ «Հնչակեան Ազգային Հասարակութիւն, Հայ Նոր Գրականութեան Պատմութիւն, Հատոր չորրորդ, էջ 276-405.

71 «Կեդրոնին անյայտ պատճառներով ներս ազդած, իր կեդրոնը անցնելով յայտնի Արփիարը Լօնտոն է գալիս:...Էրտես, յեղափոխական դրամ կլանող, մասնիչ, նենգնակ ծրանաւոր Մեղայագրի. Արփիարը ընդունում է Կեդրոնի մէջ եւ համարում է ընկեր:

Կեդրոն ժողովով, Արփիարը սկսած է իմորիզներ սարքել, Կեդրոնը իմանում է այդ իմորիզների մասին, ինչ միջոցներով – լռտնաներ կարգելով, եւ տ'ն – Հնչակեան կուսակցութեան Ընդհանուր «Ընդհանուր Ներկայացուցիչ» Աղասու եւ Ընդհանուր Հսկանանատար Ապահին:

Այսանից յետոյ Արփիարհանը պատագրում է Հնչակեան կուսակցութիւնից, եւ վճռագրի տակ ստորագրած նոր տեսնում իմիջի այլոց նաեւ Տաճատեանի, Աղասու եւ Ապահի անուններըը» (*«Հնչակեան Կուսակցութեան Բարոյական Մրհարտը», Քաղաքական Դիտարկ, 18 Ապրիլ, 1888, էջ 4*):

72 «Նորակազմ Կեդրոնի դեռ սկզբի օրերին, փարչութեան մէջ մնացել էին միայն երեք թղթեր, որոնք իրար չյարգելուց ու չհաւատալուց չարունակ տեղի էր տալիս անհամաձայնութիւն եւ ծոյլիսկ կռիւներ...Ինչքան զզուելի էր տեսնել, թէ ինչպես Կոլոթեանը (Մուրէզ Սուրենեան) կեղծ բռունցք էր բարձրացնում Արփիարեանի վրայ եւ հայհոյում, Տաճատեանին խաչելու համար...

Տաճատեանի դեռ չգժտուած ժամանակ, դեկտեմբեր 20-25, մի քանի անգամ Արփիարեան բերեց Տաճատենը եւ Կոլոթեանից փախուստ առաջում էր ստորագրել «Հ...Կ...», իսկ ինքը ստորագրել էր Լ...Ռ... Կոլոթեանը առաջին անգամին իրը զիջողում էր այդ խարդախութեան, բայց Արփիարեանի ագիտատութիւնը յաղթող հանդիսացաւ:

Տաճատեանը այս ամէնը տեսնում էր ու լռում...երկար համբերութիւն չեղոյ՝ տեղի ունեցաւ անպատիւ կռիւը, որոյ պատճառաւ բրեց Արփիարեանի երեսին եւ հեռացաւ (*«Հայ Յեղափոխական Յեղերը, ստորագրած՝ Մահի Գաւաթեան եւ ընկերներ, Քառասիկ մաս. 11, Պարիզ, 30 Ապրիլ 1897, Քաղաքական Դիտարկ 18 Նոյեմբեր 1898, էջ 17*):

Տեղեկան Հեղինակը կը հերքեալ հետեւեալ կերպ՝ «Տաճատեան կեղծուելէն հրաժարած՝ մնած էր բողոքի դերին մէջ: Ան այս դերէն մէջ մնաց Լոնտոն դեռ վեց-երեք ամիսներ, որմէ յետոյ կը պատրաստուէր մեկնիլ Ամերիկա երբ եգիպտահայ առաջնորդներ մը ցնդի. ժողովի, որ պիտի գումարուէր 1898ի սկիզբները Աղեքսանդրիա, կեղծուի անդամներուն կարգադրութեամբ քանի որ Արփիար ալ այդ միջոցին եգիպտոս կը գտնուէր: Այս ցնդի. ժողովին շարժառիթներէն մին ալ բռնութիւն գործել էր Արփիարի եւ Տաճատեանի միջեւ գժտութեան խնդիրը:

Տաճատեան իրագէտ կուսակցութեան մէջ անցած դարձուածներուն, ոչ ոք չունէր հանդիսացութեան յանգելու իր ընկերներուն մէջ, բայց ատիր չտալու համար, որ Արփիար արդարացուի եւ ինքը մերկացուի իրը փախստատ տուող կուսակցութեան բարձրագոյն ժողովին առջեւ, 1897ի վերջերը մեկնեցաւ Լոնտոնէն եւ հասաւ Աղեքսանդրիա:

Ընդհանուր ժողովը բացուեցաւ Աղեքսանդրիա, Լուսո Ասլանեանի տան մէջ: Նախնական մէկ քանի նիստերէ յետոյ Արփիար առաջարկ մը ներկայացուց թէ քանի որում ժողովը իսիստ ծանրակշիռ եւ ճակատագրական գլխաւորութիւն ունեցող որոշումներ պիտի քուէարկէ, պէտք է ժողովականները բացարձակ գաղտնապահութեան երդում բնեն: Տաճատեան ըսաւ, երբ այդ երդումը Հնչակեան կուսակցութեան հաւատարմութեան եւ անոր գաղտնիքները բշնամիին եւ կամ կուսակցութենէն դուրս գտնուող չդլանակներու չյայտնելու համար է, մենք ամէն մէկնելիս այդ երդումը ըրած ենք կուսակցութեան մէջ մեր ժամանակ օրէն խակ, երբ երդումին ընդհանակն է որեւէ որոշումի մը գործագրելի արգիլել որ փոքրամասնութեան մէջ մնացող անդամ մը կարենայ հասցնել իր բողոքի ձայնը կուսակցութեան մասնաժողովներուն, այդ գործագրելի այսպիսի երդում մը դատապարտելի բնոյթ մը կ'ունենայ: Պատգամաւորները բոլորը

ալ միաբերան ճշդեցին, որ ժողովին գաղտնիքները օրեր պատռազգի մեջ պետք չէ յայտնաբերուին եղբայրակ ճասնաժողովներուն կամ ճասնաճիւղերուն ոչ իսկ իրենց բոլոր կամ լսատրամոլիին:

Այս միջնադարեմոիիւնը չընդունեց Տաճատեան եւ նախընտրեց մեկնիլ ժողովապահեն քան երբեմն կաշկանդել իր ազատութիւնը քանի որ իրը արդէն իրագիկ եղած էր ժողովին մէջ տիրող դրնդոլոին: Իսկ Արփիար այդ երդումի ժեռակերպութիւնը մէջտեղ նետելով ասուած էր Տաճատեանին ժողովէն հեռացնելու իր նպատակին:

...Հեղհեղուկ ժողովին երկու կարեւոր որոշումները...կը բանային կոռակցութեան եւ Տաճատեանի տեսակէտներուն միջեւ լայն իրարանցում մը, որով Տաճատեան իրքզիր յայտարարեց կոռակցութենէն հրաժարած (Հնչակեան, էջ 121-122).

72 Ցաւագիրին Քիւրքեան - հրկիզուածքիներս. վարչութեան պարտուհեալ, որ Քէչքեանի, Ալբիւար ու. Փիլիկ Ալբիւարեանները. նետ նոյն յարկատարածին էր բնակէր Քիւրքեան ապետ էր Ալբիւարեանի' Հոռոմլուի խմբագրատպատուիներէն վառարուած չրխանին, մինչեւ. որ ան երկրին վերադարձած էր իր պարտականին (Ա. Թ., «Ձեր ծառայութիւնը' Գ. Ալբիւրի Երկաթիին Համար», Ազդ., 13 Մարտ 1943).

ARPIAR ARPIARIAN: THE VICTIM OF IDEOLOGY
(Summary)

DIKRAN KEVORKIAN

The renowned Armenian publicist and writer, Arpiar Arpiarian, the forerunner of the Realist School in Western Armenian literature, has been a controversial figure in Armenian party political life. He was the target of one unreported, plus three reported assassination attempts. The last of those attempts was unfortunately successful, bringing to an end the restless life of this talented personality.

Dikran Kevorkian tries to shed additional light on Arpiarian's life by publishing the conclusion of an original work by Mihran Damadian, a leader of the Armenian national-liberation movement in the late nineteenth-early twentieth century, and annotating this piece through the use of all the evidence available on these assassination attempts. Kevorkian makes excessive use of the existing sources on the Armenian national-liberation movement in the late nineteenth century, relations among the various Armenian parties active at the time, as well as the relationship between Eastern and Western Armenians living in the very active Armenian community of Constantinople.



Արփիար Արփիարեանի ճախարձանը

ԱՍՏՂԱԾԻՆ ԵՐԿՆՔԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ՄԻՀՐԱԿԱՆ ԵՐԵՔ ԱՐԵՒՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼՈՒԹՈՒՄ

ԳԱՓԻԿ ՄԱՐՏՈՍԵԱՆ

Ըլլալը Մեխանիկին միջազգային բանարհեստաբեհան մէջ յայն տարածում ունեցող 3 եղրայրների մասին հնքնաքեների կրտսեր եղբօր կերպարը քննելիս, ի միջի այլոց նչել է, որ արեւմտեան բանագիտաբեհան մէջ ետատապելարանական գպրոցի ներկայացուցիչներուն կարծիք են յայտնել, թէ նոյ մարմնաւորում է վաղորդեան արգը, որը խամրեցնում է պիչերային աստղերին՝ իր եղրայրներին կամ քոլերին[2]։ Այս գպրոցի ուսումնասիրութիւններից անկախ, որոնք ցարժ անհամբ մեզ անհատնելի են մնացել, Հաչգագեան Հայագիտական Հանդէսում հրապարակած մեր մի յոդուածում[3] այն տեսակէտն ենք առաջ քաչել, որ 3 եղրայրների հնքնաքեները մեզ են հասցրել ցերեկային եւ գիչերային Արեւի (Լուսնի) եռակի դրսեւորումների (արդարաց, օրուայ յուսատու եւ խաւար մասնը) մասին առասպելական Ընդհանր՝ կրտսեր եղրայրը խորհրդանչում է ամէն օր Հանգիժնալ աչխարհից յառնող, մչտապէս մանուկ՝ Արեգակին։ Ժողովրդական այդ պատկերացումն անքիչ վարիանտներ ունի եւ հայրց մէջ քաչատարածուած է, օրինակ՝ ծիր. գարի քառատերծ, կաթոդիկոս Ներսէս Շնորհալուց առանդուած մի հանելուկում, ուր Մանուկ Արեւն ամէն օր ծնւում եւ մեռնում է, խակ քաղաքացց չհաող յառնում է աւելի գեղեցիկ կերպարանքով[4]։

Երեք եղրայրներին նուիրուած հնքնաթ-առասպելների չարքը միանգամայն նոր մեկնաբանութիւնների տեղիք է տալիս, երբ խնդիրը քննում ենք ատղային դիցարանութեան չրջի տակ, որը հիմք է ծառայել Հին աչխարհի արուեստի, գիտութեան ու հարատարագիտութեան տեղծման[5]։ Այս տեսանկիւնից պարզ է դառնում, որ աւելի ուչ ժամանակներում Յոգ եղջար կերպարը վերածել է տարեգործի Արեւի՝ մեռնող եւ յառնող աստուածութեան՝ ներկայացնելով հին աստղագիտութեան վրայ հիմնուած օրացուցային գիտելիքները։

Ցաչոնի է 3 եղրայրների մասին Հայաստանի աչխարհագրական անհնաստարեր չրջաններից գրառուած չուրջ 3 տասնեակի հասնող հնք-

խաթ, որոնցից քուսարկինք միայն մի քանիսը՝ «Հայաստան Բյուրակամ Աբ-Դինոյի նապյոց»[5], «Ղուշ Փարլնե»[6], «Անմահական ձեռոյրդ»[7], «Վերնիկ ձեռոյրդ»[8], «Մոդահանկրդ»[9], «Սիկնան Քաքաւերդ»[10], «Մադկած Բազջանե»[11], «Ոսկե Քոնիեմնուրնն նապյոց»[12], «Լուս նան ՄՔԼՆ Աչխարքնէնե»[13], «Միրզա Մահմուդ Ու. Ջամպոց»[14] եև։ Հեքիաթները համապատասխանում են Աարնէի եև Թոմփսոնի տիպատական ցուցակի 301, 550 եև 551 տիպերին, որոնք գրեթե ամբողջ Արեմտյան Եվրոպայից, Ռուսաստանից, Հայաստանից, Թուրքիայից, Հնդկաստանից, Ինդոնեզիայից, Հիւսիսային եև Հարաւային Ամերիկայի որոշ շրջաններից, Աֆրիկայից պրատուած նիւթերի հիման վրայ են կազմուած[15]։

Ըստ հայկական հեքիաթների տրամադրած համեմատական նիւթի, դրանց բովանդակային սխեման հետեւեալն է.-

Քաղաւորը ծեր է եև կոյր։ Ունի 3 որդի եև մի հրաշալի այգի, որտեղ խնձորենի է աճում վրան՝ ոսկէ խնձորներ։ Մերթեմն քաղաւորը սկզբնապէս անզաւակ է եև 3 որդի է ունենում Աստծոյ ողորմածութեամբ)։ Խնձորները յանձնելու եև տեսողութիւնը վերականգնելու զորութիւն ունեն, սակայն երբ գայիս է դրանց հասունանալու պահը, դիչերն անհետանում են ծառի հիւդերից։ Քաղաւորը որդիներին պատուիրում է պահակ կանգնել եև քունել գողին։ Աւագ որդիները գիչերը հակիրճ, քնում են, իսկ կրտսերը յաղթահարում է չարագործին, որը Դեև է՝ վիչապ։ Կրտսեր որդին նետ է արձակում վրան։ Վիրաւոր վիչապը քաչում, հետանում է եև ընկնում խոր Հորի մէջ։ Եղբայրները հետապնդում են նրան, սակայն Հորի եզերում վառուող կրակին չդիմանալով, չեն կարողանում իջնել մինչև յատակը։ Պատանի իջնում է կրտսեր եղբայրը եև հանդիպում 3 գեղեցկուհի քոյրերի, որոնք առեւանգուել են նրանք վիչապների կողմից։ Ապահում է նրանց եև կոչերին հասնում Լոյս Աչխարհ։ Երբ ուզում է ինքը դուրս գալ, ասպ եղբայրները նրան գաւաճանաբար քողնում են Հորում։

Կրտսեր եղբայրը աստղերուայ աչխարհում, մի ագրիւրի մօտ հանդիպում է տես, ապիտակ եև կարմիր խոչերի, որոնք կարող են հերոսին Լոյս Աչխարհ հանել, եթէ նա, քաղ հերքիանուեիան, նատի նախ սեւի վրայ, իսկ տեսը նրան գցի կարմիրի վրայ, կարմիրն էլ՝ ապիտակի։ Մանչի հերոսը չի տիպում եև սկզբից նետում է ապիտակ խոչի վրայ, ոչ պատճառով էլ տես խոչը նրան տանում է Մուքի Աչխարհ։ Աչտեղ հերոսն ընկնում է մի քաղաք, որի ագրիւրի ոսկը վիչապն է փակել։ Նա մարդկանց ջուր է քաց քողնում միայն այն ժամանակ, երբ կոյս են պո-

հարկում իրեն։ Հիրքը հասած է լինում Քաջատոր (կամ ոչխի) ապրիկան։ Հերոսը նրա հետ գնում է Վիշապի մոտ եւ սպանում հրէշին։ Քաջատոր, իր նշած երախտագիտութեան, կամենում է իշխանութիւնը յանձնել նրան։ Հերոսը խնդրում է դրա փոխարէն Լոյս Աչխարհ հանել իրեն։ Քաջատորը յայտնում է, որ դա իր ուժերից վեր է, եւ նրան Լոյս Աչխարհ կարող է հանել միայն անառատում ապրող Արծիւը՝ եթէ հերոսը տապանի ամէն տարի նրա ձագերին խժռող Վիշապին։ Հերոսը դարանակալում եւ սպանում է Վիշապին, կտոր-կտոր է անում նրան եւ գցում ձագերին՝ կերակուր Արծիւին, իր նշած երախտագիտութեան, հերոսին իր թեւերի վրայ հանում է Լոյս Աչխարհ։ Հերոսն աչառող հիւրընկալւում է մի Լոմոյի մօտ։ Գչխին է քաշում նրա ձորքած ոչխարի փորի կաշին եւ քաջարկուհուց՝ քաչայ (ճարպաւ) ձեւանում։ Այնուհետեւ աչակերտ է մտնում մի ոսկերչի մօտ, իսկ ժամանակ անց, թոյլրին բացայայտում իր ով լինելը։ Քաջատոր հայրը գտնում է իր կորած որդուն եւ ամուսնացնում Վիշապի գերութիւնից նրա ազատած քոյրերից կրտսերի հետ։ Ապա գահն ու քաջատորութիւնը ժառանգում է նրան։

Թուրքական հեքիաթների մի մասը սիմէոնային փոքր-ինչ այլ գարգացում է ներկայացնում.- Միրացան, կոչը Քաջատոր հօր աչքին չորանում է, եւ ապէտը վերացնելու միակ ելքը հեռատոր աչխարհից Հաղարան բշրուչին, Ծովինար կամ Ջիռուա դուչին կամ Ղուչ փէրուն բերելն է։ Ղուչը պէտք է երթի՝ որ աչքին կանաչի։ Քաջատորն իր 3 որդիներին պատգամում է ուղեւորուել Թուչնի նոտիչ։ (Կամ որդիները համփայ են բնկնում հօր աչքերի դեղը - կամ հնգիմ - գտնելու)։ Հանդիպում են եռանակ համփարաժանի մօտ կանգնած Հաչեւորի, որը երեք եղբայրներին ցոյց է տալիս երկու՝ վիրաւորած ունեցող եւ մէկ՝ վիրաւորած չունեցող համապարհները։ Կրտսեր եղբայրն ընտրում է այն աչխարհը տանող համապարհը, որտեղից չեն վիրաւորուում։ Լարտեղ նա կրկնում է նոյն այն սխրանքները, որոնք հեքիաթների նախորդ սխեմայում են հանդիպում։ Գտնում է հրաչք Ղուչին եւ վիրաւորուում։ Քանապարհին առած եղբայրները նախանձից կրտսերին չրհոսն են նետում եւ Ղուչն առած, րնդում տան համապարհը։ Կրտսեր եղբայրը փրկում է մի վանականի։ Հոր քաջատորութիւնում նա դպրուած, գտնում է Դեղձանկի աչակերտ։ Ժամանակ անց բացայայտում է իրեն եւ նեկայանում հայր Քաջատորին։ Ղուչը երթում է, Քաջատորի աչքին՝ կանաչում։

Այլ տարբերակում, Ղուչը փերի է։ Հերոսը նրան բերում է հեռատոր աչխարհից։ Փերին մատը կտրում է եւ արիւնը քսում հոր Քաջատորի աչքերին, եւ նրա աչքերը բացւում են։

իրանական «Միմորդ Հաւքի Օգնութիւնէն հեքիաթում պահպանուել են կոչը Քազաւորի 3 որդիների անուններով, որոնցից երկուսն այս կամ այն կերպ առնչւում են Արեւի պաշտօնների. Մալէք (Հրեշտակ)-Ջամշիդ, Մալէք-Քորշիդ եւ Մալէք-Մոհամմադ[16]. Ջամշիդն իրանական հզօր տոհմերազրեան շրջանի հերոսն է՝ Տրանսոսոնեցի պաշտր, որ մարդկանց մէջ մշակութային գործունէութիւնն էր ծաւալում։ Աւեստական Ջիման է՝ մարդկութեան նախահայրը՝ հին պարսկական Ժամանակ, որի անունը առասպանում է, իրրեւ երկուորեակ։ Մագան է համարւում հնդիրանական եւ հնդեւրոպական միասնութեան ժամանակներից եկած երկուորեակների՝ Արեւի զաւակների առասպելից նրա հայրն Արեւ Վիւաղանան է, որ համապատասխանում է վեդայական Վիւասատին։ Տարբեր առասպելներում Ջիմային տրոցիով սպանում է քար որուց դրդուած հարազատ եղբայրը նա ամանգարան կարդուած է համարւում կրակի, հետեւարար՝ նաեւ Արեւի հետ[17]։

Երկրորդ եղբայր Քորշիդն արդէն ուղղակիորէն նախագրադաշտական իրանի Hvare Արեւ աստուածն է, որը հանգամանում է Միհր-Արեւի դէմ, ապա դառնում նրա դաշնակիցը։ Այս Քորշիդի մէջ է քանաէր կարապետ Մելիք-Օհանջանեանը տեսել Մասհաչ Մոհը էպոսի Քոր Մահուխի կերպարը[18], ինչպէս է. դարի մատենագիր, աստղագէտ եւ տոմարագէտ Անանիա Շիրակացու հաղորդած տեղեկութիւններից է երեւում, պարսիկները մինչեւ է. դարը չէին դադարել Արեգակին երկրորդ կոչել[19]։

Ինչ վիճակներում է Մալէք-Մոհամմադին, ապա նրա անունը հեքիաթում իր վրայ կրում է ոչ շրջանի մահմեդական իրանի կրօնական զգացողութեան կնիքը։ Հին պարսկական դիցաբանական բարդութիւններում նրա նախակերպարը նոյնքան առասպելին եղանակութեան պէտք է ունեցած լինէր, որքան Մոհամմէդ մարգարէն է մահմեդական կրօնի համար։ Հեքիաթային Մալէք-Մոհամմադը, որի անունը երեւան է գալիս իրանական այլ հեքիաթներում եւս (Ամարգարոի Տերեւը, Վերգաթ Մալէք-Մոհամմադը[20] եւն.), կոչը Քազաւորի այն փառաւորած որդին է, որը նոյն արկածներին է հանդիպում, ինչ Հայկական հեքիաթների Ոչխ Հերոսը՝ կուրացած հոր աչքերի բարեւատուր գոնելու համապարհին։ Հայկական հեքիաթներում էլ անհնար է չնկատել նրա արեւային բնաւորիչները։ «Ուշ Փայրիկ հեքիաթում նա գնացին ընկած մի փետուր է տեսնում, որն ասիպէս է լոյս տալիս, կարծես՝ ամբ արեւ երկնքում ա, մի արեւ էլ գետնին ա։ Վերցնում է փափախածալի մէջ ու ինքն էլ Արեւի նման լոյս տալիս։ Երբ հասնում է Քազաւորի քաղաքին, լուր են

հաղնում, թէ՝ էմի տղայ ա պայի, մի տրեւ երկնքումն ա, մին էլ դրա փափախաձյումն ա։ Նրան տանում են պալատ, եւ թագաւորը հարցնում է. «Էվէ տղայ, ի՞նչ տղայ ես։ Քո ի՞նչ տրեւ ա փափախաձյմովդ»։

Ուշագրաւ է, որ մանիքէական ուսմունքում, որը մեծ մասամբ քրիստոնէութեան եւ պրուանականութեան խառնուրդ է համարւում, յիշատակւում է Երկրորդ Առաքեալը, որին վերապահուած է աւարտին հաղնել յոյսի կորուսեալ նիմքի փրկութիւնը։ Նա համարւում է Արեւի աստուած, ում պահպանիչներ անուանում են Միհր-Ծապդ, իսկ տղոց՝ Միշէ (Միհիրա)։ Լոյսը, որի մարմնաւորումներից մէկն Օրմիզդն է (Յրմիզդը)՝ առաջին մարդը, պարտուել եւ կորել է Մուք Աչխարհում։ Այդ աշխարհի դեմքի դէմ է անվճեռ կռուի նետում Կեանքի Ոգին՝ Միհր-Ծապդը։ Դեմքերը պատրաստում են, իսկ նրանց մարմիններից արարում է աշխարհն ու Տիեզերքը[21]։

Երկար եղրագրերի առաջադրմի մասին ազատ քչատակութիւններ կան նաեւ Հնդարիական Մարհարհապատում էպոսում, ուր խոսում է Շրդ եղբօր՝ Տրիտայի մասին, որին եղրագրերը պատճառաբար քրհոդն են պցել[22]։ Ցաւոտ ուչադրութեան են արժանի իրանական ժողովուրդների սկիզբների նպատի մասին Հիրոդոտոսից առանդուած երկու առասպելները, որոնցից մէկը պատմել են իրենք՝ սկիզբները, միւսը՝ յոյները։ Սկիզբական առաջնի բովանդակութիւնը հետեւեալն է.- Սկիզբների երկրի առաջին բնակիչը Տարպիտասն էր, որն ունէր Լիպոքսայիս, Արպոքսայիս եւ Կոլոքսայիս անուններով որդիներ։ Նրանց իշխանութեան ժամանակ երկնքից չորս առարկաներ մեզը ընկան՝ յուծ, արօր, սանուր (երկաթէի տապար) եւ պատիճ։ Ամէն եղրագրերը փորձեցին վերցնել, բայց դրանք սկսեցին վառուել։ Երրորդից վերցնել միայն կրցաւ արդէն՝ Կոլոքսայիսին, ում պատճառով էլ առաջ եղրագրերը Համարձակներին, որ թագաւորական իշխանութիւնը պատկանի նրան։ Սկիզբ ժողովուրդն առաջացել է Տարպիտասի այս երեք որդիներից։ Նրանցից քիստ սկիզբական բոլոր թագաւորները երկնքից ընկած առարկաները պահպանում են որպէս սրբութիւն։ Նրանք հաստատում են, որ առնախմբութեան ժամանակ ով այդ առարկաները հետն ունենալով քնի լաց երկնքի տակ՝ տարին չի բոլորի[23]։

Այս սխեմէում քառում է, թէ երկնքից ընկած և վառուող առարկաները երկնային յատատուններ պէտք է խորհրդանշած լինէին։ Միւս կողմից էլ յիշեցնում են հայկական հեքիաթների առանձական վերյատանները, երբ առում է, թէ երկնքից 3 խնձոր ընկաւ, մէկը հեքիաթը հետորդին, մէկը՝

պատմողին, միևնույն էլ՝ յոգին։ Երեք եղբայրների հերթաբեկների ոճով մոտիվներն են քշտցնում հերոսի՝ պիչերը չքնելը եւ առարկաները (խրնձոցները) պահպանելը, եղբայրների ոտքին եղած գժուար յուծիչի խնդրի (առնում է կէպքում վատուող առարկաները վերցնելու) իրագործումը ձիչա է։ Հերոսուհուց չի ատում, քէ եղբայրների հագցն է յանձնարարել յուծել խնդիրը, սակայն յանձնարարությեան մասին հաղորդում է առաստիչի յուշական տարբերակում։ Այստեղ Տարդիատոսին փոխարինում է գալիս Հերակլէսը, որը քոտոգրում Սկիւթիա կոչուած մի անբնակ երկրում Եամփորդելիս, ցրտի պատճառով իր վրայ է քաշում ոսիների մորթին եւ գնում է։ Այդ ժամանակ նրա կատղի ձիերն անհետանում են։ Հերակլէսը գրանք յայտնաբերում է քարայրում բնակուող մի կնոջ մոտ, որի հետ կենակցում է եւ երանից սատնում ձիերը։ Կիներ յայտնում է, քէ Հերակլէսը 3 որդի է ունենալու, իսկ վերջինս պատգամում է նրան, որ որդիներին յանձնարարի ձգել իր տեղն ու կապել գոտին այնպէս, ինչպէս ինքն է անում։ Երանցից ով կարողանայ կատարել յանձնարարությիւնը, նա էլ կը դառնայ այդ երկրի բնակիչը։ Ժամանակ անց, Հերակլէսի որդիներից միայն կրտսերին՝ Սկիւթէսին է յաջողում կատարել հոր յանձնարարությիւնը։ Երանից են ծագում Սկիւթիայի թագաւորները[34]։

Սկիւթների ծագման մասին երկու առասպելում էլ, ինչպէս 3 եղբայրների հետքերում Հերթաբեկներում, գժուար յուծիչի իրագործման գրաւականը քագաւոր դառնալն է։ Քէեւ առասպելում կիսաստուածային ծագում ունեցող եղբայրների՝ կրտսերի նկատմամբ ունեցած քէշամանքի վերաբերեալ, այնուամենայնիւ, այդ մոտիւը երեւան է գալիս յարակից տարրերից։ Սկիւթական պեղածոյ իրերում ոչ մէկ անգամ հանդիպում է 2 մարտիկի՝ նրդի դէմ մղուող կռուի տեսարանը, ուր նրդ մարտիկը պատուում է, ինչպէս իրանական Տրախատոնա Հերոսի 3 գաւակներից ամագները են ապանում իրենց կրտսեր եղբօրը իսկ սկիւթական նրդ եղբօր՝ ամագ եղբայրներից ապանելու պատմութիւնն ուղղակիօրէն վկայուած է Հռոմէացի Հեղինակ Վալերիա Յրակկոսի Վրոնաւտոնիա պոէմից[35]։

***

Բանագիտութիւնան մէջ ընդունուած է, որ Արեւի եռակի պրսեորումները բնորոշ են Միհրի արեւմտեան պաշտամունքին։ Միհրը բարձրագանգակներում եւ որմնագանգակներում երեւան է գալիս երկու ջահակիր այլ Միհրների՝ Cautes եւ Cautopates մականուններով մէկտեղում։ Երանցից մէկն՝ իր վեր պարզած ջահով խորհրդանշում է արեւադարձը, միւսը՝

վաքր իջնցրած չարենց՝ արեւամուտը, կամ մեկը՝ պարեհամուտը, միւսը՝ ժամհամուտը[37]։ Հռոմէական հարիւրքանդակնեռում Միհրն ուղղակիորէն կոչուում է որպէս Արեգակ[38]։

Երեք Միհրների մասին պատկերացումը, ինչուս, պրեսորուած է նոյն նաեւ միհրապաշտական ծէսերում։ Միհր-Արեւին երկրպագողները նրան ազօթում էին օրական երեք անգամ՝ առաւօտեան, կէսօրին եւ երեկոյեան։ Բանասէր Երուանդ Տէր-Միքայէլեանն այս առանձնայն արդարացիորէն համեմատել է քրիստոնեակաների՝ առաւօտեան, կէսօրուայ եւ երեկոյեան ժամերգութիւնների հետ[39]։ Միհրին պաշտամունք մատուցելու այս ձեւը համընկնում է ՀԴ.-ՀԲ. դարերի մատենագիր Մխիթար Ապարանեցուց մեզ հասած՝ միջնադարեան հայ արեւապաշտների մասին այն հաղորդմանը, թէ նրանք Արեգակին երկրպագում էին համապատասխանաբար այն կողմում, ուր տեղի էր ունենում նրա յարութիւնը[40]։ Ուստի, ըստ այդ կողմերի էլ, այսինքն՝ ըստ Արեւի ունեցած դիրքի, երկնային լուսատուն պէտք է որ առանձին ատաւուածութիւն ընկալուած լինէր։

«Երեքը քիւն, առհասարակ, քաբախակի գործածուած նիք տեսնում նաեւ. 3 հղրաչքներին նուիրուած հիքիաթաչարում՝ քաղաւորի 3 որդի, հոնակ Համիպատժեան, 3 քոյր, նրանց առնւանդած 3 վիշապ եւն։ Հայկական «Մագկան Բաղչեան հիքիաթում քոյրերն այդպէս են նկարագրուում.-

Կարմիր Աչխարհի տէր Վիշապը մի գիւղ ու լուսամուտ չունեցող տաժարաքիւում գիրան է պահում էլդիքնական էլ խիղ վառ (արեգակից աւելի վառն ապրկաց՝ առաց քրոջը։ Մեւ Աչխարհի տէր Վիշապի տամարաքիւում տեսնցը մեծ պրլրուած (բոլորած) լուսնիկաց միքնիկ քոյրն է։ Սպիտակ Աչխարհի տէր Վիշապը գերել է մեծ չար գաչանիգ (տիրուն) տեսնիգ, արեւին լուսան էլ խիղ լուս տալուդ կրտսեր քրոջը «Քաչանչրեն կուռնի (փոքր) տղոչան ապահում է վիշապներին եւ ազատում ապրիկներին։

Մեզ տեսանելի աստղային երկնքում չկայ մի այնպիսի լուսատու, որ համեմատելի լինի Արեգակի հետ։ Միակը Լուսինն է, որի հետ էլ զուգորդում են քոյրերը հայկական հեքիաթներում։ Երանք լուսնային բնութագիր ունեն նաեւ իրանական վիպերգ Հաւքի Օգնութիւնը հեքիաթում. առաջին քոյրը «Ջահել Լուսին է», երկրորդը՝ «Լիալուսինը», երրորդն՝ «Ջոր գեղեցկութեամբ խամրեցնում է միւս երկու գեղեցկուհիներին»։

Լուսնի հոգին Հիպոտասներն են նաև յունական դիցաբանությունից։ Ջեուսն իր սիրուհի Իոյին կնոջ՝ Հերայի ցասումից փրկելու համար դարձնում է սպիտակ կով եւ յանձնում Հերիբոյացիների Արգոսի՝ աստղագարդ երկնքի պահապանությանը։ Սակայն Հերայի ուղարկած բոռն Իոյին սկսում է հալածել աշխարհով մեկ։ Այդ հալածանքների բերքատուն իոն սպիտակ կովից վիրածնում է նախ մանուշակագոյն-կարմիր կովի, յետոյ՝ սեւին գաստիրում է, որ Արգոսի սրտցաւ թնակիր ժամանակին հեռացրել էր Իոպտյոս քաղաքը եւ իր գաւառ անունն էլ դրել իո՝ ի պատիւ Իո-Լուսնի, որին պաշտում էին Արգոսում։ Ի. Գրէյսան Իո-կովի երեք գոյները համարել է Լուսնի երեք հիմնական փուլերի գրանդրումները՝ աճող եւ նուազող երկու կիսալուսնի եւ Լիալուսնի տեսքով[10]։

Նոյն այդ երեք գոյները հանդիպում են նաեւ հայկական վիշապական բաղձանք հեքիաթում, սակայն գրանք վերագրուած են վիշապների երեք աչխատասիրներին։ Ամենահասկան Քեռոյրը հեքիաթում առաջին վիշապն ունի 7 գլուխ, երկրորդը՝ 12, իսկ երրորդը՝ 24։ Գլուխների ընդհանուր քանակը 43 է։ Ալս թիւը չի խախտում նաեւ ամենակէտ Քեռոյրը հեքիաթում, որտեղ թէեւ առաջինը 7 գլուխ ունի, երկրը՝ 40, սակայն վերջին երրին, աչխատասիրին, 43 գլուխ է վերագրւում։ Ուրեմն, այդ 3 վիշապի ընդամէնը մէկ վիշապ են, եւ քանի որ Լուսինը հեքիաթում 3 դրսեւորմամբ է երեւան գալիս, ուստի, վիշապն էլ օրինաչափօրէն ունում է։

Հայկական հեքիաթներում, որպէս կանոն, քոչերին առնւանգած վիշապները գլուխները դրել են երանց ծնկներին եւ քնել, իսկ դա հին աստղագիտական լուծանումներով նչանակում է, որ վիշապի գլուխն ու Լուսինը ժամանցել են իրար, եւ Լուսնի խաւարում կարող է տեղի ունենալ կամ խաւարումն արդէն կատարուած փաստ է եւ, քանի հեքիաթի սիժէտի, Յորդ Հերոս Արեւը սպանում է վիշապին ու ազատում աղջիկներին։ Իրականում խաւարումները տեղի են ունենում Լուսնի ուղեծրի եւ Քաւարածրի (արեւի երեւակայական ուղու) հատման կէտերում, որոնք ժամանակակից աստղագիտութիւնը էքլիպտիկաներ է անուանում։ Միջնդեւ հնում կարծում էին, թէ էքլիպտիկաներում վիշապն է քնակում, որը կուլ է տալիս Լուսնին կամ Արեւին[11]։

Հայերը Լուսնի էհանգրդներն անուանում էին վիշապի գլուխ կամ վիշապի աուտ։ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 2000 ձեռագրում, որն այդպիսի էհանգրդներին որոշման տրիւտակ է (էքսլորատիւ), ժամանակի սկատատակը պարզուած 2 վիճիսարի վիշապ է պատ-

կերտուած։ Ակաւառակի ներսում անգին աչքով տեսանելի 7 մոլորակներն են դասաւորուած, այդ թուում՝ Արեւն ու Լուսինը։ Վիշապները իրենց հերթին չորսապատել են կենդանակերպի գօտու 12 աստեղատուները՝ հնգաթեքի նման մի համարաքիմներդը, որոնցում վիշապները ժամանակ առ ժամանակ կարող են քանուսուած պահել 3 քոչերին (Լուսնին)։ Վիշապներից մէկի պլուխն ուղիղ Լուսնի մատ է գտնուում[28]։

Հիմքեր կան կարծելու, որ Վիշապի՝ ագիլկ առնանգելու հնգաթեքին-առասպելական մոտիւը նաեւ Լուսնի փուլերի հետ կապուած օրացուցային հասկացութիւններ է ներառել։ Մաշտոցի անուան Մատենադարանի ձեռագրերից երեւում է, որ հայոց մէջ ընդունուած է եղել յունաբին, արեգէս կոչուած՝ տասնօրեակներ մէկ ամիսը՝ նորա(Լիա)լուսնից մինչեւ Նորա(Լիա)լուսին ընկած ժամանակահատուածը հաշուել 29,5 օրով (օրացուցայինը՝ 30)։ Այս քիչը և անգամ կարելի է բաժանել 7 մասի, ինչից էլ առաջացել է շաբաթուայ (7 օր) գաղափարը։ Մոտաւորապէս 1,5 օրուայ մեացորդը համարուել է այն ժամանակահատուածը, երբ Լուսինն անհետանում է երկնակամարից։ Այսինքն՝ դա տեղի է ունենում սինոդական ամսուայ 29րդ եւ օրացուցային ամսուայ 30րդ օրուայ կէսին ընդհատում[29]։

Մատենադարանի թիւ 7028 ձեռագրում տրուած են Լուսնի անունն եւ նուագման օրերին համապատասխանող 8 փուլերի անուններ, որոնք գործածական են եղել Հին եւ Միջնադարեան Հայաստանում[30]։ Դրանցից 6-7 եւ 11-12 օրական լուսիններդը բաժին են ընկնում աւագ կիսալուսնին (Ընկերակուր առաջինը, երբ Լուսինը 2 կողմ է ցիներում) եւ Վիսալուսնին փուլերին։ 14-15 օրական Լուսնի փուլը կոչւում է Ամողջակալուսին, ինչը ժամանակակից բարբառներում, Վիսալուսնի փուլն է։ Այնինչ, երեւում հնարաւոր են, թէ Վիսալուսնի դէպքում Լուսինը 11-12 օրական է[31]։

Եթէ վերլուծենք 7 եւ 12 գլխանի վիշապներին եւ նրանց գլխատած Երզ Հերոսի հնգաթեքային միջադէպը, ապա կը տեսնենք, որ այդ վիշապների առնանգած ագիլիններից մէկը համապատասխանում է 7 օրական կիսալուսնին, մինչ՝ 12 օրական Վիսալուսնին, ինչպիսին եւ նրանք տոմարական նկարագրում են հնգաթեքներում։ Մանաւանդ այս դէպքում բաց է մնում 24 գլխանի Վիշապի եւ Երզ առնանգուած ագիլիկ խնդիրը, քանի որ ձեռագրում Լուսնի փուլերը մատնանշող ագիլասակը կազմուած է տասն սինոդական կէս ամսուայ համար, եւ մեզ չարտնի չէ, թէ ինչ առնուն է կրել Լուսնի 24-օրական փուլը։ Դրա փոխարէն, գիտենք, որ հա-

յոց օրանուններում (որոնք գուցե յուրաքանչյուր նրեւույթի են, քանի որ ամիս են ձեւաւորում) 24րդ օրը Լուսնակն է կոչւում[36]. Երբ չորեքնեք Լուսնի վանդակաչուքնեն փուչը (որտեղից ձեռագրում, ըստ Էության, Լուսնի ընդհատումը՝ մաշումն է սկսւում) եւ 24 թիւը առանալու համար 12 օրական ընթացքին փուչին ուշացնենք եւս 12 օր, ապա Լուսնի փուչերի սիմետրիկ դասաւորութիւնը կը վերաշառնանք ոչիւսակի առաջին՝ ընդհանրութիւնն կոչուած փուչին, երբ Լուսինն ուղեկցում է Արեգակին, այսինքն՝ երկնակամար է դուրս գալիս նրա հետ միասին։ Հետեւում այս մասին ասւում է, որ 3րդ հերոսը (Աթեւը) 3րդ՝ 24 գիշերի վերջապին գիշատչութեան յետոյ 3 քաղքերին էլ (Լուսնին) էրթ Աչխարհ հանեց։ Մէկ օրուանից սկսած, Լուսինը եւս 4 օր պէտք է երեւար Երթ Աչխարհում եւ 28րդ օրուանից սկսած, ուղիղ 1,5 օր կրկին լիովին անհետանար տեսադաշտից։ Հաւանաբար, այս երեւոյթն էլ իր հերթին, հետեւում ընկալուել է որպէս Լուսնի առեւանգում Վիշապից։

Երեք եղբայրներին նուիրուած վրացական էպոս Քաջիսա Հեքիաթում թագաւոր հայրն իր 3 աղջիկներին, որոնք Արեւի երես չէին տեսել, ասում է. «Գնացէք, Արեւի երես տեսէք»։ Երբ աղջիկները կատարում են հօր կամքը, երանց փախցնում է Վիշապը (այսինքն՝ Լուսինը ծագում է որը ցերեկով, այնուհետեւ անհետանում երկնքից)։ Երեք եղբայրները գնում են 3 քաղքերին փնտրելու[37]. Հայկական էպիկական Ասդղիկ Բոյիկ բաշուն եւ Քին Մաշինու քաղաւորի Ախչկանց հեքիաթում[38] քաղաւորի 3րդ որդին ազատում է Քին Մաշինի քաղաւորի աղջկան, որին վիշապը փախցրել էր, երբ նա պրոսակքի էր գնում նկնլ։ Իսկ Մատենադարանի ՔԽ. 3965 ձեռագրում «Քին Մաշինն է կոչւում այն վայրը, որտեղ Արեգակն է ծագում[39]։

«Լուսինն բառն, առհասարակ, հնդեւրոպական բազմաթիւ լեզուներում համարժէք է ժամանակի միաւորներից ամսին, որը բացկացած է օրերից (ժամերից) եւ շաբաթներից։ Ամիսներն իրենց հերթին տարի են ձեւաւորում։ Հնդեւրոպական նախաձեւն է *mēnōt, որի ժառանգներից են համարւում սանսկրիտ լեզուի mās (Լուսին, ամիս), պարսկերէն māh, ռուսերէն mesjac'[40] եւն։ Արմատն է՝ mē-«չափել»։ Հնդեւրոպական նախալեզուի ամիսները սկզբում յուրաքանչիւր եղել, այդ պատճառով էլ համահունչ են բնորոշել «Լուսինն եւ ամիսն բառերը։ Քնում Լուսնի համար առանձին բառ է հնարուել։ Հնդեւրոպական նախալեզուն արդէն տարբերում է միայն ամիսն բառը՝ ու նախաձայներն յաւելեամբ[41]։

Վիշապը փախցրել է Լուսինին։ Դա նշանակում է, որ նա անմիջականորեն սպառնացել է ժամանակային միաւորներին եւ մարդկանց զրկել յոթ ու հաշուարկ կատարելու հնարաւորութիւնից։ Նրա 7, 12 եւ 24 պատիկները պէտք է բերուեն յիշեն նախ 7 օրերի (շաբաթ), 12 ամիսների (տարի) եւ 24 ժամերի (օր) տեսակէտից։

Վիշապը զոհացել է նախ Քաղաւորի հրաշք աչքս. ծառի ոսկէ խնձորները, իսկ ծառը հայկական ժողովրդական հաւնչուկներում յաճախ տարուայ խորհրդանիշն է, որն ունի 12 ճիւղ (ամիս), ամէն ճիւղին՝ 30 տերեւ (օր)՝ մէկը՝ արեւ, միւսը՝ ապրուստ յաջորդականութեամբ (պիշեր, ցերեկ)։ Բնականչական է, որ Ծորչալուից եւ Ամլամատից յաջանի հանիւսիում 30 օրերը համեմատւում են խնձորների հետ. «Մի ծառ կայ՝ 12 ճիւղ ունի, ամէն ճիւղին էլ՝ 30 խնձոր, ամէն խնձորի կէսը սեւ ա, կէսը՝ սպիտակ»[41]. Ուրեմն, խնձորները ծառի վրայ՝ նշանակել են կարգաւորուած օրացոյց եւ կարգաւորուած կեանք Տիեզերքում, որին սպառնում է Վիշապը՝ գողանալու պատճառները եւ ձգտելու ամէն ինչ վերածել ժամանակ ու քաոսի։ Ուրեմն, այդ ծառը կենաց ծառն է, որի մէջ Քաղաւորը նոյնպէս պէտք է կապ ունենայ ժամանակի հետ[42]։

Հին աշխարհի աստղագուշակութիւնը ժամանակի աստուած էր համարում Սատուրն մոլորակին, որին յոյները անուանում էին Քրոնոս, բաբելացիները՝ Կայմանու, իրանցիները՝ Քայսան (Կայմանու անունից) կամ Զրուան։ Վերջինս յաջանի էր նաեւ Տիխէ կամ Բախտ՝ համապատասխանում է Սատուրնի հին եգիպտական Շեհեհսիսի (մրջիւն, փոխաւուցման, այլինքն՝ ճակատագրի աստծոյ) ստոյգ անուանը[43]։ Զրուանին Բախ(կ)ու անուանով է յիշում նաեւ Ե. դարի մատենագիր Եզնիկ Կողբացին. «Զրուան ոմն անուն էր, որ բարգմանի բախտ կամ փառք»[44]։ Պահլաւական ադբիւրներում այդ աստծոյ մասին ասւում է. «Այս աշխարհում տեղի ունեցող ամէն ինչ կատարում է բախտի, ժամանակի եւ ինքն իրեն գոյացնող Զրուանի՝ բազաւորի եւ ճշմարիտ տիրոջ անխախտ կամքի շնորհիւ, քանզի ամէնքի հետ հարկ եղած ժամանակ կատարում է այն, ինչ անխուսափելիօրէն պէտք է կատարուի»[45]։ Մանիքէական ադբիւրները եւս իրենց Վերափոխ. Հոգը՝ Լոյս Աշխարհի քաղաւորին Զրուա էին անուանում[46]։

Իրանցիները Զրուանին, յոյների Քրոնոսի նման, ծերացած աստուած էին պատկերացնում[47], ինչպիսին Հայ աստղաբաշխութեան մէջ (ըստ Միքայել Եւ Դեւ Գրիգորեանց հնչիւնափոխ) ծուկ-ժամանակն է

այնուր ծերուն, որ նստած է քոռան կատարին եւ հերթով կենդում է սեւ ու սպիտակ քնչերի կնիկները՝ պիչերն ու ջրենկը[48]։ Այդ կնիկները, մասնագէտների ազգարարի հաւատամքով, արտաքսուել են Մանահինից յաջորդաբերուած բռունգէ գործի գաղտ-գրացոյցի վրայ՝ կնիկ-պարոյրների տեսքով։ Դրանց քիւը 238 է՝ 118 կէսի հետ միասին։ Քուհերի գումարը կազմում է 356, որը յունական տարուայ պարունակած օրերի քանակն է (11 օրով պակաս արեւագարձային տարուց)[49]։

Ուրեմն, այս ժուկ-ժամանակ ստուգութը ոչ միայն Տիեզերքի երկու հակառակայ երեւոյթների՝ լոյսի եւ խաւարի յաջորդականութեան, այլեւ օրացոյցի կարգը սահմանողն ու պահպանողն է։ Այդ նրա ազգու կենաց նաւի որ-խնճորկեան է գոգանում վիշապը՝ ձգտելով քաշքշել օրացոյցը եւ խաթարել կեանքի ընթացքը։ Նրանից է կախուած օրացոյցի բախտն ու հանգստագիրը, այդ պատճառով էլ որդիներին պատգամում է պատուհասել վիշապին եւ փրկել Մառը Հնգիսթներում նա ոչ միայն ծեր քաղաւոր է, այլեւ՝ կոյր։ Եւ սա էլ հարազատ է ժողովրդական մտածողութեանը, քանի որ ժողովուրդը քախտն ու ճակատագիրը միշտ էլ կոյր է պատկերացնում։

Հնգիսթում Պտոխ Միրզան, երբ տեսնում է, որ ժուկ-ժամանակի սեւ քնչի կնիկն արդէն կենդուխլու վրայ է (ապրինքն՝ չուտով ջրենկն է քաղցրգնում), խլում է ձեռքից եւ գլորում տարի տակ։ «Դէհ նոր կենդէ,- ասում է,- մոզ պիչերն էրկննայ, ես չատ բան ունեմ»[50]։ Միրզայի գործերը պիչերն են տեղի ունենում, ինչպէս Ձ եղբայրների հնգիսթներում Ձրդ եղբօր արկածներն են Մուխ Աչխարհում կատարւում։ Այս պրուապն առանգուած է նաեւ Վիկեան Քաջաւերդն Հնգիսթից, ուր Պտոխ Միրզան ոչ պատահականօրէն, Քաջաւորի կրտսեր (Ձրդ) որդին է։

Միրզայն, ըստ էութեան, Միհր-Արեւի քետագայում ծածկագրուած անունն է, որ երեւան է գալիս հայկական Միրզա Մահմուդ եւ Ջամպոլ, դրան յաջորդ Միրզա Մահմուդ վիրնագրերով երկու այլ հնգիսթում նոս[51], ինչպէս նաեւ իրանական Միրզա Մասոս Քուհար եւ Քիւրդի Մեհրնեգարդ (Միրզա՝ Գրագիր Հաղրան եւ Միհրի պատկերով Օրմուզդ) հնգիսթում[52], ուր Միրզան ցեղակուռ Արեւն է, իսկ Քիւրդի Մեհրնեգարդը՝ պիչերուսյ Լուսինը։

Ո՞ր ըտեղից են սկսում եւ առասպելական ի՞նչ վայրում են տեղի ունենում Ձրդ հերոսի արկածները։ Հայկական Մոզական Բազմանդ հնգիսթում նա ելած (ոսկի) բուլբուլիկ հառնից ուղեւորւում է այն

Մելիք-Ադամեանը ձեղադրուել է Երեւում, որ 1924 թ. գերմանական կառոյիկ (իմա՝ աւետարանական – Ք.Ա.) խրնամեան հատատագիրների համայնքի դեկավարի առաջարկութեամբ գլխաւորել է կառոյիկ հատատագիրների համայնքը եւ տարել է կոնտրեւոլիցիոն աշխատանք, որի համար Գերմանիայից ստացել է վարիւտա: 1928 թ. լրտեսութեան ձեղադրանքով բանտարկուել եւ դատապարտուել է: Ազատազրկոյից վերադառնալուց շարունակել է տանել հակասովետական աշխատանք:

Բողոքը բերել է նոտեսկի որոշումը բեկանելու եւ գործը կարճելու առումով - յանգակազմի բացակայութեան պատճառաբանութեամբ. -

Դատական կոլեգիան, լսելով զեկուցումը, ծանօթանալով գործի տուեալներին եւ դատախազի եզրակացութեանը բողոքը պաշտպանելու մասին, գտաւ, որ պէտք է համաձայնուել բերուած բողոքի հետ հետեւեալ հիմունքներով.

Գործի ճախաքննութեամբ բոլոր է տրուած քր[էական] դատ[ախարութեան] օր[էնագրքի] նորմաների կոպիտ խախտում, ցրեանում, որ Մելիք-Ադամեանը կալանաւորուել է առանց սանկցիայի, ձեղադրանք չի առաջադրուել, չի կատարուած քր[էական] դատ[ավարութեան] օր[էնագրքի] 198 յ[օդուածի] պահանջները:

Մելիք-Ադամեանին կալանաւորելու եւ դատապարտելու համար հիմք են հանդիսացել 1937 թ. օպերատիւ նիւթերը, 1928 թ. ձեղադրական եզրակացութեան պատճէնները եւ վկաներ Գալոյեանի, Գեորգեանի եւ Բաղալեանի ցուցմունքները: Վկայ Յ. Մ. Բաղալեանի ցուցմունքը, որով ձերկացում է Մելիք-Ադամեանը հակասովետական աշխատանք տանելու մէջ, կեղծիքտ չի եւ հաւատ չի ձեղչում, քանի որ նա 1940 թ. ՆԳԺԿ գիմուորական տրիբունալի կողմից դատապարտուել է օդազրկի ազատազրկութեան տալու, գրպարտութեան եւ պրովոկացիայի համար:

Ինչպես երևում է գործի առնչակներից, գործի քննության մասնակցել են Լենինական քաղաքի բաժանմունքի աշխատակիցներ՝ Ս. Սալոյանցը, Շիգիկը, մեղադրական եզրակացությունը հաստատել է նույն բաժանմունքի պետի տեղակալ Խ. Ա. Բաբայանցը, որոնք մի շարք գործերով կեղծիքներ կատարելու համար դատապարտուել են: Նման պայմաններում, Մելիք-Ադամեանի որոշ հարցերի չոր իրականացման բացատրություններն կասկածանք են առաջացնում:

Մելիք-Ադամեանի 1928 թ. լրտեսության համար դատուած լինելը իր հաստատումը չի գտել: ՀՍՍՌ կենտրոնական արխիւի նիւթերով Մելիք-Ադամեանը որպես լրտես չի անցնում (հակառակը՝ ճանաչուում - Ք.Ա.): Գործի լրացուցիչ ստուգման ժամանակ վերաբարգաքննուել է վկայ Մ. Գ. Գալոյեանցը, որը հաստատել է (տանատորիայում ունեցած զրոյցի ժամանակ մեղադրեալի արտայայտութիւնը Տիգկու մասին): Իր ցուցմունքը, սակայն Մելիք-Ադամեանի արտայայտութեան մէջ կոնտրռեւոլիւցիոն յանցանքի հատկացողութիւն չի պարունակում:

Հարցաքննուած մոր վկաներ Վ. Ա. Աեսիսեանը, Մ. Մ. Մարգարեանը, Գ. Ա. Գրիգորեանը եւ ուրիշները, որոնք Մելիք-Ադամեանին ճանաչում են համատեղ աշխատանքից, ցուցմունք են տուել, որ նա հակասովետական գործունէութեամբ չի զբաղուել, ու [երան] բնութագրել են որպես բարեխիղճ աշխատող:

Այսպիսով գործի առնչակներով Մելիք-Ադամեանին առաջադրուած մեղադրանքն անհիմն պէտք է համարել:

Վերոգրեալների հիման վրայ, եւ ղեկավարուելով քր[եական] դատ[ավարութեան] օր[էնսգրքի] 393 յ[օդուածի] առաջ կէտով, դատական կոլեգիան՝

ՈՐՈՇԵՑ

Համաձայնուել ՀՍՍՌ դատախազի տեղակալի բողոքի հետ ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակի 3/10-1937 թ. որոշումը, ըստ մեղադրանքի ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ ՌԱՖԱՅԷԼ ԿԱՐԱՊԵՏԻ ԲԵԿՄԱՆԵԼ, եւ գործը կարճել յանցակազմի բացակայութեան պատճառով:

Նախագահ՝ Լ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Անդամներ՝ ԽԱՉՆԱՍՏՐԵԱՆ, ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ

ԿԱՏ[ԱՐՈՒԹՅՈՒՆ] ԽՈՒՐՇՈՒԴԵԱՆ
թիւ 1221 ՀՀ. 12/12-1957 թ. (թ. 67-68)

* *

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԾՈՒԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՅՈՒՆԴ, Գործ 4291

Ընդհանուր քննչական ֆոնդ, գործ թիւ 7293 (Պահել ընդմիշտ) (օրս.)
Տղայան-Քաջոս Գրիգորեւիչ Մանուկեանի եւ
Երիցեմ Աճդահասալիչ Մկրտչեանի
վերաբերեալ յարուցուած մեղադրանքի շուրջ (1 հատորով գործ)

երկուսը խուզարկուել եւ բանտարկուել են 1938 Մարտի 5ին:
Մանուկեան Տղայան (Քաջոս) Գրիգորեւիչ – ծնու[ած] 1875ին, էջմիածնի (հիմ՝ Վաղարշապատ – Ք.Ա.) շրջ[ան], Սամադար գ[իւղ], երեւանի բնակիչ, բանուոր, նախկինում ժամանակաւորապէս չի աշխատում: 1897-1900 ծառայել է Կարսի բանակում որպէս կրտսեր նշանաւոր: 1931ին Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ կողմից ձերբակալուել է որպէս կրօնական, ունի կին, մէկ աղջիկ:
Մկրտչեան Երիցեմ Աճդահասալիչ – ծնու[ած] 1893ին Վաղարշապատի շրջ[ան], Վաղարշապատ գ[իւղ], երեւանի բնակիչ, մասնագիտ[ութեամբ]՝ ուսուցիչ, աշխատում է երջարշինում՝ տնտեսագէտ, գիշերային կուրսի դասատուհի: 1915-1916 Ցար[ական] բանակում գրագիր: Հալածանքների չի ենթարկուել: Ունի կին, 4 երեխայ:

Մանուկեան Տղայանի հարցաքննութեան արձանագրութիւնից, 1938, Մարտի 13
- հռաստովածոլ է, որ 1923ին անդամակցել եւ դեկավարել է կրօնական «էանգելիստների» համայնքը Սամադար գ[իւղում] կրօնական եւ հակասովետական ակտիւ գործունէութեան համար 1931ին ձերբակալուել եւ ազատուել է 5 տարով, սակայն առողջական պատճառով ժամանակից շուտ ազատուել է, մնկնել երեւան, այլ ոչ՝ Սամադար գ[իւղում] քանի որ իր ձերբակալութիւնից յետոյ 1932ին ընտանիքը կուլակաթափ էր արուել, աոգրատուել էր գիւղում չաբեական եւ անշարժ գոյքը: երեւանում կառոցել է տուն եւ շարունակել է փայլել կրօնական աշխատանք երեւանի «Աւետարանականների» համայնքում, քարոզել Աւետարանը, որը ինքը համարում է միակ ճիշտ ուսմունքը: Համայնքի մէջ ներառել է շուրջ 100 մարդու, սակայն իրական անդամները 50 էին, «...որոնց մեծ մասին ինքն է հատաքացրել համայնքի մէջ: «Ես համոզուած եմ իմ հաւատի ճշմարտութեան մէջ: Ամենաբան կրօնը հակադիր է ձեր մարքսիստական ուսմունքին, դրա համար էլ դուք կարող էք համաձայնել այն հակաչեզափոխական արարք: Ինձնից առաջ աւետարանիչ էր Բզնունի Յովհաննէսը, որը, արարքից վերադառնալով, առողջութեան պատճառով (գրկուել էր երկու ոտքից) ոնից դուրս գալ չէր կարող:

Նկատվար խորհրդում են՝
1. Սարգսեան Սարգիս - ՆԳԺԿի կողմից վերջերս ձերբակալուած
2. Մկրտչեան Եփրեմ - ՆԳԺԿի կողմից վերջերս ձերբակալուած
3. Անուռեան Սուրէն - Սարիբաղի բնակիչ
4. Յովհաննիսեան Կարապետ - Նորքի բնակիչ, ԵՊՀի պահակ
5. Տէր-Գալուստեան Երուանդ - դերձակ-մաքրող

Բոլորը նեղբով նյութեր են ունեցել համայնքում, (Ճիւքական- Ք.Ա.) միջոցները հատարում էին Կարապետ Յովհաննիսեանի ձեռքում, 1938ին պաճնապան է բնտրուել Տէր-Գալուստեան Երուանդը: 1926ին համայնքը գրանցուել է, բայց յետագայում այն չեն գրանցել, իսկ տուրք մեզնից չեն պահանջել, դրա համար էլ չենք ճոժել: Ստացում է, որ մենք անլեզալ ենք գործել, բայց մենք ունէինք համապատասխան պետրատում երեսանում:

Այո, ընդունում եմ, որ մեր կրօնը ոչ մի ընդհանուր բան չունի սով[ետական] կարգերի հետ եւ ըստ էության դրանք՝ մեր քարոզներն, հակասովետական են» (թ. 1-2,5ա-բ,6ա-բ,8ա-բ,9-10): (ոռս.)

* * *

Մկրտչեան Եփրեմ Անդրէասեանի հարցաքննութեան արձանագրութիւնը, 1938. Մարտ 18 - գաղտնի բանակում ծառայել է 2 տարի՝ 1915-1916 որպես գնդի գրագիր: Դաշնակցական կառավարութեան ժամանակ եղել է ուսուցիչ Էջմիածնի չորքսի Վաղարշապատ, Սամսոպար, Ֆրանգաձոր գիւղերում: «Երբ դադրոց արձակեց ինձ, ես գնացի կրօնական ուղով՝ խուսափելով զինուորական ծառայութիւնից: Հայրս հատուցեալ ատեստատական էր, ես էլ դարձայ [ատեստատական] 1917 թուից: Մինչեւ 1925 ուսուցիչ էի, 1925-1930՝ վիճակագիր էի Վաղարշապատի ՇԳԿում, 1931ին ինձ հանարեցին կոլակ. կոլակտարի արձքին, ընտանիքով հաստատուեցի երեւանում, որ սեփական տուն կառուցեցի, իսկ երեկոները դասատուեում էի գիշերային բանուորական կուրսերում՝ միջնէ բանտարկուեը: 1932ին, որպես «Ատեստատականներին» համայնքի ակտիւ անդամ, քարոզիչ էի: Համայնքում կրօնական դիակավար էի եւ միաժամանակ դասատուեում էի աշխատաւորական կուրսերում:

Մեր համայնքի խորհրդի անդամներն էին՝
1. Ես - Մկրտչեան Եփրեմ
2. Սարգսեան Սարգիս - ձերբակալուած
3. Անուռեան Սուրէն - Հայ տրանսպորտի ՀԻմա՝ Հայտնաբերուելի - Ք.Ա.) ցանցի խարդախքի բանդի աշխատող
4. Յովհաննիսեան Կարապետ - ԵՊՀի պահակ, Նորքի բնակիչ
5. Տէր-Գալուստեան Երուանդ - տնայրի դերձակ-մաքրող

Համայնքի դիակավարը Մաքոկեան Յարթոսն էր: Քարոզում էին, որ միակ ճիշտ ուսմունքը Աստուածն է, միս ուսմունքներ՝ կեղծ են, որ՝ աշխարհի բոլոր բարիքները կեղծ են եւ ձանձրալի, որ՝ գոյութիւն ունի այլ աշխարհ՝ երկնային բազատութիւն, որ խիստ հատատացեալը կը ստանայ իր յաւիտենական կեանքը, որ՝ Քրիստոսի երկրորդ գալուստով այբուելու է ամէնը եւ փրկուելու են միայն քոնդ հատատացեալները: Մենք մեր քարոզներում չենք

յիշատակել սով[ետական] իշխանութեան կործանումը, այլ նկարագրում է, որ Քրիստոսի երկրորդ գալստեամբ կը կործանուի ցանւ Սով[ետական] իշխ[անութիւնը], ուստի ուզում ենք ոչքան կարելի է շատ մարդու ընդգրկել միակ փրկուող առեւտրանաւակաւնների համայնքում: Դպրոցականներ էլ կային մեր համայնքում: Պարզ է, որ կրօնական ոտնձգութը հակառակ է մարքսիզմ-լենինիզմի ոտնձգութեան: Ընդունում եմ, որ մեր քայլերում լուռ հետեւած եղել եմ հակաաովետական:

Այս, ես ակզբունքներով «Անեւտրանաւակաւն» եմ եւ չէի կարող վարել կրօնական աշխատանք, որի քովանդակութիւնը հակաաովետական էր, ինչու եւ ճանաչում եմ իմն մեղաւոր»:

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

1. ՄԱՆՈՒԿԵԱՆ Տքթաւո Գրիգորեւիչի եւ
2. ՄԿՐՏՉԵԱՆ Երիցեմ Անդրեւաովիչի մեղադրանքով

ՀԱՅԿ[ԱԿԱՆ] ՍՍՌ ՆԳ-ԺԿ ՊԱՎի IV բաժնի պետ, Պետ[ական] Անվտանգութեան ստաց լեյտենանտ (ԿՈՆԴԱԿՈՎ) (թ. 12ա-բ,13-14) (ռուս.)

* * *

Հարցաքննութեան արձանագրութիւն (ռուս.)

Մեղադրեալ ՄԱՆՈՒԿԵԱՆ Տքթաւո (ծոյլն ինքը՝ Քաթոս) Գրիգորեւիչի - ծնուած 1875ին, ծնունդով Հայկ[ական] ՍՍՌ Վեդարչապատի շրջանի Սամադար գիւղից, հայ, ՍՍՌՄ քաղ[աքա]ցի, անկուսակցական, «առեւտրանաւակաւնների» կրօնական գործունէութեան սկիզբն ունի 1931ին եւ դադարեցրել է 5 տարով: Երեւան Քաղ[աք]:

13 Մարտ, 1938

Հ.- Տուէք հանգամանալից ցոցմունք, թէ ինչու՞ հասար էք Դուք 1931ին ՆԳ-ԺԿի մարմիններին կողմից ուղարկուել աքսոր:

Պ.- 1923ից ես հանդիսացել եմ Սամադար գ[իւղի] «առեւտրանաւակաւնների» կրօնական համայնքի անդամ եւ դեկտիւր: Յետագայ տարիներին եղել եմ համայնքի երէց եւ անդին կրօնական, հակաաովետական աշխատանք վարելու համար 1931ին ձերբակալուել եւ աքսորուել եմ 5 տարով, սակայն, ցնծալով իմ ինանդիսացիս դրութիւնը, 1933ին ժամանակից շուտ ազատուել եմ եւ ցորից վերադարձել Երեւան ք[աղաք]:

Հ.- Ինչու՞ ԴՈՒՔ աքսորից վերադառնալուց յետոյ չէք մեկնել ՅԵՐ Սամադար գիւղը, այլ մնացել էք Երեւան ք[աղաք]ում:

Պ.- Աքսորից վերադառնալուց յետոյ ես մնացել եմ Երեւան քաղ[աք]ում երկու պատճառով. նախ՝ ձերբակալութիւնիցս յետոյ 1932ին իմ ընտանիքը կուլակացած է արուել, խլուել է իմ չարժական եւ անշարժ գոյքը գիւղում, դրա համար էլ իմ ընտանիքը հաստատուել է Երեւան քաղաքում, եւ երկրորդ՝ իմ ձերբակալութիւնից յետոյ Սամադար գիւղի «առեւտրանաւակաւնների» համայնքը մնաց առանց երէցի եւ քաշրատուեց: Այսպիսով, ես մնացի Երե-

ուսում, կառուցնի իմ համար տուն և շարունակեցի փարել կրօնական աշխատանք «տեռտարանականներին» երեսաննաս համայնքում ընդհուպ մինչև իմ ձերբակալման օրը:

Հ.- Ինչա՞ծ է կայանում Ձեր՝ աշխատանքը երեսաց քաղաքի «տեռտարանականներին» համայնքում:

Պ.- «Աեռտարանականներին» համայնքում ես, որպես երէց, քարոզել եմ «տեռտարանը»: Իմ քարոզների բովանդակութիւնը հիմնականում այն էր, որ միայն ճշմարիտ ուսմունքը ես համարել եմ «տեռտարանը», իսկ մնացած բոլոր ուսմունքները և գիտութիւնները ես համարել եմ կեղծ: Ես քարոզել եմ այն մասին, որ աշխարհիկ բարիքները ունայն են և անյոգուտ, որ գոյութիւն ունի այլ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որտեղ պիտի շարունակեն յաւիտենական ապրել անկեղծ հաւատացեալ մարդիկ: Եւ ուստի, բոլոր նրանք, ովքեր ուզում են փրկել իրենց հոգին չարչարանքներից և ապրել յաւիտեան, նրանք չպէտք է գնան աշխատանքի հետևից, այլ պէտք է գան մեր հետևից՝ աեռտարանականներին հետևից:

Հ.- Այսպիսով, դուք թերեցրել էք մնացած մարդկանց գիտակցութիւնը: Ովքա՞ն մարդ էք նեերգաչել «տեռտարանականներին» համայնք:

Պ.- Նրանք շատ են: «Աեռտարանականներին» երեսաննաս աղօթատուն էին յաճախում և յաճախում են չորք հարիւր մարդ, սակայն նրանցից համայնքի իրական անդամներ են համարում միայն 50 մարդ, որոնց մեծ մասին ես եմ հաւաքագրել համայնքի մէջ:

Հ.- Նշանակում է՝ դուք աքսորից վերադառնալուց յետոյ, մնալով տվեռտական իշխանութեան նկատմամբ բշնամաբար տրամադրուած, շարունակել էք կրօնականի տեսքով վարել հակառուիեռական ագիտացիա: Դուք ընդունո՞ւմ էք դա:

Պ.- Ես համոզուած եմ իմ հաւատի՝ տեռտարանի ճշմարտացիութեան մէջ և որպես այդպիսին շարունակել եմ փարել ակռա կրօնական աշխատանք: Անկասկած կրօնը հակաշիր է ձեր մարքսիստական ուսմունքին, դրա համար էլ դուք այն կարող էք համարել հակաշեռափոխական գործունէութիւն:

Հ.- Ուրիշ ի՞նչ մեթոդներով էք դուք ներքաշել ձեր կրօնական համայնքի մէջ մնացած անգիտակից անձանց:

Պ.- Համայնքի գումարից (կամաւոր ընիքաաուութիւնների և խմբակների հաւաքից) մենք ֆինանսական օգնութիւն ենք ցոյց տուել աղքատ, կարիքաւոր ընտանիքներին, ինչը նոյնպէս նրանց կապում էր համայնքի հետ:

Հ.- Ձեզնից բացի էլ ո՞վ է համայնքում իրականացրել երէցի պաշտօն:

Պ.- Համայնքի երէց էի հանդիսանում ես, իսկ առաջ՝ նաեւ տեռտարանական ՊՈՂՈՒԻՆԻ Յովհաննէսը, ով աքսորից վերադառնալուց յետոյ, որպես հաշմանդամ, առողջութեան պատճառով (նա զրկուել էր երկու ոտքից) տնից դուրս գալ չէր կարող, բայց 1937ին նրան ֆայտոնի վրայ մի քանի անգամ տեսել եմ, եւ նա երկրներ է ունեցել:

երէցից բացի, համայնքը դեկավարում էր խորհուրդը, որի անդամներն էին.

1. ՍԱՐԳՍՅԱՆ Սարգիս - ՆԳԺԿի կողմից ձերբակալուել է վերջերս,
2. ՄԱՐՏՈՅԱՆ Հոիրեմ - ՆԳԺԿի կողմից ձերբակալուել է վերջերս,
3. ԱԻԵՏԻՍՆ Սարքիս – սով[ետական] ծառայող, քնակւում է Սարի քաղ, 4րդ կարգ, թիւ 19,
4. ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Կարապետ - քնակւում է Նորքում, Պետ[ական] համալարանի պահակ,
5. ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Երուանդ - մասնաւոր դերձակ:

Ինչոր սրանք յաջորդաբար նոյնիսկ են ունեցել եւ քարոզել են համայնքում: Համայնքի միջոցները գտնուել են Կարապետ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ձօտ, 1938ին գանձապահ է քնտրուել ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏՅԱՆ Երուանդը:

Հ.- Դուք, որպէս համայնքի ղեկավար-երէց, ինչու՞ երկար տարիներ չէք գրանցել ձեր համայնքը եւ չէք վճարել պետ[ական] հարկ:

Պ.- 1926ին համայնքը գրանցուել է, բայց յետագայում այլ չեն գրանցել ինձ անհասկանալի պատճառներով:

Հ.- Ինչո՞ւ չէք խօսում: Ձեր համայնքը չեն գրանցել պետ[ական] հարկերից խուսափելու պատճառով, եւ դուք մի քանի տարի շարունակ հարկ չէք վճարել:

Պ.- Չգիտեմ: Ֆին[անսական] մարմինները մեզանից հարկ չեն պահանջել, եւ մենք չենք վճարել:

Հ.- Նչանակում է՝ դուք գործել էք անլեգա՞լ:

Պ.- Այդպէս է դուրս գալիս, չնայած որ մենք ոսնձել ենք սեփական աղօթատուն երեւան ք[աղաք]ում:

Հ.- Դուք ըմբռնո՞ւմ էք, որ ձեր բոլոր արարքները անօրէն են եղել, իսկ քարոզները՝ հակասովետական:

Պ.- Այո, ըմբռնում եմ, որ մեր կրօնը ոչ մի ընդհանուր բան չունի սով[ետական] իշխանութեան հետ եւ ըստ էութեան մեր քարոզները հակա-սովետական են:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ ընթերցուել է, թարգմանուել է ռուսերէնից հայերէն, իմ խօսքերից գրանցուած է ճիշտ: ՄԱՆՈՒԿԵԱՆ

Հարցաքննեց՝
ՊԱԿի 5րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազօր
Պետ[ական] անվտանգութեան միլիցիայի լէյտենանտ (Ս. Յովհաննիսեան)

ՃԻՇՏ է:
ՆԳԺԿի քննչ[ական] բաժնի քննիչ
Պետ[ական] անվտանգութեան սերժանտ (Գեորգեան)

Տեղեկանք: Ինագիրը գտնւում է քննչ[ական] գործ թիւ 7293ում (Գեորգեան)
(Կրկնօրինակը՝ քննչ[ական] գործ թիւ 7530ում [ՆԳՖ գործ 7469]) (թ. 8ա-թ,9ա-թ,10)

* * *

Հարցաքննության արձանագրությունից (ռուս.)

Միքայելյան ՄԿՐՏՉԻՆԱ Եփրեմ Անդրեասովիչի - ծնված 1895ին, ծննդյամբ Հայի[ակազ] ՍՍՌ Վաղարշապատի չրջանի հասնամոտ գիւղից, բնակուել է Երեւան քաղաքում, հայ, ՍՍՌՄ քաղ[աքա]ցի: Մինչեւ ձերբակալութիւնը «երքազդիճո»ի երկոյեան կուրսերի տնտեսագէտ-դասատուողուհի, անկուսակցական:

13 Մարտ, 1938

Հ.- Տուէք առաւել մանրամասն ցուցմունք գաղտնական եւ այլ բանակցութիւնների ձեր ծառայութեան մասին:

Պ.- Ես ծառայել եմ միայն գաղտնական բանակում, որ գոյութիւն ունէր 1915-1916 արդէս դիւիզիայի չտաբի գրասենեակում:

Հ.- Ուրո՞ւ էիք 1917, 18, 19, 20 թուականներին՝ Հայաստանում դաշնակցական իշխանութեան օրօք եւ ինչո՞վ էք զբաղուել:

Պ.- Դաշնակցական իշխանութեան օրօք 1917ից մինչեւ 1920 ես ուսուցիչ եմ եղել Վաղարշապատի չրջանի Վաղարշապատ, Սարմալար, Ծրանգաձոց գիւղերում: Զօրակոչուել էի դաշնակցական բանակ, բայց իմ դպրոցի վարիչի միջնորդագրով երկու անգամ ազատուեցի, որից յետոյ բոլոր ուսուցիչների-րդ ազատուեցին զինուորական ծառայութիւնից, եւ յետոյ՝ ես իմ կրօնական համոզմունքներով խուսափում էի զինուորական ծառայութիւնից:

Հ.- Դուք ե՞րբ դադարեք հաւատացեալ եւ ի՞նչը դրդեց Ձեզ դրան:

Պ.- Իմ հայրը հաւատացեալ «ստնոպրաննական» էր, եւ ես, ստանալով կրօնական դաստիարակութիւն, 1917ից ճոյնպես դադարեայ հաւատացեալ «ստնոպրաննական»:

Հ.- Ինչո՞վ էք դուք զբաղուել սովետական իշխանութեան օրօք:

Պ.- Սովետական իշխանութեան օրօք ես մինչեւ 1925 եղել եմ ուսուցիչ, 1925ից մինչեւ 1930՝ վիճակագիր Վաղարշապատի ՇԳՀում: 1931ին, իմ համաձայնով կուրսակ, կուրսակցատի եմ արել, եւ 1931ին ես ընտանիքով հաստատուել եմ Երեւանում, որտեղ կառուցել եմ անձնական տուն, աշխատել եմ «երքազդիճո»ում որպէս տնտեսագէտ, իսկ երեկոյեան դասատուողուհի եմ բանուորական երեկոյեան կուրսերում՝ ընդհուպ մինչեւ իմ բանտարկութեան օրը:

Հ.- Յուսարկուածից բացի ուրիշ որտե՞ղ եւ ի՞նչ աշխատանք էք իրականացրել:

Պ.- 1932ից ես, որպէս «ստնոպրաննականներից» համայնքի ակտիւ անդամներից մէկը, հանդիսացել եմ համայնքի խորհրդի անդամ եւ քարտուղար՝ ընդհուպ մինչեւ իմ ձերբակալման օրը:

Հ.- Նշանակում է՝ դուք «ստնոպրաննականներից» համայնքում քարտուղար էք եղել, իսկ բանուորական կուրսերում՝ դասատուողո՞ւ:

Պ.- Այո, «ստնոպրաննականներից» համայնքում ես եղել եմ կրօնական դեկավար, միաժամանակ, բանուորական կուրսերում՝ դասատուողուհի:

Հ.- Մատնացույց արէք ձեր «տեսարանականներին» համայնքի խորհրդի անդամներին:

Պ.- Մեր «տեսարանականներին» համայնքի խորհրդի անդամներն էին.

1. Ես - ՄԿՐՏՉԵԱՆ Եղիազ,
2. ՍԱՐԳՍԵԱՆ Սարգիս - ձերբակալուած,
3. ԱՒՏԻՍԵԱՆ Սուրէն - աշխատում է «Հայտնարկուպի» ցանցում՝ խաղալիքների բաժնում,
4. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ Կոտրապետ - բնակում է Նորքում, Պետ[ական] համալսարանի պահակ,
5. ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ երդուածոյ - մասնաւոր դերձակ:

Համայնքի ղեկավարութեան ամբողջ աշխատանքը կենտրոնացուած էր խորհրդում, որի անդամները երբեմն հանդէս էին գալիս քարոզով, իսկ համայնքի երէցն էր Մանուկեան Քրեքոր:

Հ.- Համառօտ պատմէք Ձեր քարոզների բովանդակութիւնը:

Պ.- Մեր քարոզների բովանդակութիւնը յանգում էր հետեւեալին՝ մենք քարոզում ենք, որ միակ ճիշտ ուսմունքը դա աստուածաշունչ է, իսկ մնացած ուսմունքները եւ գիտութիւնները կեղծ են, որ բոլոր աշխարհիկ բարիքները ունայն են եւ անիմաստ, որ գոյութիւն ունի մէկ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որտեղ անկեղծ հաւատացեալները պիտի շարունակեն իրենց յաւիտենական կեանքը, որ կամ բոլոր նշանները քրիստոսի երկրորդ գալստեան համար, որի ժամանակ ողջ աշխարհը կրակով պիտի ոչնչացուի, իսկ այդ կրակից կ'ազատուեն միայն անկեղծ հաւատացեալ աստուածաշնչականները եւ այլոք:

Հ.- Նշանակում է՝ դուք կրօնական քարոզի ձեռով վարել էք ազիտացիա սովետական իշխանութեան իբր մօտեցող կործանման մասին:

Պ.- Մենք չենք ընդօծել եւ չենք յիշատակել սովետական իշխանութեան մասին, բայց ենթադրում է, որ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ պիտի կործանուի նաեւ սովետական երկիրը:

Հ.- Դուք քարոզել էք, որ բոլոր անաստուածներն, այսինքն՝ բոլշեւիկները, պիտի ոչնչացուեն, իսկ դուք՝ հաւատացեալներդ, պիտի փրկուէք կրակից, դրա համար էլ աշխատել էք ձեզ քան ամենքը է շատ մարդկանց ներքաշել Ձեր համայնքի մէջ կրօնական ագիտացիայի ճանապարհով, որտեղ որ պատահէր, ճի՞շտ է:

Պ.- Այո, բացի հաւատացեալներից, մնացած բոլոր մարդիկ, այդ յատ նաեւ անաստուածները՝ բոլշեւիկները, պիտի ոչնչացուեն: Ձեմ ժխտում, որ ես, այդ յատ նաեւ մեր համայնքի միւս անդամները, ամէն կերպ ձգտել ենք մեր կրօնական համայնքի մէջ ներքաշել նոր մարդկանց եւ փրկել նրանց ոչ ճիշտ ուղուց:

Հ.- Ձեր քարոզների ժամանակ հաւաքներին, արդեօք, ներկայ եղե՞լ են դպրոցական տարիքի երեխաներ:

Պ.- Այո, եղել են դէպքեր, երբ մեր հաւաքներին ներկայ են եղել դպրոցականներ:

Հ.- Պաշտօնական հատաքննի կողքին, ժողովներից դուրս կարո՞ղ էք արդեօք կրօնական քարոզ:

Պ.- Այո, եթէ եղել է դրա համար առիթ, ես կրօնական պարբերաբեմումներ եմ տուել ոչ որ պատահել է:

Հ.- Ամենամբ դուք որքա՞ն մարդ էք հատաքագրել համայնքի մէջ:

Պ.- Այդ հարցին դժուարանում եմ պատասխանել, բայց չեմ բացառում, որ ինքս էլ հատաքագրել եմ մարդկանց մեր «առնետարանական» համայնքի մէջ, այդ է պահանջում նաեւ «առնետարանը», այսինքն՝ փրկել մոլորեալներին անաստուածների ոչ ճիշտ ուղուց:

Հ.- Նշանակում է՝ ձեր բոլոր քարոզներն ուղղուած էին Մարքսիզմ-Լենինիզմի ուսմունքի դէմ եւ, հետեւաբար, ընդդէմ սովետական իշխանութեան: Ընդունո՞ւմ էք դա:

Պ.- Պարզ է, որ կրօնական ուսմունքը հակադիր է Մարքս-Լենինեան ուսմունքին: Ընդունում եմ, որ մեր կրօնական քարոզները բոլոր էութեան հակասովետական էին:

Հ.- Նշանակում է, որ Դուք, լինելով սովետական աշխատող, դասատու, միաժամանակ վարել էք կրօնական, բայց բոլոր էութեան՝ հակասովետական աշխատանք:

Պ.- Այո, ես համոզմունքով աւետարանական եմ եւ չէի կարող կրօնական աշխատանք չիրականացնել, որի բովանդակութիւնը նաեւ հակասովետական էր, որի համար ես ճանաչում եմ ինձ մեղաւոր:

Հարցաբննութեան արձանագրութիւնը ինձ կարդացուել է, գրուած է ճիշտ իմ խօսքերով:

Ե. Մկրտչեան

ՀԱՐՑԱՔՆՆԵՑ՝
ՊԱՎի Տղոյ բաժանմունքի IV բաժնի օպերլիազօր
Պետ[ական] անվտանգութեան մի[նիստրի] կրտ[սեր] լէյտենանտ (Ս. Յակոբանճիեան)

ԾԻՇՏ Է:
ՆԳԺԿի քննչ[ական] բաժնի քննիչ
Պետ[ական] անվտանգութեան սերժանտ (Գէորգեան)

Տեղեկանք: Ընագիրը գտնուում է քննչ[ական] գործ թիւ 7293ում (Գէորգեան) (Կրկնօրինակը՝ քննչ[ական] գործ թիւ 7530ում [ՀԿԳՖ գործ 7469]) (թ. 12ա-բ,13ա,14)

* * *

16 Մարտի, 1938 (ռուս.)

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ես, Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ 5րդ բաժանմունքի IV բաժնի օ[պերա-տիվ]/լիազոր[ած], Պետ[ական] Անվտանգության կրտսեր լեյտենանտ Յոսֆ-եանցի Ս., քննելով 1938 Մարտի 14ի մեղադրական քննչ[ական] գործը՝

1. ՄԱՆՈՒԿԵԱՆ Տիգրան Գրիգորեւիչի – ծնու[ած] 1875ին, ծնունդով Հայկ[ական] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի Սամադար գիւղից, կրօնական կուռքի ծառայող, «Անուանական»ների կրօնական համայնքի երէց, կրթուած, ն[ախկին]/կոչակ, 1931ին կուլակաթափուած, աքսորից վերադարձած, բնակւում է Երեւան ք[աղաք]ում,

2. ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչ – ծնու[ած] 1895ին, ծնունդով Հայկ[ական] ՍՍՌ Վաղարշապատի շրջանի նոյն գիւղից, քարտուղիչ եւ երեսուն ք[աղաք]ի «Անուանական» կրօնական համայնքի խորհրդի անդամ, ծառայող, երգեցիկի՝ տնօրենագէտ եւ գիշերային կուրսերի դասախօս, բնակւում է Երեւան ք[աղաք]ում,

դատաքննութեան մեղադրեալներ՝

ՄԱՆՈՒԿԵԱՆ Տիգրան Գրիգորեւիչը 1923 թուից եղել է «Անուանականների» կրօնական համայնքի դեկավար եւ վարձկան երէց Վաղարշապատի շրջանի Սամադար գիւղում, որտեղ ակտիւ կրօնական եւ հակասովետական աշխատանք վարելու համար 1931ին ՊԱՔՎ ՆԳԺԿի օրգանների կողմից ձերբակալուել եւ աքսորուել է 5 տարով, նոյն 1931ին կուլակաթափ է եղել, իսկ նրա ընտանիքը աքսորուել է գիւղից: Աքսորից վերադառնալով՝ ՄԱՆՈՒԿԵԱՆ Տ. Գ. էլ աւելի ակտիւօրէն է շարունակել վարել կրօնական եւ հակասովետական աշխատանք երեսուն ք[աղաք]ի «Անուանականների» համայնքում, որն ինքն էր դեկավարում որպէս վարձուած երէց ընդհատ ձինչեւ իր բանտարկութեան օրը:

ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչը ակսել է «Անուանական» է 1917 թուից: 1915-1916ին աշխատել է ցարական բանակի դիւիզիայի շտաբում որպէս գրագիր: Սովետական իշխանութեան ձեռնամուխ խիստ չընդամարած տրամադրուած տարր, ն[ախկին]/կոչակ, կուլակաթափ է եղել 1931ին, որից յետոյ հաստատուել է Երեւան ք[աղաք]ում եւ իր դեկավարութեան տակ վերցրել «Անուանականների» համայնքը, միաժամանակ աշխատել է Սով[խոզական] տոպրակատուներում:

ՄԱՆՈՒԿԵԱՆ Տ. Գ. եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ե. Ա. - առաջինը՝ որպէս վարձուած երէց, երկրորդը՝ որպէս Խորհրդի անդամ եւ համայնքի քարտուղիչ, դեկավարել եւ ակտիւօրէն վարել են համայնքի հակասովետական-կրօնական աշխատանքը: Նրանք համայնքի ժողովներում սիստեմատիկաբար հանդէս են եկել ակնյայտ հակասովետական ագիտացիայով, նոր ժողովականց են հաւաքագրել իրենց համայնքը, կազմակերպել են [դրամական] միջոցների հաւաքում եւ բաժանել են «կարիքաւոր» ընտանիքներին՝ նրանց համայնքի հետ կապերու նպատակով:

Հանճաձայն մեղադրեալներ ՍԱՆՈՒԿԵԱՆ Տ.ի եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ն.ի ցուցմունքների, նրանց թղթեր քաղուածները կրկնել են հակառակնտակաւ քննչէ:
Իրենց ճանաչել են մեղաւոր:

ՈՐՈՇԵՑԻ.
Մանուկեան Տրդատ Գրիգորեւիչի եւ Մկրտչեան Եփրեմ Անդրէասովիչի քննչական գործը ուղարկել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ եռեակի քննարկմանը:

ՆԳԺԿ ՊԱՒՎ Տյուլ բաժանմունքի IV բաժնի օ[պերատիւ]/ինազօրուած, պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)

ՀԱՄԱՁԱՅՆ ԵՄ
ՆԳԺԿ ՊԱՒՎի Տյուլ բաժանմունքի IV բաժնի պետի տեղակալ, պետ[ական] Անվտանգութեան լէյտենանտ (ԱՐՊԵՆԵԱՆ)

ՏԵՂԵԿԱՆՔ. Մեղադրեալներ ՍԱՆՈՒԿԵԱՆ Տ. Գ. եւ ՄԿՐՏՉԵԱՆ Ն. Ա. բանտարկուել են 1938 թ. Մարտի 10ին եւ պահում են Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի ներքին բանտում:

ՆԳԺԿ ՊԱՒՎ Տյուլ բաժանմունքի IV բաժնի օ[պերատիւ]/ինազօրուած, պետ[ական] Անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ)
(թ. 15-16)

* * *

Քաղուածք Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի եռեակի նիստի թիւ 81րդ արձանագրութիւնից (ռուս.)

Լսեցին.
15. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի IV բաժնի թիւ 7293 մեղադրական գործը, ՍԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ-Քաթոս Գրիգորեւիչ, ծնուած 1875ին, բնակւում է Երեւան քաղաքում, նախկին կոլակ:

Մեղադրւում է այն բանում, որ, հանդիսանալով աւետարանականների կրօնական համայնքի դեկավար, վարել է ակտիւ հ/յ. աշխատանք, որի համար 1931ին ձերբակալուել է եւ պատասխանատուի: Աքսորից վերադառնալուց յետոյ նորից կապուել է հ/յ., կուլակա-դաշնակցական տարրերի հետ եւ, կրօնական ծէսերի անցկացման քողի տակ, ընդհատպ միջեւ իր ձերբակալումը վարել է ակտիւ հ.-ս աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ.
ՍԱՆՈՒԿԵԱՆ Տրդատ-Քաթոս Գրիգորեւիչին ԳԱՂԱՓԱՐԵԼ:
Անճատը իրեն պատկանող իրերը բանագրաւել (թ. 17):

* * *

Քաղուածք Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի եռեակի նիստի թիւ 81րդ արձանագրութիւնից (ռուս.)

Լսեցին.

16. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի IV բաժնի թիւ 7293 մեղադրական գործը, ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչ, ծնուա[ծ] 1895ին, բնակուած է Երեւան ք[աղաք]ում, նախկին կուլակ:

Մեղադրում է այն բանում, որ, հանդիսանալով առեւտրանականների կրօնական համայնքի քարոզիչ, վարել է ակտիւ հ.-ս. աշխատանք, կապ է պահպանել հ.-յ., կուլակա-դաշն[ակցական] տարրերի հետ եւ կանոնաւոր, ընդհատ ճիշչեւ իր ծերբակալման օրը, վարել է հ.-յ. ագիտացիա:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ՄԿՐՏՉԵԱՆ Եփրեմ Անդրէասովիչին դատապարտել ՈՒԱՃ, ՏԱՍ տարի ժամկէտով՝ ժամկէտը հաշուելով 1/III-38ից (թ. 18):

* * *

Մոսկուա ք[աղաք], ՍՍՌՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան նախագահ
Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆԻՆ

Համոզուած լինելով, որ Դուք աշխատութեան էք արժանացնում եւ ընթացք էք տալիս արդարացի դիմումներին, ուստի պատիւ համարձակւում եմ դիմել Ձեզ:

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ օրգանների կողմից ես 6/III ս. թ. ծերբակալուել եմ, 15/III տեղի է ունեցել հարցաքննութիւն կրօնական հարցերի չուրջ՝ որպէս հաւատացեալ, Աւետարանական համայնքի գործում անդամ: Իսկ միւչ այդ դեռեւս 1/III ս. թ. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ Երեւանի կողմից առանց մեղադրական յօդուածի դատապարտուել եմ 10 տարի աքսորի ՈՒԱՃ, որտեղ գտնւում եմ միչչեւ օրս:

Դրանից առաջ է 6 չորչից բաղկացած ընտանիքս եւ ես, բացի այդ, մանկավարժական եւ տնտեսական ճակատներում խզուր է կորչել իմ 25ամեայ աշխատանքային առաջը:

Քանի որ ՍՏԱԼԻՆԵԱՆ Սահմանադրութիւնը ապահովում է ՍՍՌՄ ամէն մի քաղաքացու խղճի ազատութիւնը, ուստի համոզուած եմ, որ իմ ծերբակալութիւնը եւ աքսորը միայն անհիմն է:

Ծանօթացնելով Ձեզ վերոչիշեալ հանգամանքների հետ՝ խնդրում եմ Ձեր տրամադրութեանը վերանայելու համար իմ գործը, եւ, ազատելով ինձ բանտարկութիւնից, չթողնել, որ մեռնի անմեղ ընտանիքս (ծկարում ընտանիքս է՝ առանց ծօրս) (ճանապարհ կցել է ընտանեկան լուսանկարը – Ք.Ա.) եւ ես՝ որպէս Սովետական ընտանիքի ագնիւ քաղաքացի:

Կցում եմ մէկ լուսանկար:

Բանտարկեալ Ե. Ա. Մկրտչեան

Գտնւում եմ՝ Սվերդլովսկի ճարպ., Վ. Տաւրա ք[աղաք] («Կրասնի-Երար» ճամբ[արային] կ[էտ]). Մեսրոպացագ, Եփրեմ Անդրէասովիչ Մկրտչեան
Նախկին բնակեալ՝ Հայկ[ական] ՍՍՌ Երեւան ք[աղաք]ի Սարի-Ծաղի, V շարք, թիւ 25

23/XI-1938 թ. (թ. 22ա-թ) (ռուս.)

* * *

ԽՍՀՄ Կոմ[ունիստական] Կուս[ակցության] Կենտ[րոնական] Կոմ[իտե]ի
Գերագույն Քաղտուղար
ՍՏԱԼԻՆԻՆ
Բանտարկեալ-լագերական
Եփրեմ Սիմոյեանի Միքայելեանից

Հայաստանի ԽՍՀ ՆԳԺԿոմ[իտե]ի մասնիճիների միջոցով ինձ ձերբակալելիս ա./թ. 6/III՝ որպէս աւետարանական համայնքի անդամի, քննութիւն կատարեցին 15ին նոյն ամսի, որի ժամանակ քննիչս, բացելով աւետարանը, ընթերցեց մի քանի ցիտատներ, համեմատեց Մարքսի ուսմունքի հետ, ցոյց տուեց նրանց անհամաձայն լինելը ու յանգեց այն եզրակացութեան, որ ես, արդարև աւետարանը ընդունող հաւատացեալ, յանցաւոր եմ ու, արձանագրութիւն կազմելով՝ առանց թոյլ տալու որ ինքս ընթերցեմ, *ստորագրեցրեց*։ Այդ ժամանակուանից տասապեցի բանտում եւ ճիշտ սեպտեմբերամսում իմացայ (ուր այժմ գտնւում եմ), որ Հայաստա[նի] ԽՍՀ ՆԳԺԿոմ[իտե]ի եռեակը Մարտի 1ին, այսինքն իմ քննութիւնից 15 օր յառաջ, որոշել է առանց մեղադրական յօդուածի, 10 տարով աքսորել՝ հետեւեալ մեղադրանքներով արձանագրելով. «1. Ներկայանում է Աւետարանական համայնքի քարոզիչ. 2. Կռապ է պահպանել հակա-խորհրդային կուլակ-դաշնակցական էլեմենտների հետ ու միշտ իր քանտարկութեան օրը տարել (վարել - Ք.Ա.) է հակախորհրդային ագիտացիա»։

Վերոյիշեալ մեղադրանքների եա գտնում եմ միանգամայն ապօրինի ու անհիմն հետեւեալ պատճառաբանութեամբ՝

1. Ես քարոզիչ չեմ, մեր համայնքն ունէր իր յատուկ քարոզիչը.

2. Հակախորհրդային կուլակա-դաշնակցական էլեմենտների հետ կապ չեմ պահպանել, այդ մասին քննութեանս ժամանակ խօսք չի եղել, չի արձանագրուած, ոչ մէկ ապացոյց չի էլ կարող լինի.

3. Հակախորհրդային պրոպագանդիս չեմ ունեցել, այդ մասին ոչ մէկ ապացոյց չի լինի, քննութեանս ժամանակ նոյնպէս ոչ մէկ խօսք չի եղել եւ *վերջապէս դա կը լիներ իմ սկզբունքիս դէմ*.

4. Իմ հաւատացեալ լինելս, աւետարանական համայնքին պատկանելս նոյնպէս յանցանք չի համարում, քանի որ համաձայն ՍՏԱԼԻՆԻՆԻ Սահմանադրութեան տրուած է խղճմտանքի ազատութիւն։

Շատ պարզ է, որ եթէ վճիռ կայացուէր 1/III-ին, եւ 6 օր յետոյ բանտարկէին առանց ապացոյցի՝ անօրինական որոշում էլ համարուած կը լինէր, բայց այս ախալմունքով անբախտացել է ընտանիքս ու ես, խորտակուել է 4 գտակցութիւս ապագան, այս բոլորից *բացի տասնամեայ ծանր իմ 25 տարուայ ծառայութիւնս*՝ տասը՝ մանկավարժութեան ու տնտեսագիտական ասպարէզում, որոնցում խորհրդային Իշխանութեան օրօք աշխատել եմ անխոնջ ու ժրաջան եւ

ստացել բազմաթիվ պարգևատրումներ, շնորհակալություններ ու գովասանական թերթիկներ:

Ծանոթացնելով Ձեզ վերոհիշյալների հետ խնդրում եմ՝ կատզարդել պահանջել իմ գործերս Հայաստ[անի] ԽՍՀից, քննության կատարել ու *ծնկաճիգ* Հայաստ[անի] ԽՍՀ Ներք[ին] Գործ[երի] Ժող[ովրդական] Կոմ[իսարիատ]ի հոթակի առաջև քննության ու առաջև յոթաւածի 10 տասի ազատել որշելու վճիռը եւ թոյլ տալ ինձ գնալ շարունակել ապրել եւ գործել որպէս խորհրդային ծառայող աւնկուսակցական-բոլշեվիկ եւ պահպանել անտէրունչ մնացած 6 աւճից բաղկացած ընտանիքիս գոյությունը:

Բանտարկեալ-յազերական՝ Ե. Ա. Մկրտչեան

7/VIII-1938 թ.

Ընդունվածեան վայր՝
Սվերդլովսկայա օբլաստ, Ալտիյայ
(Չիմկարտ[ական] նեղ երկ. գծի)
յագեր[այինի] պուճկտ, 16 կիլոմետր

Տանս հասցէն՝
Հայաստ[անի] ԽՍՀ երեւան
V շարք. Սարի փողոց, թիւ 20
տուն

Եռիրեմ Աւդրեասի Մկրտչեան (թ. 24ա-բ) (նայ.)

* * *

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի աշխատակիցները, ՍՍՌՄՆԳԺԿ եւ մյուրեճական դատախազության աշխատակիցները վերանայման խնդրանքը չեղնայ եմ հասարել, գտնելով, որ անհիմն է եւ որ՝ մեղադրե եմ:

Վերանայել եմ 1939 թ. Ապրիլի 5ին.

«...Նրանք (Եռիրեմ Մկրտչեան, Տրդատ Մանուկեան – Ք.Ա.) երկուսով սերտ կապված էին միմեանց հետ եւ իրարանչիւրը իր առանձին գիծը ունէր բողոքականների մէջ քարոզ կատարելու: Մինչեւ 1920 թիւը նրանք զբաղուած էին բողոքականների մէջ քարոզներ կարդալով, իրենք սեմբաեր 1920 թուին չեմ կարող կարմիրների դէմ, բայց հրահրում եւ ուրիշներին ուղարկում էին կռուի կարմիրների դէմ», - ասել է վկայ Իսրայէլ Պետրոսեանցն իր ցուցմունքներում՝ 29.IV-1940 թ. հարցաքննութեան ժամանակ (թ. 25-26,30ա-բ): (նայ.)

* * *

Կինը՝ Անահիտ Մկրտչեանը, եւս բողոք է ներկայացրել Հայկ[ական] ՍՍՌ դատախազութիւն ամուսնու արդարացնելու համար, որը 1940 թ. Մայիսին մերժուել է: 1939 թ. Յուլիս բողոք է ներկայացրել ՍՍՌՄ դատախազին իր ամուսնու գործ չհամահու արդարացնելու համար, քանի որ, 10 տարուց 4ը ճատելով, մահացել էր: Կինը իր բողոքին կցել էր նաեւ 1932 թ. Կոմունար տրճտեսության Շինսնկցիայի II շրջանի աշխատեկի կողմից Ե. Ա. Մկրտչեանի մասին տրուած բնութագիրը:

ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ընկ. Եռիրեմ ՄԱՐՏՈՆԱՆԸ 1931ի Սեպտեմբերի 3ից մինչեւ 1932ի Դեկտեմբերի 3ը ծառայել է Նէրքատուվեսի Շինսնկցիայի Արդ շրջանում որպէս հաշուապահ եւ վերանայիչ: Իր վրայ դրուած աշխատանքները կատարել է բաւական բարեխղճօրէն եւ ճշտապահ: Ծառայութեան ընթացքում ոչ մի բաց-

թոդած օր չի ունեցել: Աշխատողների հետ բաւական բարեկիրթ էր, նրանց բոլոր պահանջների ճկատմամբ զգայուն եւ հնարաւորութիւնների ներածի չափով բաւարարել է նրանցից իւրաքանչիւրին:

Ակռայ մասնակցութիւն է ունեցել հասարակական աշխատանքին: Տեղափոխուել է Շիմանկզիայի Կենտրոնական աշխատակազմ՝ պաշտօնի բարձրացման հեռանկարով:

II չրջանի աշխողնկ
Անդրանիկ

10/XII-1932
երեւան (թ. 35,37-38) (ռուս.)

* * *

Երիցեմ Մկրտչեանը ծանոթացել է 1942 թ. Դեկտեմբերին՝ աղիքային խանգարումից (թ. 39): (հայ.)

* * *

1957 թ. Հոկտեմբերի 30ին վկայ Բենիամին Քոչարեանը հետազննուցի Երիցեմ Մկրտչեանի մասին ասել է. «...Մկրտչեանը գիտում աշխատել է որպէս ատաղձ, բայց նա իր ընտանիքով տեղափոխուելուց էրեւան, աշխատում էր Քաղաքհետում՝ պատասխին բաժնում եւ մինչեւ իր աշխատանքում եղել է օրինակելի ու բարեխիղճ աշխատող, այնպես որ ես նրանից որեւէ հակասովետական բան չեմ նկատել, եւ ճիշտ չի այն բանը, որ իբր թէ նա հակասովետական ագիտացիա է կատարել գիտաշխատողների մէջ եւ այլն: Կոլեկտիվ կազմակերպուած ժամանակ նա եղել է էրեւանում եւ գիտի հետ ոչ մի առնչութիւն չի ունեցել: Դա զրպարտութիւն է» (թ. 43բ): (հայ.)

* * *

1957 թ. Հոկտեմբերի 31ին վկայ Պետրոս Սարգսեանն ասել է. «...Մանկապարտէզից ճանաչում եմ հետազննուցիներ Տրեստ Մանուկեանին եւ Երիցեմ Մկրտչեանին. նրանց հետ բնութագրին եւ բարեկամութիւն չունեմ: Ես իմարկէ նրանց մասին կարող եմ ասել, որ եղել են որպէս նկեղեցական քաղաքացի[ներ], սակին մարդ[իկ] եւ պէտք է ասեմ, որ այդպիսի մարդիկ մենք քիչ ունենք, որոնք իրենց հոգեբանութեամբ եղել են մաքուր եւ հարազատ մեր հասարակութեանը: Բայց միաժամանակ պէտք է ասեմ, որ երկուսն էլ իրենց գաղափարներով հոգեւորականներ էին եւ աւետարանի ճշմարտութիւնն էին քարոզում, ճանաչում էին հոգեւոր գաղափարները, բայց դրանով չի կարելի ասել, որ նրանք կատարել են հակասովետական աշխատանք: Նրանք իրենց չրջապատում, որպէս կիթոր ու զարգացած մարդիկ, իրենց ազնուութեամբ վայելում էին բոլորի համակրանքը, եւ ես իմ ճանաչած ժամանակում չեմ տեսել կամ երբեք չեմ լսել, որ նրանք թոյլ տան հակասովետական ագիտացիա կամ որեւէ աշխատանք: Այնպես որ, բացի դրականից նրանց մասին ես ոչինչ չունեմ ասելու...» (թ. 46ա-բ): (հայ.)

* * *

1957 թ. 2/XII Հայկ[ական] ՍՍՌ դատախազի տեղակալ, արդարադատութեան աւագ խորհրդական եռա. Հոկտեմբեր, Մկրտչեան Երիցեմի կնոջ՝ Ա-

նահիտ Մկրտչեանի դիմումի հիման վրայ վերաձայնել է Մանուկեան Տ. եւ Մկրտչեան Եփ[րեմի]. գործերը, որոնք ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակի 1938 թ. Մարտի 4ի որոշմամբ դատապարտուել էին տարբեր պատժաչափերի, եւ գտել է, որ անհիմն են դատապարտուել՝ պատճառաբանելով. «...Ինչպէս երեւում է գործի տուեալներից, Մանուկեանը եւ Մկրտչեանը կալանաւորուել ու դատապարտուել են սոցիալ-հասարակական օրինականութեան նորմաների բացայայտ կոպիտ խախտումներով. բնական է յիշատակել այն փաստը, որ ՀՍՍՌ ՆԳԺԿ եռեակը, ոտնահարելով պրոցեսուալ նորմաների ամենատարրական կանոններ, առանց որեւէ գործ սկսելու եւ առանց որեւէ նիւթեր ու փաստ ձեռքի տակ ունենալու, 1938 թ. Մարտի 4ին նախօրօք դատապարտման որոշում են կայացրել Մանուկեանի եւ Մկրտչեանի նկատմամբ, որից յետոյ՝ 1 օր անց, կազմում են նրանց ձերբակալման եւ առնը խուզարկութիւն կատարելու մասին որոշում, 2 օր անց՝ 7/3-38 թ., կատարում են խուզարկութիւն, իսկ 5 օր անց՝ 9/3-1938 թ., նրանց կալանքի են վերցնում եւ, վերջապէս, դատապարտման որոշում կայացնելուց յետոյ՝ 9 օր անց 15/3-1938 թ., հարցաքննում են մեղադրեալներ Մանուկեանին եւ Մկրտչեանին եւ, առանց լրացուցիչ գործողութիւն կատարելու, դատապարտման մասին վճիռը ի կատար են ածում:

ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՍՍՌ ՆԳԺԿի եռեակի 1938 թ. Մարտի 4ի որոշումը բեկանել, երիտեմ Ամղբեասի Մկրտչեանի եւ Տրդատ Գրիգորի Մանուկեանի նկատմամբ յարուցուած գործը կարճել առաջադրուած մեղադրանքը չհիմնաւորուելու պատճառով» (թ. 52-53): (հայ.)

* * *

ՈՐՈՇՈՒՄ թիւ 5/445

Հայկ[ական] ՍՍՌ Գերագոյն դատարանի քր[եական] գործերի դատական կոլեգիան 7/12-57 թ. նետեւեալ կազմով՝ Նախագահ Լ. Առաքելեան

Քննելով դատախազի տեղակալի հսկողական բողոքը՝

«...*ՈՐՈՇԵՑ*.

Համաձայնելով ռեսպուբլիկայի դատախազի տեղակալի հսկողական բողոքի հետ, բեկանել ՀՍՍՌի ՆԳԺԿի եռեակի 1938 թուի Մարտի 4ի որոշումը երիտեմ Ամղբեասի Մկրտչեանի եւ Տրդատ Գրիգորի Մանուկեանի նկատմամբ եւ գործը վարոյթում կարճել յանցանքի ապացուցուած չհինելու պատճառով» (թ. 56-57): (հայ.)

* * *

ԳԱՐՏՆԻ (հայ.)

ՈՐՈՇՈՒՄ թիւ 5/445

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ Գերագոյն դատարանի քրէական գործերի դատական կոլեգիան 7/12-57 թ. հետեւեալ կազմով՝

Նախագահ՝ Լ. Առաքելեան
Անդամներ՝ Սարգսեան, Խաչատրեան
Դատախազ՝ Գամբարեան

Քննեց դատական նիստում Գերագոյն դատարանի անդամ Ա. Մարգսեանի գեկուցմամբ Հայկական ՍՍՌ դատախազի տեղակալի հակողական քողքը՝ Հայկական ՍՍՌի ՆԳԺԿի եռանկի 1938 թուի Մարտի 4ի որոշման դէմ, որով՝

1. ՏՐԴԱՏ ԳՐԻԳՈՐԻ ՄՄՆՈՒԿԵԱՆԸ, 1875 թուի ծնուած, ծնուել եւ բնակուել է Էջմիածնի շրջանի Սամադոլաք գիւղում, ամուսնացած, անպարտիական, չդատուած, դատապարտուել է պատժի առանձագոյն չափին:

2. ԵՓՐԵՄ ԱՆԴՐԷԱՍԻ ՄԱՐՏՅԵԱՆԸ, 1895 թուի ծնուած, ծնուել է Էջմիածնում, ամուսնացած, գրագէտ, անպարտիական, մինչեւ բանտարկուելը աշխատել է Եր[եւանի] Քաղաքմիութեան որպէս տնտեսագէտ, չդատուած, դատապարտուել է ազատազրկման 10 տարի ժամանակով:

Տ. Մանուկեանը եւ Ե. Մկրտչեանը դատապարտուել են այն բանի համար, որ նրանք, լինելով կրօնական ամենատուրիւններ եւ՝ որպէս բողոքականներ, իրենց բարոզներում կատարել են հակասովետական ագիտացիա, կապ են ունեցել հակասովետական եւ դաշնակցական էլեմենտների հետ եւ նիւթական օժանդակութիւն են ցոյց տուել բանդիտներին:

Հակողական բողոք է բերուած չիշեալ որոշումը բեկանելու եւ գործը կարճելու առումով:

Լսելով զեկուցումը եւ դատախազի եզրակացութիւնը, որը պահպանում է բերուած բողոքը, դատական կոլեգիան, ծանօթանալով գործի տուեալներին, գտաւ, որ Մկրտչեանի եւ Մանուկեանի նկատմամբ եղած չիշեալ որոշումը պէտք է բեկանել եւ գործը վարոյթում կարճել հետեւեալ պատճառաբանութեամբ.

1. Գործով քննութիւնը կատարուած է խիստ թերի եւ կողմնակի կերպով խախտուած է Սովետական օրինականութիւնը, նրանում, որ չիշեալ եռանկը, ոտնահարելով քր[եական] դատ[ախտութեան] օր[էնսգրքի] պահանջները, առանց որեւէ գործ սկսելու եւ առանց որեւէ նիւթեր ու փաստեր ձեռք բերելու, 1938 թուի Մարտի 4ին նախօրօք նրանց նկատմամբ դատապարտման որոշում է կայացրել, որից մէկ օր անց կազմում են նրանց ձերբակալման եւ քննական բոլոր իրազարկելու որոշումներ, եւ 5 օր անց նրանց կալանաւորում են, եւ վերջապէս՝ դատապարտման որոշում կայացնելուց 9 օր անց, այսինքն՝ 13/3-1938 թուին, հարցաքննում են Մանուկեանին եւ Մկրտչեանին, եւ առանց լրացուցիչ գործողութիւններ կատարելու, նրանց նկատմամբ եղած դատապարտման որոշումը ի կատար են ածում:

Յետագայում Մկրտչեանի բողոքի հիման վրայ ՀՍՍՌի դատախազի կողմից հակողական կարգով վերանայում է գործը եւ ուղարկում է լրացուցիչ քննութեան, որտեղ արդէն հարցաքննում են որպէս վկաներ Խ. Գարիբեանը, Գ. Աղաչեանը, Ի. Պետրոսեանը, Վ. Մանուկեանը, որոնք ինչպէս այն ժամանակ, այնպէս էլ 1957 թուին կատարուած լրացուցիչ քննութեան ժամանակ, վերահաստատած վերաչիշեալ վկաները Մկրտչեանի եւ Մանուկեանի հակասովետական գործունէութեան մասին ոչինչ չեն ասել, յատկապէս, նրանց դաշնակցական աստիճանի մասնակցելու, բոլշեւիկների դէմ պայքարելու,

բանդիտոնեթիմ օգնելու եւ հակասովետական ագիտացիա կատարելու մասին, այլ չիշեալ վկաներդ միայն յայտնել են, որ Մաճուկեանը եւ Մկրտչեանը եղել են հատատացեալներ, որոնք միայն կրօն են քարոզել:

Հետի այդ, յրացուցիչ հարցաքննութեան են դրպէս վկաներ Բենիամին Ջուլաբեանը, Անետիս Կիրակոսեանը եւ Պետրոս Մարգսեանը, որոնք Մկրտչեանին եւ Մաճուկեանին ճանաչում են, որպէս հաճագիտացիներ, նրանց բնութագրել են դրականապէս եւ յայտնել են, որ նրանք միայն եղել են հատատացեալ մարդիկ: Այսպիսով գործի առիւսներով եւ կատարուած մոր նախաքննութեամբ Մաճուկեանին եւ Մկրտչեանին վերագրուող ծեղադրանքները չեն հիմնաւորուում: Ուստի, վերոգրեալի հիման վրայ եւ ղեկավարուելով քր[եական] դատ[ավարութեան] օր[ենսգրքի] 393 յոդուածով, դատական կոլեգիան՝

ՈՐՈՇԵՑ.

Համաձայնուել ռեսպուբլիկայի դատախազի տեղակալի հակոզական բողոքի հետ. ՐԵԿԱՆՆԵԼ ՀՍՍՌի ՆԳԺԿի եռեակի 1938 թուի Մարտի 4ի որոշումը եփրեմ Ամղրեանի Մկրտչեանին եւ Տիգրան Գրիգորի Մաճուկեանի վերաբերմամբ եւ գործը վարոյթում կարճել յանցանքի ապացուցուած չլինելու պատճառով:

Նախագահ՝ Լ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Ամքագներ՝ ՍԱՐԳՍԵԱՆ, ԽԱՉԱՏՐԵԱՆ

ԿԱՏԱՐԱԾՈՒ ՍԱՐԳՍԵԱՆ
թիւ 1180 ՀՀ. 7/12-57 թ. (թ. 56-57)

* *

Գ. Նթուանց Գալուստովիչ Տէր-Գալուստեանցի Քրեագործում

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐԵՈՒՈՐ ԳՈՐԾԵՐԻ ՖՈՆԴ, Գործ 7469

Ընդհանուր քննչական ֆոնդ, գործ թիւ 7530 (Պահել ընդմիշտ) (տաս.)
Նթուանց Գալուստովիչ Տէր-Գալուստեանցի
վերաբերեալ յարուցուած ծեղադրանքի չարչ (1 հատորով գործ)

Նթուանց Գալուստովիչ Տէր-Գալուստեանը ծնուած 1893ին Վանում, բնակում է Նրեւանում, դերձակ, տանը մասնաւոր աշխատող է, միչեւ յեղափոխութիւնը՝ տէրտէր, [ունի] կին, 4 երեխայ, քոյր: Նրեւան քաղաքում «Անասարանական» համայնքի քարոզիչ, հոգեւոր բուտանիքից, հայրը հոգեւորական էր: Գրաճանաչ, անկուս[ակցական], նախկինում չի դատուած:

Միութեան Տէր-Գալուստեան Նրեւանցի քարոզներ.
Հարցաքննութեան արձանագրութիւն, 1938, Մարտ 17

Հարց- Դուք մեղադրում էք այն բանում, որ, մինչեւ ձեր ձերբակալման օրը, ինձնով «Ամերապահականներ» կրօնական համայնքի խորհրդի անդամ, կրօնական քարոզի տեսքով կանոնաւոր վարել էք ակտիւ հակասովետական ագիտացիա: Տուէք ճշմարտացի ցուցմունք ձեր հակասովետական գործունէութեան մասին:

Պատասխան- Այո, ես 1930ից երեսուն ք[աղաք]ի «Ամերապահականներ» կրօնական համայնքի ակտիւ անդամներից եմ: Սկսած 1936ից մինչեւ իմ ձերբակալման օրը եղել եմ համայնքի խորհրդի անդամ եւ, հետեւաբար, որպէս այդպիսին, ղեկավարել եմ համայնքի աշխատանքները եւ հաճախ եմ եղել քարոզներով:

Հ.- Թուարկէք ձեր համայնքի անդամների անունները:

Պ.- Մեր «Ամերապահականներ» համայնքի խորհրդի անդամներն էին՝

1). Ես՝ Տէր-Գաբրատեան Երեմեդ,
2). Սարգիսեան Սարգիս - վերջերս ձերբակալուած,
3). Մկրտչեան Եփրեմ - վերջերս ձերբակալուած,
4). Աճեմեան Սոքէն եւ
5). Յովհաննիսեան Կարապետ:

Համայնքի վարձուած երէց է հանդիսացել Մանուկեան Թաթոսը, որը նոյնպէս ձերբակալուել էր վերջերս:

Հ.- Բացատրեցէք ձեզ արուած առաջին հարցի վերաբերեալ ձեր ցուցմունքներում բան էութեան՝ ձեր համայնքի հակասովետական աշխատանքի մասին:

Պ.- Մենք հակասովետական ագիտացիա չենք վարել: Մեր քարոզների բովանդակութիւնը ներմուծուում հետեւեալն էր՝ մենք, այդ թւում եւ ես, քարոզում էինք, որ միակ ճիշտ ուսմունքը դա «Ամերապահներ» է, իսկ մնացած ուսմունքներն ու գիտութիւններն ամբողջութեամբ կեղծ են, որ բոլոր աշխարհիկ բարիքները ունայն են եւ անիմաստ, որ գոյութիւն ունի այլ երջանիկ աշխարհ՝ երկնային թագաւորութիւն, որ ամենեղծ հատատացեալները միայն յետոյ այս մեղաւոր աշխարհից կը յայտնուեն երկնային թագաւորութիւնում եւ յաւիտեան պիտի ապրեն այնտեղ երջանիկ կեանքով: Մենք քարոզում էինք նաեւ այն, որ անպայման Քրիստոսը երկրորդ անգամ կը գայ մեր աշխարհ, որ այժմ մօտեցել է նրա գալուստը, որի համար բոլոր նախապատրաստութիւնները կան: Այդ նախապատրաստութիւնները մենք համարում էինք մի շարք այլ երկրներում «Ամերապահի» խօսքերից սկսած պատերազմը, գոյութիւն ունեցող աթէիզմը եւ այլն, ինչ որում մենք ասում էինք, որ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ ողջ աշխարհն, այդ թւում նաեւ մեր երկիրը՝ ՍՍՌՄը, պիտի ոչնչացուի կրակով, եւ կրակից պիտի ազատուեն միայն անկեղծ հատատացեալները, այսինքն մենք՝ «Ամերապահականներս»:

Հ.- Ուրեմն դուք կրօնական քարոզի տեսքով ագիտացիա էք տարել Սովետական իշխանութեան իբր ծառեցող կործանման մասին, հատատո՞ւմ էք դա:

Պ.- Մենք չենք ընդգծել, որ ՍՍՌՄ պիտի կործանումի Քրիստոսի երկրորդ գալստով բայց ենթադրում է, որ բոլոր աշխարհի հետ միասին պիտի կործանումի եւ ՍՍՌՄ, ճանաչանդ որ, վերջինս է անհատականների երկիր:

Հ.- Ես դրա համար դուք ամէն կերպ ջանացել էք ընտրել մարդկանց եւ ներքաշել էք ձեր համայնքի մէջ:

Պ.- Այո, դա մեր սուրբ պարտականութիւնն է՝ փրկել մոլորուածներին անհատների սխալ ուղուց, որպէսզի նրանք դարձնել անկեղծ հաւատացեալներ, որպէսզի «երկնային թագաւորութիւնում» [նրանք] տեղ ունենան:

Հ.- Դուք անձամբ որքա՞ն մարդ էք հաւաքագրել ձեր համայնք:

Պ.- Դժուարանում եմ այդ ասել: Այժմ մեր համայնքում հաշւում է հարիւր մարդ: Նրանց մի մասը, անշուշտ, հաւաքագրուած է իմ կողմից:

Հ.- Դուք կրօնական քարոզն անց էք կացրել համայնքու՞մ, թէ՝ որտեղ պատահի:

Պ.- Ես կրօնական քարոզ վարել եմ համայնքի ժողովներում, բայց դրա հետ մէկտեղ՝ եւ ժողովներից դուրս, որտեղ կար համապատասխան հիմք:

Հ.- Ձեր ժողովներին համայնքի անդամների քանի՞ մասնակցե՞լ են արդեօք դպրոցականներ:

Պ.- Այո, մեր ժողովներին մասնակցել են նաեւ դպրոցական տարիքի երեխաներ: Մաքսիմ Գորկու անուան դպրոցը գտնւում էր մեր աղօթատան մօտ, եւ նրանք, լսելով մեր ֆիլհարմոնիայի ձայները եւ երգեցողութիւնները, գալիս եւ լսում էին մեզ:

Հ.- Այսպիսով, դուք վարել էք ակտիւ կրօնական եւ հակասովետական ագիտացիա ամէնուրեք, որտեղ կարողացե՞լ եք:

Պ.- Այո, կրօնական քարոզ մենք վարել ենք ամէնուրեք: Ընդունում եմ, որ կրօնի մասին ուսմունքը հակադիր ուսմունք է Մարքս-Լենինեան գիտութեանը, եւ, հետեւաբար, մեր բոլոր քարոզների ընթացքում մենք ենք հակասովետական բովանդակութիւն:

Հ.- Տարեկան որքա՞ն անդամավճար էք դուք մուծել:

Պ.- Ես որքան կարողացել եմ՝ մուծել եմ: Դա կամաւոր մուիրատուութիւն է: 1937ին ես մուծել եմ 130 ռուբլի:

Հ.- Ինչի՞ վրայ էք դուք ծախսել համայնքի անդամներից ստացած այդ խոշոր հատուցները:

Պ.- Այդ գումարներից մենք երբեմն վճարել ենք անդամավճար ամիսը 250 ռուբլի եւ ֆինանսական աջակցութիւն ենք ցոյց տուել աղքատ ընտանիքներին:

Հարցաքննութեան արձանագրութիւնը ինձ ընթերցանել են ռուսերէնից հայերէն: Կազմուած է ճիշտ իմ խօսքերից:

Գալուստեան Երուանդ (ր. Յա-ր,4ա-ր,5ա-ր,6)

* * *

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» (ռուս.)

Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ՊԱՎի IV բաժնի պետ

Պետ[ական] ԱՆվտանգության ատաղ չէտենաան (Կոմիտասով)
« » մարտ, 1938

Տէր-Գալուստեան եղուանդ Գալուստովիչի
մեղադրանքի առիթով

ՄԵՂԱԴՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ես, ստեղիշազօր, ՆԳԺԿ ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի պետա-վտանգութեան կրտսեր չէտենաանտ Յովհաննիսեանս Ս., 1938 Մարտի 19ին քննելով ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ եղուանդ Գալուստովիչի (ծնուած 1893ին, Վանում (Թուրքիա), ոճրագործ - մասնաւոր արհեստաւոր, ծագումով՝ հոգեւորական, գրագէտ, բնակուել է երեւան ք[աղաք]ում) նկատմամբ քննչական գործը,

Հաստատեցի եմ հետեւեալը՝

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ եղուանդ Գալուստովիչը 1930ից երեւան ք[աղաք]ի «Աւետարանականներ» կրօնական համայնքի ակտիւ անդամներից մէկն է: 1936ից յանդուգն միջոցներ ձեռնարկելով օրը հասցրել է համայնքի խորհրդի անդամ եւ քարոզիչ:

Աւետարանականների հաւաքներում, ինչպէս եւ դրանից դուրս, կրօնական քարոզների տեսքով հանդէս է եկել եւ ապացուցել, որ իբր միակ ճիշտ ուսմունքը դա «աւետարանի» ճասիճ ուսմունքն է, որ՝ մնացած բոլոր գիտութիւնները կեղծ են:

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ ե, Գ. ապացուցում էր, որ ճօտենում է Քրիստոսի երկրորդ գալուստը, որի ընթացքում կրակով ոչնչացուելու է ողջ աշխարհը, բառիւսկս անաստուած երկրները՝ ՍՍՌՄի, եւ՝ որ այդ կրակից պիտի ազատուեն միայն հաւատացեալները՝ աւետարանականները:

Կանոնաւոր կրօնական ազիտացիայի եւ իբր «կարիքաւորներին» ֆինանսական աջակցութիւն ցոյց տալու ճանապարհով, ինքը խորհրդի այդ անդամների հետ միասին (այժմ՝ ձերբակալուած) անգիտակից մարդկանց հաւաքագրել է համայնքի մէջ:

Մեղադրեալ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆԸ ընդունել է, որ աւետարանականների բոլոր քարոզներն ունեցել են հակասովետական բնոյթ:

ՈՐՈՇԵՑԻ

Քննչական գործը ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵԱՆ եղուանդ Գալուստովիչի մեղադրանքով ուղարկել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿի հոսեակի քննարկմանը:

ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի ստեղիշազօր
Պետ[ական] անվտանգութեան կրտսեր չէտենաանտ (Յովհաննիսեան)

«Համաձայն եմ»
ՊԱՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի պետի տեղակալ
Պետ[ական] անվտանգութեան չէտենաանտ (Աբրահամ)

ՏԵՂԵԿԱՆԵՔ. Մեղադրեալ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵՒՆ երրորդ Գալուստովիչը ձերբակալուել է 16/III-38ին եւ պահուում է Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ներքին բանտում:

ՊԱԿՎի 5րդ բաժանմունքի IV բաժնի օպերլիազօր
Պետ[ական] անվտանգութեան կրտսեր լէյտենանտ (Յովհաննիսեան) (թ. 7)

* * *

Յաղորդագիր Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ եռեակի նիստի
թիւ 72 արձանագրութիւնից (հատ.)

28 Փետրուար, 1938

Լսեցին.

142. Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ ՊԱԿՎի IV բաժնի թիւ 7530 գործը՝ ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵՒՆ երրորդ Գալուստովիչի, 1893ի ծնունդ, երեւան բ[ազաք]ի բնակիչ, արհեստաւոր:

Մեղադրւում է այն բանում, որ, հանդիսանալով «Անուանական կրօնական հաստատութեան» կրօնական հաստատութեան անդամ, կրօնական քարոզներ անցկացնելու տեսքով, տարածել է ի/յ տարրիւ յոլեր սով[հատական] կարգերի հասցէին, ընդհուպ մինչեւ բանտարկութեան օրը եղել է ի/յ տարրերի շրջանում եւ շարունակել վարել հակասովետական աշխատանք:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵՒՆ երրորդ Գալուստովիչին դատապարտել ՌԱՀՃ տասը տարի ժամկէտով՝ սկսած 16/III-38ից (թ. 8):

* * *

ՍՍՌՄ Ներքին Գործերի Կոմիսար
Լ. Պ. Բերիայիին
Մետրոպոլիտի Իրքիոի ճամբարային կէտից կալանատեր
Տէր-Գալուստեան երրորդ Գալուստովիչից
Բողոք

Ձերբակալուել եմ Հայկական ՍՍՌ ՆԳԺԿ մարմինների կողմից Մարտի 16, 1938ին, երեւան քաղ[աք]ում, եւ, ինչպէս ինձ հաջող պարզ դարձաւ ընդամէնը մէկ ժամ տեւած քննութեան ընթացքում, այն բանի համար, որ անդամ եմ եղել երեւան քաղ[աք]ի առնուազնանական եկեղեցում, որը լուծարուել է Մարտի 2ին, 1938ին: Քննութեան արձանագրութիւնը կազմուել էր ռուսերէն: Հաղածանքներից վախենալով՝ ես ստորագրել եմ արձանագրութիւնը, չիմանալով դրա բովանդակութիւնը, քանի որ ռուսերէնից անգրագէտ եմ: Վեցերորդ օրը ինձ ՆԳԺԿից փոխադրեցին երեւան քաղ[աք]ի Կենտրոնական բանտ: Նախքան կալանաւորելու հանգրուանը, 1938 Մայիսի 30ին ինձ յայտարարուել է իմ բանտարկութեան մասին ՆԳԺԿ եռեակի որոշումը՝ 10 տարի ժամկէտով աշխատանքային ուղղիչ ճամբար:

Ես ապրած էի այդ որոշմամբ, քանի որ Ստալինեան Սահմանադրութիւնը նախատեսում է խոսքի եւ կրօնի ազատութիւն բոլոր քաղաքացիների համար, եւ այժմ ես ազատութիւնը փնտռում եմ Չեզ մօտ:

Ծնուել եմ 1893ին Թուրքիայում, Վանի վիլայէթում: Վեցամեայ երբոր տատս գրկուել եմ հօրից, եւ այդի մայրս դժուարութեամբ էր պահում մեր ընտանիքը: Տասներեք տարեկանիս հարկադրուած էի Վանում դերձակի մօտ աշակերտ դառնալ: Ահա արդէն 32 տարի է ինչ զբաղւում եմ բացառապէս իմ աշխատանքով (դերձակ)՝ չունենալով ոչ մի սեփականութիւն: 1915ին մեր ընտանիքը գաղթել է Երեւան [ք(աղաք)], որտեղ եւ գտնւում է մերկապուծս: Ահա եւ իմ ողջ անգոյն կենսագրութիւնը:

Էղնելով վերոշարադրուածից՝ խնդրում եմ Չեզ վերանայել իմ նկատմամբ Հայկական ՍՍՌ ՆԳԺԿ եռեակի ոչ ճիշտ որոշումը, ազատել ինձ եւ հնարաւորութիւն տալ, որպէսզի մեծացնեմ իմ երկու մանկահասակ երեխաներին, որոնք առանց կերակրողի են մնացել, որով հնարաւորութիւն կը տաք ինձ նաեւ սոցիալիստական շինարարութեան ֆրոնտում ապացուցել իմ անմեղութիւնը եւ՝ ապացուցել Ստալինեան Սահմանադրութեամբ ինձ տրուած իրաւունքը:

Ե. Տ.-Գալուստեան

15 Փետրուար, 1939
Երեւան ք[աղաք], Սվերդլովակի մարզ
ՆԳԺԿ Սեուրալուզի ճամբարային կէտ (թ. 18ա-բ,19) (ռուս.)

* * *

1939 Ապրիլի 15ին Հայկ[ական] ՍՍՌ Նախիջեւանի գործերի ժողկոմ, Պետ[ական] անվտանգութեան ժողկոմ Կոտոկովը հաստատել է ՆԳԺԿ քննչ[ական] բաժնի քննիչ, Պետ[ական] անվտ[անգութեան] քննիչ Գէորգեանի եզրակացութիւնն այն մասին, որ Տէր-Գալուստեանն ինքը ճանաչել է իր մեղքը, ճառ, հիմնուելով Սկրտչեան Ե. Ա.ի եւ Մանուկեան Տ. Գ.ի ցուցմունքների վրայ,

ՈՐՈՇԵԼ Է.

«Հայկ[ական] ՍՍՌ եռեակի որոշումը համարել ճիշտ եւ թողնել ուժի մէջ: Տէր-Գալուստեան երեսանող Գալուստովիչի յայտարարութիւնը մերժել, որպէս չհիմնաւորուած, ինչի մասին յայտնել իրեն» (թ. 21-22): (ռուս.)

* * *

Նոյնը հաստատել է ճառ Հայկ[ական] ՍՍՌ դատախազի տեղակալ Ե. Խաչիկեանը, երբ ճառուկ գործերի բաժնի դատախազ Կոցինեանը, եռեակի նկատմամբ Տէր-Գալուստեանի բողոքի հիման վրայ, «...ուշադրութեան առնելով, որ եռեակի որոշումը հակասաբանախօսանում է եղած գործի նիւթերին եւ, առաջնորդուելով Հայկ[ական] ՍՍՌ-ՔՒՕ 392 յօդուածով,

ՈՐՈՇԵԼ Է.

Համաձայնել Հայկ[ական] ՍՍՌ ՆԳԺԿ քննչ[ական] բաժնի քննիչի եզրակացութեան հետ: 15/IV-39 եռեակի որոշումը ուժի մէջ թողնելու մասին ՏԷՐ-ԳԱԼՈՒՍՏԵՄԻ յայտարարութիւնը թողնել առանց քննարկման եւ հակողական վարոյթը կարճել» (թ. 23): (ռուս.)

* * *

1961 թ. Ապրիլի 3ին Էրուանդ Տէր-Գալուստեանի կինը դիմել է Ներքին գործերի մինիստրի տեղակալ Ղազարեանին, խնդրելով փաստաթուղթ այն մասին, թէ ինչու է դատուել իր ամուսինը, եւ՝ որ. ըստ Ներքին գործերի մինիստրութեան յատուկարարութեան, Է. Տէր-Գալուստեանը մահացել է աքսորավայրում 1943 թ.: Ապա՝ 1961 թ. Ապրիլի 15ին, խնդրել է վերանայել ամուսնու դէմ յարուցուած գործը եւ տալ արդարացման տեղեկանք (թ. 26-27): (հայ.)

* * *

1961 թ. Մայիսի 17ին վկայ, թոչակառու Ամիրեան Արիստակէսը, հարցաքննուելիս, ասել է. «...Էրուանդ Տէր-Գալուստեանին որպէս հարեւան ճանաչում եմ վաղ ժամանակից: Նրա հետ բշնամութիւն եւ բարեկամութիւն չեմ ունեցել: Նա արհեստաւոր մարդ էր՝ դերձակ էր, գիշեր ու ցերեկ աշխատում էր, իր բազմանդամ ընտանիքը պահում: Ես նրա կողմից որեւէ դժգոհութիւն կամ հակասովետական արտայայտութիւն չեմ լսել: Նա անգրագէտ մարդ էր, եւ այդ է պատճառը, որ հաւատացեալ էր, յաճախ էր գնում եկեղեցի, սակայն այդ ամուսն տակ ... նրա կողմից ոչինչ չեմ նկատել: Նրան ճանաչող ամբողջ հարեւանութիւնը կը վկայի, որ նա հակասովետական աշխատութիւն չի եղել» (թ. 29բ): (հայ.)

* * *

Մէկ այլ վկայ Մարկոս Ղազիրեանը 1961 թ. Մայիս 17ին ասել է. «Ես նրան (Էրուանդ Տէր-Գալուստեանին - Ա.Ա.) գիտեմ որպէս խելօք ու խնդիճ, համեստ մարդու: Նա միշտ աշխատանքում եղել է դրական եւ աշխատասէր, սովել (է) իր ընտանիքը: Նրա մեղքն եղել է այն, որ հաւատացեալ էր ու հոգեւորականների հետ միշտ գնում էր եկեղեցի: Նեղանում էր, որ մենք վրան ծիծաղում էինք, թէ՝ ինչ ես հասկանում այդքան գնալուց: Ասում էր, որ ես մեռնեմ իմ հոգին կը գնայ դրախտ, եւ՝ այլ բաներ: Ես երբեք չեմ նկատել, որ նա պրոպագանդում լուրջ տարածի Սովետական իշխանութեան հասցէին կամ թէ՝ դժգոհութիւն յայտնած լինէր: Այդպիսի մեղադրանքը նրա նկատմամբ միտում չի. նա համարեա թէ անգրագէտ մարդ էր եւ բացի հոգեւորական աշխատանքից ուրիշ ոչինչ չէր պատկերացնում:

Ցուցմունքս գրուած է իմ բառերով, կարդացուած է, ճիշտ է, որի համար ստորագրում եմ» (թ. 30բ): (հայ.)

* * *

1961 թ. Մայիսի 17ին թոչակառու Միսակ Մանուկեանը վկայել է. «...Մանկութիւնից ճանաչում եմ Էրուանդ Տէր-Գալուստեանին: Նրա հետ բշնամութիւն եւ բարեկամութիւն չեմ ունեցել: Ես որքան նրան ճանաչում եմ, գիտեմ որպէս խելօք, համեստ ու անշուռ մարդու, ընտանիքով նա ծանրաբեռնուած էր: Ինքը ծաւանագիտութեամբ պարտուոյ էր եւ միշտ գիշեր ու ցերեկ աշխատում էր, որ կարողանար իր ընտանիքը պահել, նա կիսագրագէտ, բայց հաւատացեալ մարդ էր, սակայն նրա կողմից հակասովետական-պրոպագանդ յորեր Սովետական իշխանութեան հասցէին կամ թէ՝ որեւէ դժգոհութիւն չեմ տեսել: Կոնկրետ թէ ինչ յանցանքի համար եմ նրան դատապարտել, ես ոչինչ չգի-

Գեղեցիկին երկրպագու մեր նորածիլ տաղանդները պէտք է ճանչնան ոչ մէկ կարգախօս, փղշտացի ոչ մէկ քարոզիչ: Իրենց ընդունումը պէտք է առնեն ոչ Յիսուսէն եւ ոչ Պետրոսէն: Իրենց հոգին՝ իրենց համար պէտք է ըլլայ ոճեզոյց. իրենց հոգին՝ իրենց համար տեղեկի՛չ: Ծոդ բանան իրենց սիրտը աշխարհին վրայ իրբեւ պատուհան, բաղ յագենան եւ արբենան աշխարհներուն եւ մարդերուն տառապանքովն ու հրճուանքով, ըլլան կենսքին երկրպագու, տառապին ուրիշին տառապանքով, երբայրանան տիեզերքին, բայց երբ ըլլան իրենց հոգիին հետ գետին գլխի, ըլլան ճիճակ իրենց գերագոյն արքունեան հետ որ իրենց ապուեստն է՝ գոցնէն ամէն դուռ ու պատուհան եւ ականջ տան միայն ու միայն իրենց արտի տրտիին:

Մենք դրօշակակիրն ենք ա՛յս հանգանակին՝ որ ժխտումն է բոլոր հանգանակներուն: Պաշտպանեն ենք արուեստագէտին ազատութեան՝ ընդդէմ քաղաքացիին անազատութեան: Հայրենիքին սիրոյն՝ քերթող մը կրնայ լռե՛լ, կրնայ

վշրիլ իր քնարը: Կ՚արժէ ամէն ինչ վշրիլ հայրենիքին համար: Փշրել քնարը՝ բայց չփոթծիլ, ո՛չ մէկ բանի սիրոյն, ոո՛չինչ հայրենիքին: բռնագրօսիկ երգ յօդիմիլ:

Փշրուած քնար մը տխուր վիճակին մէջ ունի: Ինծո՛ւ երգ՝ հաւատամքին, կեդծիքին չիչող: Ու բոլոր ճարտիքէն առաջ, արտահատուղ ինքն է չիփոխահարը յաւիտենական ճշմարտութեան: Ասիկ գիտցիկ է մահը ազատութեան մէջ, բան թէ կեանքը՝ ստրկութեան:

ՅԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝

---

1 *Կը ժամին տե՛ս մեր՝ «Փաստաթղթեր Գրոլիեան. Համագումարը եւ Մասուհեան», Բա-նասէր, թիւ 10, 2002, էջ 78-85:*

ANTRANIK ZAROUKIAN'S REPORT ON SOVIET ARMENIAN LITERATURE
(Summary)

SEVAN DEYIRMENJIAN

The First Conference of Armenian Writers from the Middle East convened in Chtaura, Lebanon, on 18-20 September, 1948. Several reports were delivered and then discussed during this gathering. They covered the state of Armenian language, prose, poetry, theater and print media in the Diaspora. Antranik Zaroukian reported on Soviet Armenian literature. Unlike most other reports, Zaroukian's was not published at the time in his literary monthly, *Nayiri*.

Sevan Deyirmenjian discovered the text of this report in the private papers of Minas Tololyan, the secretary of this conference. Deyirmenjian reproduced the full text of Zaroukian's report, which clearly reflects Zaroukian's thoughts and concerns on Armenian Diasporan intellectuals as regards the state of Soviet Armenian literature of the time. The paper is also a good indicator of Zaroukian's own conceptualization of literature and its role in society.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

Վարդի Քէշիշեան, *Հալէպի Հայկական Գաղթօճախի Հասարակական-Մշակութային Կազմակերպութիւնները (1846-1915)*, Գէորգ Մելիտինեցի Գրական Միջազգային հրատարակութիւն, Անթիլիաս, 2001, 280 էջ:

Հայ եւ օտար մասնագիտական գրականութեան մէջ, շատ բան գրուած է հալէպահայ մայր գաղթօճախի պատմութեան մասին: Առկայ են հարիւրաւոր յօդուածներ, ուսումնասիրութիւններ, յուշագրութիւններ, առանձին հատցներու ներքուած մենագրութիւններ, մամուլի էջերուն ցրուած տղրակցութիւններ, ճանապարհորդական գրառումներ:

Առանձնապէս պէտք է յիշել ազնիւ երկասէր Արտաւազդ Արք. Սիրմէեանի *Պատմութիւն Հալէպի Հայոց (Քննական) 1355-1908* գիրքին Գ. հատորը (Փարիզ, 1950, 996 էջ) եւ Յովհաննէս (Օննիկ) Քոխմոզեանի *Միջնայն եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախներուն Պատմութիւն (1841-1946)* (Նիւեան, 1986, 372 էջ) գիրքերը: Յիշեալներէն առաջինը երէ խոցելի է իւր-իւր կողմերով ու չի դիմանար խիստ քննադատութեան, սակայ երկրորդը՝ արգաս ալ պատրաստուած ըլլայ գիտական բարեխղճութեամբ, կ՛ընդգրկէ նեղ ժամանակաշրջան մը միայն եւ չ՛ուրուագծեր գաղութին ամբողջական պատմութիւնը: Այնպէս որ, գաղութի պատմութեան առնչուող բազմաթիւ կարեւոր հարցեր ու երեւոյթներ հայ պատմագրութեան կողմէ տակաւին հարկ եղած յստակութեան չեն արժանացած ու կը սպասեն իրենց պատմաբանին:

Այս ուղղութեամբ կատարուած կարեւոր իրագործում մը եղաւ վերջերս հրատարակուած գրախօսուող հատորը, որ եկաւ միանգամս Սիրմէեանի ու Քոխմոզեանի գործերուն ու զգալի բաց մը գոցեց գաղթօճախի պատմութեան ներքուած առկայ գրականութեան մէջ:

Հեղինակը՝ Վարդի Քէշիշեան, բնիկ երեւանցի, սորուած է երեւանի Պետական Համալսարանի բանասիրութեան ճիւղը Մաշտոցոց Արուեստից տիտղոսով, եւ առնի քան տասնամեակէ մը ի վեր Հալէպ հաստատուելով հալէպահայ հին գաղութին մշակութային կեանքը ընտած է իրեն որպէս հետազօտութեան ծիր, այդ ուղղութեամբ ափիւռքահայ ու հայրենի մամուլին մէջ լոյս ընծայելով բազմաթիւ յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ:

Գաղթի պատմութեան ներքուած առաջին գործը չէ Քէշիշեանի այս հատորը, բայց այն իր բովանդակութեամբ եւ մանաւանդ ընդգրկումով կու գայ գոցելու զգալի բաց մը, ընդկայնացնելով 1846-1915 ժամանակաշրջանին Հալէպի մէջ գործած 48 կազմակերպութիւններու պատմութիւնը, կազմակերպութիւններ՝ որոնք մեծ մասամբ աննշանօրէն ճնացած էին ցարդ, ու այս գիրքով է որ առաջին անգամ լոյսին կու գան, իրենց հետ բերելով յաճախ հայ դպրոցի ու հայրենի օճախի յաստատման գործած տասնեակ մը մարդոց ներքումին, գործերուն ու ախտաճքին պատմութիւնը:

Ի սկզբան է ըսենք, որ Միսքէեանի նշեալ աշխատասիրութեան մէջ Քէշիշեանի յիշատակած 48 կազմակերպութիւններէն խօսուած է միայն երեքին մասին, Քոչարեանի մօտ՝ միայն երջի, իսկ Հ. Եփրեմ վրդ. Պօղոսեանի մօտ (Պօղոսեան առանձին գլուխով չէ ներկայացուցած հայէպահայ միութիւնները, այլ կռուանակի՝ գաւառի քաղաքներուն ու գիւղերուն մասին խօսած ժամանակ միայն)՝ իմն[1]: Այնպէս որ, երէ Միսքէեանի եւ Քոչարեանի մօտ եղող երկութիւններն ալ չ'ունի ունենալիք, գրախօսուող հատորը լոյսին կը բերէ ցարդ բոլորովին անծանօթ 31 կազմակերպութիւններ՝ իրենց գործունէութեան զանազան ոլորտներով ու մանրամասնութիւններով: Պիտի չմոռնալ նաեւ, որ վերոյիշեալ երեք հեղինակներն ալ ճիշդին անդրադարձած են չատ հարեւանցի, մինչ եւ իրենց մօտ ընդամէնը երեք-չորս տողով ներկայացուող միութիւններ Քէշիշեանի մօտ երեսներուն վրայ տարածուած են քանի մը էջով:

Ներածական մուտքին մէջ հեղինակը ամփոփ տողերով կ'անդրադառնայ իր աշխատանքին տուն տուող դրդապատճառներուն, իրատացիօրէն ցնելով թէ «Հարց արդէն հասունցած է հայէպահայ պատմութեան խիստ ուշագրաւ հասարակական, կրթական եւ մշակութային կազմակերպութիւնները ուսումնասիրութեան առարկայ դարձնելու խնդիրը, որ պիտի գայ լրացնելու մեծ եւ չատ կարեւոր բաց մը գաղութին ամբողջական պատմութիւնը ուրուագծելու առումով» (էջ 7):

Քէշիշեանի հատորը կը բացուի 32 էջերու վրայ երկարող պատմական ընդարձակ ակնարկով մը, որ ճեւով մը հայէպահայ հին գաղութին ամփոփ պատմութիւնն է, ու կը նախապատրաստէ ընթերցողը նիւթի ընկալումին: Ան կը սկսի գաղութի կազմաւորմամբ ու հնագոյն շրջանի պատմութեամբ, յետոյ կ'անդրադառնայ Կիլիկիոյ կաթոլիկոսներու ժամանակաւորապէս Հալէպ հաստատուելու փաստին, գրչութեան դպրոցի գործունէութեան, արհեստակցական «էսնաֆութիւններու՝ համքարութիւններու գոյութեան ու աշխատանքի ծիրին, արուեստի ու արհեստի միջեւ տարաձգիկ վաճառականութեան մէջ հայէպահայ խոճաներու դերին, Պոլսոյ հայոց Պատրիարքարանի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեանց հետ Հալէպի Առաջնորդարանի յարաբերութիւններուն, 1908ի օսմանեան սահմանադրութեան հետեւանքով առեղծուած նոր իրավիճակին, հասկ՝ անդրադառնալով նաեւ գաղութի ճշտաւուղ ժողովրդական դիմքերուն, ուրուագծելով գրողի ու հասարակական գործիչի անոնց դիմագծերը:

Այս բաժնին մէջ յատուկ ուշադրութեան արժանացած են երկու ճիւթեր, որոնց մասին խօսուած է առանձ մանրամասնութեամբ. առաջինը՝ հայկական գաւառներէն ու Կիլիկիայէն պատերազմներու Հալէպ հոսքն է, իսկ երկրորդը՝ տեղւոյն Ազգային Նեղսէհեան Երկսեռ Վարժարանին գործունէութիւնը: Զարմանալի ալ չէ այս ճիւթերուն վրայ ծանրանալու հեղինակին մտադրութիւնը, որովհետեւ, իճչպէս ան իր գիրքին ընթերցումով կը պարզուի, Հալէպի մէջ գործած միութիւնները, քիչ բացառութեամբ, հիմնուած են կա՛ւ սատարելու տեղւոյն ազգային վարժարանին, եւ կամ ալ հիմնուած են պատերազմներու կողմէ՝ օգտակար ըլլալու հայրենի գիւղին, նկեղեցիին ու դպրոցին: Այնպէս որ

այս երկու միտքերուն առաւել ծանօթացումը կը նպաստէ աւելի յստակ ընկալելու հատորին մէջ ներկայացուած փաստերն ու տեղեկութիւնները, եւ կը նպաստէ խոստափելու աննեղի կրկնութիւններէ:

Ի՞նչ նշած է յիշեալ ժամանակաշրջանին հայկազեան թիւը: Հեղինակը, մատնանշելով հանդերձ որ առույգ վիճակագրութիւններ կը պակսին, մէկտեղած է առկայ առեալներն, որոնցմէ կը պարզուի որ հայ առաքելական համայնքի թիւը 1880ականներու սկզբնաւորութեան տարաբերած է 2000ի չափ, Համաշխարհային Առաջին Պատերազմի նախօրէին հասնելով 6500ի: Ու երեւակայել, որ այս փոքրաթիւ գաղութն է որ տասնամեակներու վրայ ծնունդ առած է գիրքին մէջ յիշուած 48 միութիւններուն:

Արժէ գիտնալ նաեւ թէ ինչ էր յիշեալ միութեանց անդամներու թիւը, եւ քանիներ ներգրաւուած են միութենական կեանքին: Տրուած բարերարչի թիւը եղած է 165, կայ նաեւ 160 անդամ ունեցող միութիւն մը: Մնացեալները ունին հասնետ են իրենց թիւով, մանաւանդ՝ հայրենակցական խմբաւորումները:

Այս ընդարձակ ակնարկէն ետք կու գայ բուն միտքը, զոր հեղինակը բաժնած է երեք խմբաւորումներու.- ա) Հալէպ հաստատուած միութիւններ, բ) հայրենակցական ընկերակցութիւններ, եւ վերջապէս՝ գ) մասնաճիւղեր: Խոստացիր բաժնի մէջ միութիւնները ներկայացուած են իրենց հիմնադրման ժամանակագրական կարգով:

Առաջին բաժինը, որ ամէնէն ընդարձակն է ու կը գրաւէ գիրքին 145 էջերը, ուսիցուած է, ինչպէս ըսինք, «Հալէպ Հաստատուած Միութիւններուն: Ներկայացուած են 26 միութիւններ, որոնք գրեթէ առանց բացառութեան հիմնուած են տեղւոյն կրթական շարժառիթի ճղոմ տակու եւ մշակութային կեանքը աշխուժացնելու նպատակով:

Հալէպի մէջ գործած միութիւններէն առաջինը «Ուրիենան Ընկերութիւն»ն է, հիմնուած խումբ մը ազգասէր աղջիկներու կողմէ, 1846ին: Անոր գիտցած նպատակը եղած է «հայերէնը ծանկնցնել Թնրիայի մէջ»: Միութեան հիմնադրութեան խթան հանդիսացած է տեղւոյն քահանայ հայրերէն Տէր Գէորգ Տէր Մարգարեանի չորս մը Պոլիս գտնուիլը. ան տեսնելով տեղւոյն «բարեկարգուած եւ լուսաւորեալ դպրոցներու յառաջդիմութիւնը», եւ իմանալով բարեսիրական-մշակութային միութիւններու առ այդ խաղցած դրական դերին մասին, նպատակած է նոյնօրինակ միութեան մը հիմնումին՝ Հալէպի մէջ:

Հետաքրքրական միութիւններ են Արամեան Խնայողական եւ Առեւտրական Միութիւնները, որոնք կը միտէին գործ տալ կրթական կեանքին եւ նպաստել երիտասարդներու ճօտ առեւտրական դաստիարակութեան: Անոնք կը միտէին «Հալէպի մէջ գտնուող հայազգի իդեալական երիտասարդներ մասնակից ընել ժամանակիս յառաջդիմութեան բարեացը՝ որոնք գիտատրապէս երկոքի կը բաժնուին. այսինքն ուսումն եւ վաճառականութիւն» (էջ 49): Բաժնետիրական-շահակցական հիմնումներով գործող այս միութիւնները ծրագրած էին հիմնել վարժարան մը Հալէպի մէջ, եւ արհեստից դպրոց մը Կիլիկիոյ հայաշատ կեդրոններէն մէկուն մէջ:

Կարելի չէ առանց յուզումի կարդալ Հայէպ ապաստանած սասունցի երիտասարդներուն հոգատարութեան համար ստեղծուած «Սասունցի արհեստաւորաց մասնաժողով»ին (1908) նուիրուած գրուխը: Այդ պանդուխտ երիտասարդները, որոնք բոլորն ալ անխտիր կ'աշխատէին փուռերու եւ ջաղացքներու մէջ, այնքան վատառոջ էին ու հիւանդկոխ, որ անոնցմէ ամէն տարի հողին կը յանձնուէին 25-28 մատղաչ գոհեր. հետեւաբար, Ազգային Առաջնորդարանի անմիջական հսկողութեամբ հիմնուած այս մասնաժողովին առաջին ու կարեւորագոյն գործը կ'ըլլայ անոնց յառուկ դարմանատան մը հիմնումը:

Այս բաժնին մէջ յիշատակուած միութիւններուն մէջ քիչ չէ ծանր թիւը «փափկասուն» տիկիններու կողմէ հիմնուած միաթիւններուն, որոնք ծնունդ առած են տեղւոյն իգական սեռի դաստիարակութեան հոգ տանելու նպատակով: Անոնցմէ առաջնեկը պիտի յիշել «Հայուհեաց մասնեաղարթաց խնամակալութիւն»ը, հիմնուած 1907ին, որ նպատակ ունեցած է «Թերիաբնակ հայուհեաց բարոյական կրթութեան եւ մտքի զարգացման ջերմութիւններ ընծայել, անոնց մէջ արթնցնել ընթերցասիրութեան ախին եւ միանգամայն վիճակին հայ գիւղօրէից մէջ աղքատ ուսանողուհեաց գրեթէական պիտոյքն հոգալ» (էջ 103): Իր գոյութեան կարճ ժամանակամիջոցին, միութիւնը յաջողած է իր միջոցներով Առաքազարի Հայուհեաց Վարժարան ուղարկել Հալէպի երկրաշարժեայ կրթական ճշակներէն Կարապետ Կարիկեանի դուստրը՝ Նուարդը, որ Ազգային Ներսէսեան Վարժարանի շրջանաւարտուհիներէն էր: Ան այս, երկու կռնիքներ միջեւ սառչազգուած է համաճայնագիր մը, ըստ որուն Ներսէսեանի կրթաբոշակը, ինչպէս Առաքազար երթեղարձի ու այլ ծախսերը, իսկ Կարիկեան յանձնառու կ'ըլլար իր ուսումնառութեան տարիներուն թիով պաշտօնավարելու Հալէպի Ազգային Ներսէսեան Վարժարանի աղջկանց բաժնին մէջ, վարժարանի հոգաբարձութեան ճշդած ամսաթոշակով: Ու իրօք, յիշեալը երեք տարուայ ուսումնառութեան շրջանը աւարտելէ ետք կը վերադառնայ Հալէպ ու կը ծառայէ վարժարանին, շրջան մը առանձնելով նաեւ անոր տնօրէնութիւնի պատասխանատուռ պաշտօնը:

Հալէպահայ միութիւններուն մէջ ուշագրաւ երեւոյթ է «Աղբիւր» Պատանեկան Միութեան գոյութիւնը, հիմնուած մօտաւորապէս 1910ին, ի յիշատակ ազգային-ազատագրական պայքարի հերոս Սեբաստ Աղբիւրի:

«Աղբիւր»ը, որ հալէպահայ առաջին պատանեկան միութիւնն էր, իր ոչ այնքան երկար կեանքի ընթացքին ծառայած է լայն գործունէութիւնե՛ առաւելապար մշակութային եւ մարզական բնագաւառներու ծիրէն ներս: Ունեցած է իր սեփական գրադարան-ընթերցարանը, հրատարակած է հալէպահայ առաջին հայերէն թերթը՝ *Ճչդինչը* (ի դէպ, ՀՅՀ-ի հետ առիթի մը վրայ հիմնուելով աւելի հրատարակութեան քառակուսը գարշ ծանօթ քառակուսէն (1913) երկու տարիով հետ տարած է), կազմակերպած է «Մոլիմպիական» խաղեր, ստեղծած է Ֆոթբոլի խումբ, որ թեթեւ առաջինն էր քովաճեղակ Սուրիոյ տարածքին, հաստատած է գիշերային վարժարան, տուած է բառերական ճեպախօսքումներ, եւն., եւն.:

Ին այսպէս, իրար կը յաջորդեն «Ազգային «Ցառաջ» Ընթերցատունը», «Անդրանիկ Քաոներախումբը», «Կիլիկեան Քահանայական Միութիւն», «Հայ Երիտասարդաց Նուագախումբը», Հայ Գրերու Գիտի եւ Տպագրութեան յոբելեանական հանդիսութիւններու նկատագրութիւնը, եւն., եւն.:

Գիրքին երկրորդ բաժինը՝ «Հայրենակցական Ընկերակցութիւններ» վերնագրուած, ընդգրուած է հայկական տարբեր գաւառներէ Հալէպ հաստատուած պանդուխտներու հայրենակցական հիմունքներով ստեղծած միութիւններուն: Այս բոլոր միութիւններն ալ ունեցած են ընդհանուր մէկ յայտարար՝ աստարել հայրենի քաղաքին կամ գիւղին նկեղեցիին, հիմնել վարժարաններ կամ բարեկարգել այդէն իսկ գոյութիւն ունեցողները եւ օգնել անկար ու կարօտ հայրենակիցներուն:

Հայրենակցական խմբաւորումներու հիմամբ միութիւններ ունեցած են Ալաքլիւն ու իր գիւղերը՝ Շագը (երկու միութիւն), Ածկյողին (երեք միութիւն), Մաչկնտուր (երեք միութիւն) եւ Սաղլիան, Կիւրիւն քաղաքը, եւ վերջապէս Ծիշկածագի գիւղերը իրենց ոտր միութիւններով: Ընդամէնը՝ 19 միութիւն:

Հայրենակցական միութիւններուն մէջ իր գործունէութեամբ առանձին ուշագրաւ է 1863ին կիւրիւնցի վաճառականներու կազմած «Նահանեան Ընկերութիւն»ը, որ իր կէսդարեայ գոյութեան ընթացքին կրցած է մեծապէս նպաստել Կիւրիւնի կրթական կեանքին: Ան իր հիմնադրութենէն կարճ ժամանակետք յաջողած է գոյացնել 500 ոսկիէ պատկառելի դրամագլուխ մը, որ ապրիլ եռք բարձրացած է 1991 ոսկիի: «Նահանեան»ը կրցած է տարեկան 60 ոսկիէ նպաստ մը հասցնել Կիւրիւնի առնուազն հինգ վարժարաններուն, իր միջոցներով կառուցած է քանի մը նոր վարժարաններ, երբեմն հալէպէն ղրկելով նոյնիսկ անոնց վարժապետները: Միութիւնը Կիւրիւնի վարժարաններուն ապագան ապահովելու համար հաստատեր կազմած է գնած է Պաբումի մէջ եւ երկու չէնքեր կառուցած Մամռնի մէջ, ու անոնց տարեկան եկամուտներով ապահոված է հայրենի վարժարաններուն ապագան: Հայրենակցական միս խմբաւորումները ընդհանրապէս ունեցած են գործունէութեան նեղ շրջանակ (անոնց մասին խօսող աղբիւրներն ալ բաւական փշուր են ու անբաւարար): Հայրենի խրատաբեր շրջանի միութիւնները ներայացնէ առաջ, հեղինակը նախ հանկիրճ գիծերով տուած է յիշեալ գիւղին կամ քաղաքին անցիւղի պատմութիւնը, ու չեռոյ միայն անդրադարձած միութիւններու գործունէութեան:

Գիրքին վերջին՝ «Մասնաճիւղերու բաժնին մէջ հեղինակը կը խօսի Եղեհնոյ եւ Պոլսոյ մէջ հիմնուած երկու տարբեր միութիւններու առաջ հանդիսանալու համար Հալէպի մէջ ստեղծուած անոնց մասնաճիւղերուն մասին: Առաւել հետաքրքրական է Սան Փաւլոյի (Պրազիլ) մէջ 1912ին, նախկին հալէպահայերու հիմնած միութեան գոյութիւնը, որ, ինչպէս հեղինակը կ'ենթադրէ, կազմուած էր բարեհիրական նպատակներով եւ Հալէպի հայ գաղութին օգնելու առաքելութեամբ:

Աչքառու երեւոյթ է որ միութիւններու գործունէութեան հիմնական նպատակներէն մէկը եղած է նիւթական միջոցներ ապահովելը՝ կարենալ հրազար-

ծիչու համար կրթական-ճշակութային եւ բարեսիրական իրենց ծրագիրները: Կային նկատուած առաքելական զանազան աղբիւրներ՝ անդամավճառ, ճարիբատուրիւն, հատրաբեր ծառայարկներ՝ թատերական ներկայացումներ (1911ին ներկայացուած է Շեքսպիրի *Համլէտը*), մարզահանդէսներ, սիմճեանի կամ այլ ձեւի համդէսներ, հատաքուած գումարներու շահագործում՝ տոկոսով կամ վաճառականական գործառնութիւններով, եւն.: Պէտք է ճշդել որ, 1866ին հիմնուած «Բերիոյ բարեսիրաց ընկերութեան» անդամ ազարկիրցի վաճառականները իրենց միջեւ ստեղծած էին առաքի դրութիւն մը, ըստ որում ապառաժուած իւրաքանչիւր չեղի դիմաց առնալ վաճառականը միութեան գանձանակը կը մուծէր մէկ դրուշ:

Հալէպահայոց ճշակութային այս եռուն կեանքը կանգ կ'առնէ յանկարծ 1915ին: Վերայ կը հասնի Մեծ Եղեռնը ու ճշակութային եռուն կեանքով ապրող Հալէպը կը դառնայ գլխաւոր բառերաբերդը արեւմտահայ գաղթականութեան:

1918ի զինադադարէն ետք կը հիմնուին նոր միութիւններ, մեծ մասամբ՝ հայրենակցական բնոյթի, որոնք կը շարունակեն հիմներու գործը: Արժէ որ հայ բանասէր մը առանձին ուսումնասիրութեան ենթարկէ յետեղեռնեան շրջանի այս հարիւրաւոր միութիւններու գործունէութիւնը: Օրինակ, 1920ականներուն, միայն Խարբերդի ու իր շրջակայ գիւղերը առանձինն ունեցած են 26 հայրենակցական մեծ ու փոքր միութիւններ կամ խմբակցութիւններ: Պատրաստուելիք այսպիսի հատոր մը պիտի ըլլար գրախօսական գիրքին անփոխարինելի շարունակութիւնը եւ մանրանկարը Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ գաղթական հայութեան:

Ոչքան ծանօթ է մեզի, տակաւին հայկական ո'չ մէկ գաղութի կամ հայրենի ոչ մէկ քաղաքի ճշակութային կազմակերպութիւններուն պատմութիւնը ուսումնասիրութեան ու վերլուծումի առարկայ դարձած է այնքան խոր ու համապարփակ ձեւով: Հ. Եղիշէ Պողոսեանի նուիրատու գործը, որքան ալ հետաքրքրական ու արժէքաւոր, չափազանց ամփոփ է ու անոր կը պակսին վերլուծական բաժինն ու շարադրանքը, մանաւանդ որ իւրաքանչիւր միութիւն հոն կը ներկայացուի չափազանց սեղմ տողերով միայն:

Գրախօսուող գիրքը առաջ կ'արժեւորուի անոր համար որ ձեռնարկը առաջնագոյն չափով օգտագործած է Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանին հարուստ արխիւը: Երբեմն անշուշտ կարծուած արձանագրութիւն մը բաւարար եղած է յայտնաբերելու անծանօթ միութեան մը գոյութիւնը, կամ յոյս սփռելու չյուսաբաններուն զանազան հարցերու եւ երեւոյթներու վրայ:

Երբ կը խօսինք Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի արխիւային նիթերուն մասին, հարցում մը ակնարկ կը պարտադրէ ինքզինք. այս վաւերաթուղթերը ինչպէ՞ս վիճակած են Միրզէեան Արքեպսկոպոսի աչքէն, ու ան ինչու՞ չէ օգտագործած զանոնք իր առաքելաւոր աշխատութեան մէջ, ուր երբեմն բազմաթիւ էջեր տրամադրած է ոչ այնքան կենսական նիթերու, եւ ընդարձակ մէջբերումներ կատարած դիւանական տոմարներէ ու նիստերու արձանագրութիւններէ, մինչ փոխարէնը, ամփոփած է պատմութիւնը գաղթի կրթական-ճշակութային կեանքին մէջ այնքան մեծ դեր խաղցած բազմաթիւ միութիւնե-

յու., որոնցմէ պէտք է գրէր առնուազն «Ազգային Նեթսէնեան Վարժարանի Հիւրանոցատրոնից Միութեան» եւ «Հայոհնաց Մասնաճիւղաթաղի Խնամակալութեան» մասին:

Դիւրին բնութագրումը անգամ մը եւս կը հաստատէ մեզ թէ որքա՜ն «անքեղուած գաղծեր» կան տակաւին մեր ձեռքի էջերուն ու դիւանատուներու փոշոտ հատաքածոներուն մէջ, եւ որոնք կը սպասեն գուրգուրոտ վերաբերմունքի եւ զիրենք յայտնաբերող ու լոյսին յանձնող նուիրեալներու:

Դիւրին նեղում է ու անքերի եւ կը կարդացուի մեծ հանգրտով, հետազրգռական վէպի մը նման: Վստահ ենք որ ան անհատնում առատդ պիտի ճառակարարէ բոլոր անոնց, որոնք վաղը պիտի գրեն ամբողջական պատմութիւնը հալէպահայ գաղթօճախի մշակութային, կրթական, եկեղեցական, թատերական, երաժշտական, մարզական եւ տնտեսական կեանքին:

Երբ ընդունինք որ հալէպահայ հին գաղութին պատմութիւնը գեղեցիկ խճանկար մըն է, կազմուած գոնեառը բազմաճեւ ու բազմագոյն սալիկներէ, ապա անոր եկեղեցական պատմութիւնը՝ առաջնորդական գահազան ո կրօնական կեանք, ճօտ կէս դար առաջ թուղթին յանձնած էր արդէն Միսմէեան Արքազանը: Վարդի Քէշիշեանի գրախօսառող հատորով կ՚ամբողջանայ խճանկարի եւս մէկ սալիկը՝ մշակութային-հասարակական կազմակերպութիւններու պատմութիւնը: Խճանկարին վրայ տակաւին բաց կը մնան գաղութին կրթական կեանքին, գեղարուեստին, տնտեսական-վաճառականական աճքնարին, գրականութեան, կիրառական արուեստին ու վերջապէս՝ հարուստ առանձներ ունեցող գիչերթեան դպրոցին յատուկ տալիկները:

Վերջին երեք ծերթերուն վրայ աշխատելու խոստումը չեղնայլ տառած է արդէն հեղինակը՝ գրախօսառող հատորի վերջաբանութեան իր կենսագրական ամփոփ տողերուն մէջ:

Կը յուսանք որ անոնց իրագործումը չ՚ուշանայ:

ՄՈՎՍԷՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1-Հ. Եփրեմ Վրդ. Պօղոսեան, *Պատմութիւն Հայ Մշակոյթային Հիմնարկութիւններու*, Ա. հատոր՝ 1957, Բ. հատոր՝ 1963, Գ. հատոր՝ 1969, Վիեննա:

Բախտիար Յովակիմեան, *Պետրոս Ադամեանի «Ընթացիր եւ Իր Համբաւը...» Գրքի Ստեղծման Պատմութիւնը*, «Ասողիկ» հրատարակչութիւն, Երեւան, 2002, 70 էջ:

Համաշխարհային բանասիրութեան, գրականագիտութեան եւ թատերագիտութեան յարատեւող ուշադրութեան կենտրոնում եղել եւ շարունակում է մնալ Ուիլեամ Շեքսպիրը՝ աշխարհի ամենաառեղծուածային հեղինակներից մէկը. իր մոյնքան առեղծուածային հեղոյն՝ Դանիմարքայի ազգայազգ Համլետի հետ մէկտեղ: Հարիւրամեակներ շարունակ հեղինակը եւ նրա հերոսը եղել են ամենատարբեր դիտարկումների եւ վերլուծութիւնների, իսկ աշխարհի այլեւայլ ժողովուրդների՝ Շեքսպիրին առնչուելը բարդաբարդուած յիմնդու չափանիշներից է, ուստին ամգլիացի թատերագրի ստեղծագործութեան եւ մի առանձին ժողովրդի միջեւ եղած ամենատարբեր իրողութիւնների վերհանումը առաջնակարգ խնդիր է բազմաթիւ ազգերի, այդ թւում եւ՝ հայ գիտնականների համար:

Նման ուսումնասիրողներից է թատերագէտ եւ բանասէր Բախտիար Յովակիմեանը: Հայ շեքսպիրագիտութեան ասպարէզում նա հանդէս է եկել մի քանի կարեւոր աշխատութիւններով, մասնաւորապէս Շեքսպիրագիտութեան Հայկական Կենտրոնի հրատարակած *Շեքսպիրագիտութեան* (Հայկական Շեքսպիրագիտութեան Տարեգիրք, խմբ.՝ Ռուբէն Զարեան) մասնակցելով եւ այլուր հանդէս եկած յօդուածներով, *Պետրոս Ադամեանի Շեքսպիրեան Նկարագիրը* գրքոյկով (Երեւան, 1998) եւ յատկապէս հայ թատրոնի պատմութեան համար դարակազմիկ նշանակութիւն ունեցող եւ հայ թատերագիտութեան մէջ տարբեր կարծիքներ առաջացրած «Շեքսպիրի Մուտքը Հայ Թատրոն» խնդրի յուսաբանմամբ[1]: Այս չարքը համալրուեց Յովակիմեանի նոր ուսումնասիրութեամբ՝ հայկական շեքսպիրականի առաջին ակնառու արտայայտութեան՝ ականաւոր դերասան Պետրոս Ադամեանի (1849-1891) *Ընթացիր եւ Իր Համբաւը Ողբերգութեան Ազդիւրն Ու Զննութեան Առիթները* (Թիֆլիս, 1887)[2] գրքի առեղծման պատմութեանը նուիրուած 70 էջանոց գրքոյկով:

Ծանրագանգրած չենք լինի ասելով, որ այս աշխատութիւնը մի արժէքաւոր ներդրում է ոչ միայն հայ թատրոնի, այլեւ քննադատութեան եւ առհասարակ՝ հայ շեքսպիրականի պատմութեան համար: Ինչու գրքոյկը վերնագրուած է *Ընթացիր եւ Իր Համբաւը... Գրքի Ստեղծման Պատմութիւնը*, սակայն հեղինակը բուն այդ խնդրին նուիրել է աշխատութեան երկրորդ գլուխը («Համլէթը Ստեղծման Պատմութիւնը», էջ 30-49), հանգամանօրէն անդրադառնալով նաեւ յարակից հարցերի: Ադամեանագիտութեան համար յատկապէս կարեւոր է առաջին գլուխը՝ «Շեքսպիրին Ծանօթանալու Նախադրեալները» (էջ 5-29), որտեղ հեղինակն արիւնաչին եւ տպագիր նիւթերի համադրմամբ ներկայացրել է Ադամեանի՝ շեքսպիրեան ճանապարհին ծանօթութիւնները, առկայ սակաւ փաստերի հիման վրայ կատարելով ուշագրաւ դիտարկներ: Երրորդ գլխում («Համլէթը» Արձագանքները Ու Գնահատութիւնները», էջ 50-70) հե-

դինակն անդրադարձել է Աղամեանի կենդանագործման օրօք Թիֆլիսի մամուլում լոյս տեսած դրական եւ բացասական անդրադարձներին:

Մի առանձին գրքի մի ամբողջական աշխատութիւն նուիրելը կարելի է բացատրել երեսյթի գրապատմական բացառիկ նշանակութեամբ: Թէեւ Աղամեանի սկզբնական նպատակը եղել է չատ համեստ («Տեսնելով Ազգիս այս սէրն ու եռանդը՝ առ այն տիեզերահռչակ հանճարն, քաջալերուեցայ. եւ ոգեւով ննջա լաւ ծանօթացնել Ընքսպիրին, աշխատեցայ այլ տեղեկութիւններ հաւաքել նորա վրայօք, եւ հաղորդել Հայ հասարակութեան», էջ 70), սակայն նախնական ծանօթութիւն ներկայող այս աշխատանքով փաստօրէն հայ իրականութեան մէջ գիտական չընքսպիրագիտութեան հիմքն է դրուել: Յովսէփեանի եզրակացութեամբ՝ «Նա ապացուցեց, որ իմքը ոչ միայն հոգեբանական մեկնաբան մեծ դերասան է, այլեւ հնուտ գիտնական» (էջ 41): Հետիոտն ցոյց է տուել չընքսպիրեան թեմայի առկայութիւնն Աղամեանի այլ ստեղծագործական կեանքում, յատկապէս Համլետի կերպարի հետ նրա հարաբերութիւնը եւ ընդհանրութիւնները (էջ 68-69), նշելով, որ «Աղամեանի Համլետն էլ եղել է իր «Համլէթ» գիրքը» (էջ 70): Միանգամայն դիպուկ կերպով Աղամեանի բանաստեղծութիւններից («նուագներից») մէկը նա համարել է ներշնչուած Ընքսպիրի սոնետներից (էջ 48): Յովակիմեանը երբեմն կատարել է առաջին հայեացքից կտրուկ, սակայն ի վերջոյ համոզիչ թուացող եւ մտածելու դրդող յայտարարութիւններ. օրինակ, որ մեծ տաղանդով եւ աշխատասիրութեամբ օժտուած Աղամեանը չընքսպիրեան թատրոնի առաջին մեծութեան աստիճանի հասել է տեսական չընքսպիրագիտութեամբ (էջ 20): Կամ՝ «Իսամանակին ոչ մի գիրք այնքան ուշադրութեան չի արժանացել, որքան Պետրոս Աղամեանի... գիրքը» (էջ 50), ինչն, անշուշտ, ճշմարիտ էր 1880ականների վերջի համար: Եւ կամ՝ «Երբէ Ընքսպիրն իր մտորումներն արտայայտել է Համլէտի «լինել թէ չլինել» մենախօսութեան մէջ, ապա Աղամեանը նոյն բանն արել է իր «Համլէթ» գրքով: Դա էլ եղել է նրա կեանքի «լինել թէ չլինելու մենախօսութիւնը եւ նկել այն եզրակացութեան, որ իր կանքն ապացուցելու համար պէ՛տք է լինել» (էջ 68):

Ուսումնասիրելով մեզ հասած Աղամեանի գրադարձի նմոյշները՝ Յովսէփեանն իրաւամբ ցոյց է տուել, որ Պետրոս Աղամեանը Ընքսպիրի մասին գիրքը գրելիս օգտուել է Ֆրանսալեզու գրականութիւնից: Թեմային առնչուող փաստերը վկայակոչելով եւ վերլուծելով հանդերձ նա երբեմն հայ ճշմարտի պատմութիւնից բերել է նիւթին ոչ անմիջապէս առնչուող, սակայն ուշագրաւ եւ պատմի հետաքրքիր դարձնող զուգահեռներ (ինչպէս՝ Աղամեանի ամուսնաց թատերախմբերի, գրական գործերի հեղինակ հայ դերասանների, հեղինակի կողմից դերակատարուին ընդառաջելով թատերախաղի մէջ փոփոխութիւն կատարելու օրինակները):

Տեղեկութիւնների ժլատութեան դէպքում Յովսէփեանը յաճախ արտայայտել է սեփական դիտարկումները՝ գալով տրամաբանական եզրայանգումների: Այսպէս, մի այնպիսի սկզբունքային հարցի հերքման վրայ, ինչպիսին Շիլվանզադէի կարծիքն է, որ իբր «Աղամեանը, ինչպէս եւ այլ ժամանակակայ

բոլոր թուրքահայ դերասան-դերասանուհիները. Կ. Պոլսից [Զմյռնիա] նկել են մատուռապես գրեթե բոլորին» (էջ 8)՝ նա 17 էջ է նուիրել հատոցիչ փաստարկումներով ապացուցելով հակառակը: Յայտնի է, որ Պոլսից Զմյռնիա գալու յաջորդ ամսից իսկ Աղամեանցի անունը կապուել է Հաշէտեի հետ, ինչը խօսում է յօգուտ դերասանի պատրաստուածութեան, որ նա «արդէն նախապատրաստուած է եղել այդ մեծ թափքը կատարելու համար» (էջ 25): Յովակիմեանը վկայակոչում է նոյն թատերական միջավայրում ապրած թատերագիր-բանաստեղծ Պետրոս Դուրեանի չեզոպիտեան իմպրուիզացիաները եւ դրանից բիաղ տրամաբանական եզրակ. «Հնարաւո՞ր է ընդունել, թէ Դուրեանը ծանօթ է եղել Չեզոպիի գործերին, իսկ Աղամեանը՝ ոչ» (էջ 13): Քաղաքագէտը Չիրվանզադէի կարծիքը հերքել է՝ հիմնուելով նրա իսկ խօսքերի վրայ, ըստ որի «Չեզոպիի պիէսները ես (Աղամեանը - Ա.Բ.) Կ. Պոլսում տեսել է Օղրիջին եւ յարիշտակուել ոչ այնքան պիէսներով, որքան դերասանի խաղով» (էջ 9): Այսինքն, եթէ Աղամեանը դիտել է 1858ին կամ մի քանի տարի անց Կ. Պոլիս հիւրախաղերի եկած ամերիկացի ճչացաւոր սնուանդեր դերասան Ջրեա Օղրիջի ներկայացումները, ապա թատերագէտը պատահին չէր կարող այդ ամբողջ տպաւորութեան տակ չհետաքրքրուել «Օթելլո» պիէսով ու նրա հերոսով» (էջ 10): Ի դէպ, այստեղ ցանկանում ենք մի լրացում կատարել: Յովակիմեանը նշել է, որ «Չիրվանզադէի յայտնած տեսակէտ, մեզ յայտնի միակ աղբիւրն է, որ հաստատում է Աղամեանի՝ Օղրիջին տեսած լինելը» (նոյն տեղում): Իրականում Չիրվանզադէից բացի Աղամեանի՝ Օղրիջի խաղը դիտած լինելը վկայել է նաեւ Զաքարիա Քէօշէեանցի «Լեմն» ծածկանունով հանդէս եկած մի յօդուածագիր: Իր «Պետրոս Աղամեան Հայ Հռչակաւոր Դերասան» յօդուածում, խօսելով Աղամեանի՝ դերասանական արտիստիկ ճոխութեան մասին, նա մասնատրապէս գրել է. «Աղամեանի միտքը դրածը յաջողեցաւ՝ մեծապէս կը նպաստէ նոյն միջոցին մեծամեծ եւրոպացի դերասանաց ի Պոլիս գալն, ինչպէս՝ Ռիսթորիի, Ասենեյիոս (նկատի ունի իտալացի դերասանուհի Ադելաիդա Ռիստորիին - Ա.Բ.) եւ Օլարիչի: Աղամեան սակն հնարք կը բանեցնէր այդ դերասանաց բոլոր ներկայացմանց ներկայ գտնուիլ, որոց ամենայն ձեւք, սրտարմունք, փոխիոխութիւնք կերպարանաց եւ դիմաց, նոյն եւ ձայնից ներելիք, իրրեւ ի հայելւոջ՝ կը տպաւորին նորա փառասէր եւ բնաւակայութեան վրայ»[3] (ընդգծումը մերն է- Ա.Բ.):

Պետրոս Աղամեանը եղաւ այն առաջին հայ դերասանը, որի հնչող չեզոպիտեան դերակատարումների չնորհիւ հայ թատերական արուեստը դուրս եկաւ միջազգային ասպարէզ, իսկ դերասանը, նոյնիսկ ծանից տասնամեակներ անց, մնաց դերասանների եւ թատերագէտների հետաքրքրութեան կենտրոնում[4]:

Վերջում նշենք, որ Յովակիմեանն իր գրքոյկի երկրորդ գլխում բացայայտել է, թէ ով է եղել Աղամեանի դէմ յօդուած գրած Ճ ծածկանունով հեղինակը, ինչը մեզ չիշեցնում է գրեթէ կէս դար հեղինակի կատարած աննախադէպ աշխատանքը՝ հայ հեղինակների ծածկանունների բառարանը, որը, ինչպէս

վկայած է գլխոյկի վիրջում քեզուած հեղինակի «Լնսնոխոյ գոյծնեջս ցանկում, բնդգրկում է 3500 էջ: Նշան ծառայում եւ հայ ուսումնասիրողի համար սեռական գիրք դառնալիք աշխատութեան գայսօր չհրատարակուած լինելը մեզ զրում է սխոռ խորհրդածութիւններից: Վաղուց անհրաժեշտութիւն է դարձել նման մի հրատարակութիւն հայ իրականութեան համար. քաղաքակիրթ ժողովուրդները (եւ ոչ միայն նրանք) արդէն չազմիցս հրատարակել են նմանատիպ աշխատութիւններ, մինչդեռ մեզանում տակաւին չի իրագործուել նման մի խիստ կարեւոր գործի տպագրութիւն: Եղած փորձերը կամ հնացած են, կամ չարգանք չներշնչող: Մարդենք, որ մօտ ապագայում ի վիճակի ընթերցողի սեփականութիւնը կը դառնայ նաեւ հայ բանասիրութեան եւ թատերագիտութեան անխուսք պիտոյք Բախտիար Յովակիմեանի *Հայ Հեղինակների Մարդկամոմների Բառարան, 16-20-րդ դդ.* արդէն շատ երկար սպասուած գիրքը...

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ,

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

1 Տե՛ս *Հայկազեան Հանրագիտարան Համիտ*, հատոր ԻՎ., 2001, էջ 183-198:

2 Ադամեանն անգլիացի թատերագրի անունը գրել է Շեկսպիր ձեւով, սակայն մենք տալիս ենք առաջ ընդունուած Շեքսպիր ձեւով:

3 *Ազդակիզ*, հատոր Ա՛Դ, պրակ Դ, 1886, Հոկտեմբեր-Նոյեմբեր, էջ 290:

4 Դեռեւս 1880ի Նոյեմբերին անգլիական *Daily Mail* թերթում Բաթումի անգլիական հիւպատոսը գրել է. «Հայ ազգը, որ ընդունել, քարգմանել եւ իր սեփական բեմի գրայ այնքան արժանաւորել ներկայացրել Շեքսպիրի «Համլէտը», այդ ժողովուրդը չի մոռնիր: Գերմանացի նշանաւոր բեմադրիչ եւ դերասան Փաուլ Վինկնէրը մի առիթով ասել է. «...լսած եմ օրինակ, որ հայ դերասաններ թատրոնին հինը դրած են Արեւելքի մէջ, լսած եմ որ հայ դերասաններ Շէյքսփիր խաղացած են մեծ յաջողութեամբ:... Իսան Մուժուքինը (Մուժուխին - Ա.Բ.), օրինակ, կը խոստովանի թէ չատ բան կը պարտի հայ դերասանի ճը, անունը չեմ յիշեր դժբախտաբար, որ ռուսական պետական թատրոնին մէջ հայերէն լեզուով Շէյքսփիր խաղացած է ռուս դերասաններու հետ (նկատի ունի Վահրամ Փափազեանին - Ա.Բ.)» (տե՛ս *Լիբերալ*, 17.04.1928): Եւ Ադամեան արուեստագէտը հենց իր Համլէտի դերակատարմամբ է ճնշացել սեռոնդների չիշողութեան մէջ. ասուածի բառագոյն ապացոյց է, որ չեքսպիրեան գերեզի անգլիացի խոշորագոյն վարպետ Լորդ Օլիվէն, սիթնրաեայ ժամուի վկայութեամբ, հանդիպելով հայ դերասան Աչո Շահխաթունու, վերջինիս խնդրել է իրեն տեղեկութիւններ հայերէն Պետրոս Ադամեանի Համլէտի դերակատարման մասին, որի վերաբերեալ իրը բազմիցս լսել էր: Մեր օրերում էլ անհետաւոր բառերագէտ, չեքսպիրագէտ Մարվին Ռոզենբերգը Համլէտի Դիմակների ստուերաժամանակ բազմոիկ աշխատութեան մէջ, ի թիս երկու տասնեակի հասնող տարբեր ժողովուրդների դերասանների մարմնաւորած Համլէտների, յիշել է նաեւ Ադամեանի Համլէտը: Հեղինակն օգտագործած աղբիւրների մէջ գրել է նաեւ Ռոբէն Յարեանի անհետացած հաղորդումները հայկական եւ ռուսական Համլէտների վերաբերեալ: Նա 15 անգամ յիշել է Ադամեանի (տե՛ս Marvin Rosenberg, *The Masks of Hamlet*, Newark: University of Delaware Press, 1992, էջ 103, 162, 213, 216, 320, 398, 401, 479, 605, 607, 721) եւ մէկ անգամ՝ Վահրամ Փափազեանի անունը (նոյն տեղում, էջ 436):

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ



ԼԻՒՈՆ ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
(1924-2003)

Մահը, երկարատեւ հիւանդութենէ յետոյ, 2003 Փետրուարի 6ին երեւանցիս, այս աշխարհին հրաժեշտ տուաց բազմաճիւղ բեղմնաւոր գործունէութեամբ անուանի մի մտաւորական, որի անունն է Լեւոն Հախվերդեան: Շուրջ վեց տասնեակնոց նա մեծ նուիրումով ծառայեց հայ գրականութեանը եւ ճշակութիւնը՝ իր ետեւից թողնելով մի պատուական անուն: Իր ժառանգ հարուստ ու ինքնատիպ իմացութիւնը նա ծառայեցրել է գրական, գիտական, լեզուա-ճշակութային, նաեւ կենցաղային բնագաւառներում հարատեւ ժողովրդին յոգով հարցերի հանրօգուտ լուծմանը, անհատ պայքար մղելով անկիրք, գոյշ, մակերեսային գրականութեան եւ արուեստի ցաւագովեների դէմ: Նա իր ասելիքն ու անելիքը կատարել է անկեղծ հաւատով, գիտական բարեխղճութեամբ, պատասխանատուութեան զգացումով: Նա անառարկելի ներկայութիւն էր հայ գրական եւ ճշակութային կեանքում:

Գրականագիտութիւն, թատերագիտութիւն, բանբասիրութիւն, ճանկավարժութիւն, հրապարակագրութիւն - սրանք են եղել նրա գործունէութեան առաքելքները, որոնցում նրա աշխատանքը գնահատուել է՝ բանասիրութեան դոկտոր (1967), պրոֆեսոր (1987), արուեստի վաստակաւոր գործիչ (1972), ակադեմիկոս (1996), ՀՀ Պետական (1983), Հայաստանի Գրողների Միութեան Միքայէլ Նալբանդեանի անուան (1988) մրցանակների դափնեկիր, Հայաստանի Ծառերական Գործիչների Միութեան Պրոմեթեւս (1999), Ծէքէեան Մշակութային Միութեան դափնեկիր պատկառելի տիտղոսներով:

Լեւոն Յովհաննէսի Հախվերդեանը ծնուել է 1924, Դեկտեմբերի 26ին, Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Սովորել է երեւանի Խաչատուր Աբովեանի անուան Պետհամալսարանի Ծառերական Ֆակուլտետի առաջին չորսամսեայ դասընթացներից (1944-49): Դեռես ուսանողական տարիներից Հախվերդեանն արդէն հրապարակի վրայ էր՝ գեղարուեստական ինքնուրոյն, գրական-քաղաքական ասպարիսներում, ճեղքայացումների քննարկումներում, մեծարժան երեկոներում, ամէնուրեք:

Հախվերդեանի առաջին յօդուածը՝ նուիրուած Լենինականի (այժմ Գիւմրի) Պետական Ծառերում Նալբանդի Ղարեանի *Լիա Գեղեցիկ* պիեսի բեմադրութեանը, լոյս է տեսել 1946ին, *Գրական Թերթում*: Այստեղ է որ ձեւաւորուել է նրա հրապարակախօսական խառնուածքը՝ 1949-1953ին աշխատելով որպես քննադատական բաժնի վարիչ: Միշտ օրուայ հոգսերով ապրող մտաւորականը գրեց *Մեր Օրերի Հայ Դրամատուրգիան (1945-55)* թեկնածուական դիսերտացիան (հրտ. 1956): 1953-55 աշխատելով Հայաստանի Պետական

Հրատարակչությունում որպես խմբագիր, նա թարգմանական գրականությունը հարստացրեց ընտիր լեզուով կատարած թարգմանություններով՝ Ն. Կոմնի *Հին Հունական Լեգենդներում Ու Առասպելներում*, որը երկու հրատարակությունն է ունեցել: Նրան են պատկանում նաև Եուզովսկու *Դարմ Ու Կերպարը* (1975), Կոկլէն Ասպի *Դիտաստանի Մատեանը* (1978) քառերեքյոտական եւ այլ գործերի մի շարք թարգմանություններ:

Միշտ ամիսանգիստ ու որոնող Հախվերդեանն 1955-59 տեսնում նրը ընտատեղծ *Սովետական Մատենա* ամսագրի խմբագրությունում, որպես պատասխանատու քարտուղար: Սեփական յոթուածներից բացի, նա կազմակերպել է օտար հեղինակների յոթուածների ու կարծիքների հրատարակությունը հայկական արտեստների ու նրանց դեմքերի մասին: Այս շրջանում էր, որ նա ուսումնասիրության նիւթ է դարձրել *Մարտէ Քոչարեանի Մատենա* (1959) թեման:

ՀՀ Գիտությունների Ակադեմիայի Արուեստների Պատմության Ու Տեսության Սեկտորը իրրեն Արուեստի Ինստիտուտ վերակազմատորուելուց յետոյ, Հախվերդեանը եղել է նրա առաջին գիտնականներից մէկը, դառնալով Թատրոնի եւ Կինոյի Բաժնի վարիչ (1965ից), իսկ 1987ից մինչեւ կեանքի վերջը՝ Ինստիտուտի տնօրէն:

Արուեստի Ինստիտուտում ծեռնարկած ուսումնասիրությունների մէջ խոշոցան Հախվերդեանի գիտահետազոտական աշխատությունների կշիռը: Թատերական հարցերից բացի, նա որոշ ուշադրացած կատարեց նաեւ կինոյի եւ ճարտարապետության (չատ ոգեորուած էր Ռաֆայէլ Իսրայէլեանի աշխատանքներով) առաքարէգներում: Այդ շրջանում էր, որ նա իր աշխատակից ընկերների հետ սկատրատեց *Հայ Սովետական Թատրոնի Պատմություն* մեծարժէք գիտական ուսումնասիրությունը (1967): Այդ գրքի համար նրա գրած *Դերասանական Արուեստ (1917-1962)* բաժինը աշխատության մէկ-երրորդից աւելին է: Նա ծատուցն ու թեթեւակի բնութագրումներով տուել է ընդգրկուած ժամանակաշրջանի չորք ոք տասնեակ դերասանի ստեղծագործության վերլուծությունը: Այժէր, որ այդ աշխատությունն առանձին հրատարակութիւն ունենար: Միտում էր աշխատել դասական, մեզմ երաժշտության տուակ:

Հախվերդեանի բանասիրական պրպտումների մէջ ամենաշահեկանալիցը դարձաւ *Թումանեանի Աշխատնը* դասագրական դիսերտացիան (1964, տպագրուել է 1966ին), իսկ թատերագիտության մէջ՝ *Հայ Թատրոնի Պատմություն (1901-1920)* հանգամանալից ուսումնասիրությունը *(1980)*, որն արժանացաւ Հայաստանի Պետական Մրցանակի (1983):

1969-76 Հախվերդեանը հասարակական ինչնատիպ ունեցող մի մեծ ծառայություն մատուցեց հայ գրական-մշակութային կեանքին: Նա Յովհաննէս Թումանեանի Ծննդեան 100ամեակի Տօնակատարության Հանրապետական Յանձնաժողովի քարտուղարն էր, որի ուսերին էր ծանրացած Թումանեանի մի շարք գործերի հրատարակությունը բնագրով եւ թարգմանություններով, տարբեր վայրերից եկած-հրատիրուած գրական-թարգմանչական գործիչների առօրեայի կազմակերպումը, ամբողջ Թումանեանական Տարին միջոցառում-

ներով ճշգրտ բարդ գործը, թե իրենց զինվորագրի եւ թե իրենց կազմակերպիչ: Ի վերջոյ հրատարակեով յոբելեանական տարեգրութիւնը (1972): Այս շրջանում (1969) նա հրատարակեց *Քառամեանցի հնամեքը* եւ *Քառամեանը* գիրքերը՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն, գերմաներէն եւ ֆրանսերէն լեզուներով:

Ոչ պակաս արդիւնաւէտ էր նրա աշխատանքը նաեւ Անեոից Իսահակեանի ծննդեան 100 (1975) եւ Գաբրիել Սունդուկեանի ծննդեան 150 (1976, մէկ տարի ուշացումով) ամեակներին նուիրուած յոբելեանական հանդէսների ու միջոցառումների կազմակերպման գործում: Այդ առթիւ նա տպագրեց *Իսահակեանի հնամեքը (Իր վկայութիւններով ու բանաստեղծական ընտրութիւններով)* գիրքը հայերէն (1974) եւ ռուսերէն (Մոսկուա, 1975):

Քառոերական արուեստին նուիրուած Հայկական հրատարակութիւնները ու բազմաթիւ յօդուածները իսկոյն են հանդիսացել արուեստի այդ ժանրի զարգացմանը: Գաբրիել Սունդուկեանի Անուան Պետական Ակադեմական Քառոերի 50ամեակի առթիւ (1972), նա գրեց եւ հրատարակեց մի գրքոյկ թատրոնի անցած ուղու մասին՝ հայերէն, ռուսերէն, անգլերէն եւ ֆրանսերէն:

Բեմադրիչ Վարդան Աճեմեանի հետ նա գրեց չարենցեան բեմաեքով *Ջէյթի Ամպրոտ* պիեսը, որը 1960ին բեմադրուեց Սունդուկեանի անուան թատրոնում Աճեմեանի կողմից: Հայկական թատրոնաեքը 1956-1979 ընդմէջ թատրոնում բեմադրուել են Ա. Մոլզոնի *Մի Խոյ Նշանաւորում*, Ա. Ջանկի եւ Ա. Կալենգոլի *Երկու Գայլ*, Վ. Դելմարի *Ծիչիր Վարդայ Օդդ*, Վ. Խարդոյի եւ Է. Մարայի *Մարդամ Սաճ-Ժէճ*, Մաթեւ Պաճիոյի *Տուգագ*, Ա. Արդուլինի *Տասներեք-թեղերը* պիեսները:

Հայկական մի որոշ ժամանակ հայ թատրոնի արուեստին է դասաւանդել Թատրոնի եւ Կինոարուեստի Պետական Ինստիտուտում՝ դիմակարուեստով թատերագիտական կուրս: Հայ բեմի մեծերի բարձր գրական ու բեմական գործունէութեանը վերաբերող նիւթերին մօտիկից առնչուելու նպատակով, նա ուսանողներին յաճախ բերում էր Գրականութեան եւ Արուեստի Թանգարան՝ տեղում ծանօթացնելու այդ բուռ, բայց խօսուն վկաների հետ:

Իբրեւ մայրենի լեզուի ամենաբուռ կիրառմանը նախանձախնդիր անձնաւորութիւն, նա, ինչպէս մեզուում, այնպէս էլ հեռատեսաեսութեամբ բազմիցս նկատեեր է ոչնչեր մեր լեզուի բառակ ու տեղիճ գործածութեան հարցերի շուրջ, ամենօրեայ յուզող հարցեր, որոնք յետագայում նա ամփոփել է *Նրոյցներ Հայերէնի Մասին* (1982) եւ *Նրոյցներ Լեզուի Մասին* (1986, 1993) գրքերում:

1981ին, Լիբանանի Հարաբացիական Պատերազմի շրջանում, Բէյրութի Հայկազեան Գալէճի (այժմ Համալսարան) կողմից հրաւիրուել է մի շարք դասախօսութիւններ կարդալու լեզուի, գրականութեան, ճշակոյթի մասին՝ բարձրացնելով մեր հայրենակիցների ազգ. տոկունութիւնն ու ստեղծագործելու ակտիւութիւնը: Այս շրջանի նրա գրական հունձքն է հանդիսացել *Պայազայր* խոհագրութիւնը (1981 Բէյրութ), որն արժանացել է Հայաստանի Գրողների Միութեան Միքայէլ Նալբանդեան մրցանակին (1988): Նա 1997

Յունուար-Փետրուար ամիսներին դասախօսութիւններ է կարդացել Հայկազեան Համալսարանում:

Հախվերդեանը եղել է աշխարհի մի շարք հայկական համայնքներում եւ ամէնուրեք չխուսել ու մտերմական կապերի մէջ է մտել տեղական գրականագիտական գործիչների հետ, գրել նրանց մասին, քարոզագրել նրանց՝ հայապահպանութեան համար չափազանց կարեւոր դերը մեր ժամանակներում: Նա այն սակաւաթիւ գործիչներից էր, որ մասունքներ էր բերում սփիւռքից եւ պահպանութեան յանձնում Գրականութեան եւ Արուեստի Թանգարանին:

Բեղմնաւոր մատենագրական գրչի արդիւնք են նաեւ *Երկեր եւ Կենդանութիւն* (1964), *Դէմքեր եւ Դէպքեր* (1977), *Բեմադրիչներ եւ Բեմադրութիւններ* (1983), *Մենք եւ Մեր ժամանակը* (1997 Բէյրութ), *Մենք եւ Մեր Օրերը* (2000) յօդուածների ժողովածուները, *Քառասնապետական Բառարան* (1986), *Մեռքեմներ* (1984), *Յուշիաններ Արեւեան* (1990), *Հայրենիք* (Ա. Իսահակեանի մասին 1990) գրքերը, *Քառամեայեր եւ Հայոց Պատմական Մակեւսագիրը* ժողովածոյ իր առաջաբանով ու ծանօթագրութիւններով (2000): Լեւոն Հախվերդեանն իր մատչելի գրական-քաւեքական գործունէութեան ճանապարհին իրեն դրսեւորել է իբրեւ իր խիզ բառերով ասած՝ շիտակ մարդ: Իր շրջապատում չի եղել շնորհալի մէկը, որին չլեղեռաւոչի, չօգնի, չխրախուսի իր ապաթէր գտնելու համար:

Նա այս կեանքից հեռացաւ զգալով մարդու, արուեստի քննիչը, ընտանիքին նուիրուած, գիտութեան ու գրականութեան մէջ լաւն ու առաջադէմը գնահատած մարդու բոլոր յատկութիւններն իր արուեստի անթերած:

ԲԱԽՏԻՍԱՐ ՅՈՎՍԱՓԵԱՆ

ՊՕՂՈՍ ԽԱՉԱՏՐԵԱՆ
(1929-2003)



Հայաստանի Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Մաթեմատիկայի Արեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Պօղոս Մկրտչի Խաչատրեանը ծնուել է 1929ին, Միապետական շրջանի Մոլոքիա գիւղում: 1947ին ստացուելով տեղի միջնակարգ դպրոցը, նա ընդունուել է Երեւանի Խաչատուր Աբովեանի Անուան Մանկավարժական Ինստիտուտ, որն աւարտել է 1951ին եւ վերադարձել հայրենի գիւղ՝ ուսուցչութեան: 1960ին ընդունուել է Հայաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Մաթեմատիկայի Արեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Հայ Հին եւ Միջնադարեան Գրականութիւն» մասնագիտութեամբ: Նրա «Հայ Միջնադարեան Ոտանաւորի Ձեւերը» թեկնածուական ատենախօսութիւնն աւարտելի գրքով լոյս է տեսել 1969ին: Այնուհետեւ նրա գիտական հետաքրքրութիւնները կենտրոնացել են Գրիգոր Նարեկացու ստեղծագործութեան շուրջ, որի արդիւնքում, երկար տա-

բիների տրճաջան հետազոտութիւններից յետոյ, մեծավաստակ գիտնական Արշալույս Ղազինեանի հեղինակակցութեամբ լոյս է տեսել Գրիգոր Նարեկացու *Մատեան Ողբերգութեան* պոէմի գիտաքննական բնագիրը (1985), որի համար ստանձնախմբերն արժանացել են Ակադեմիայի Մեսրոպ Մաշտոցի անուան մրցանակի:

Պօղոս Խաչատրեանի հեղինակութեամբ հրատարակուել են նաեւ *Նարեկի Միջնադարեան Լաւմուկքը* (1990) եւ *Գրիգոր Նարեկացին եւ Հայ Միջնադարը* (1996) գրքերը: 1994ին Խաչատրեանի աշխատասիրութեամբ լոյս է տեսել *Մովսէս Խորենացի. Մատենիր, Հոմիլիր, Ճառաբանութիւններ* գործը՝ գլաբար հատուածների հանդիպադիր արեւելահայերէն փոխադրութեամբ, առաջաբանով եւ ծանօթագրութիւններով, իսկ 2001ին՝ *Գանձասարի Հայ Հին Ուսմանց Դպրոցը* առաջաբանով ժողովածուն (մասնակի աշխատակցութեամբ Վազգէն Դերիկեանի)՝ առաջաբանով, հեղինակների կենսագրականներով, նարտուար ծանօթագրութիւններով եւ բառարանով:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի առաջարկով անխոնջ գիտնականը գլաբարէից արեւելահայերէնի է վերածել *Մովսէս Գրքի* որոշ հատուածներ՝ «Երեմիայի Մարգարէութիւնը, «Եւսայու Մարգարէութիւնը, «Երեմիայի Ողբը» եւ «Դպրութի Ծառքը», որոնք *Մովսէս Գրքի* հետ միասին ունեցել են երեք հրատարակութիւն՝ 1994ից սկսած: Խաչատրեանն արեւելահայերէնի է թարգմանել նաեւ Շահամիրեանների *Ղուկաչը Փառաց* աշխատութեան երկու գրքերը, որոնցից առաջինը լոյս է տեսել 1991ին, երկրորդը, ՀՀ Սահմանադրական Դատարանի պատուէրով, 2002ին:

Բացի գիտական գործունէութիւնից՝ Պօղոս Խաչատրեանը զբաղուել է նաեւ մանկավարժութեամբ: Շահագրգռուած լինելով մանուկ սերնդի հայեցի կրթութեան հարցով՝ նա կազմել է երկ դասարանի *Գրականութիւն* դասագիրքը (Արեգնու Շաքրութեանի եւ Ռ. Դալլաքեանի հեղինակակցութեամբ), որն ունեցել է աւելի քան 15 հրատարակութիւն, ինչպէս նաեւ 9րդ դասարանի *Հին աշխարհատիպ* ձեռնարկը: Պօղոս Խաչատրեանը դասախօսել է երեւանի Պետական Համալսարանի Հայկական Բանասիրական Ֆակուլտետում (1983-1995), իսկ 1995ից մինչեւ կեանքի վերջը՝ Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցում եւ Ս. Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանում՝ վերջիններում դասատուելով հայ հին գրականութեան պատմութիւն եւ հայ եկեղեցական մատենագրութիւն առարկաները:

Խաչատրեանը մահացել է 21 Յուլիս 2003ին:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՌՈԶԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ
(1931-2003)

Բանասիրական գիտութիւնների դոկտոր, բանագէտ Ռոզա Հայրապետի Գրիգորեանը ծնուել է 1931ի Յունուարի 25ին, Նոր Բայազետում (այժմ՝ Գաւառ): Աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Բանասիրական Ֆա-

կոլտեջի Հայոց Լեզուի եւ Գրականութեան Ֆաքիլթեի 1953ին, եւ ընդունուեր Մանուկ Աբեղեանի Անուան Գրականութեան Ինստիտուտի ասպիրանտուրան՝ «Շուշա-Հայկական Գրական Կապերը մասնագիտութեամբ, ձշանուոր յանարան պրոֆեսոր Համազասպ Համբարձումեանի գիտական ղեկավարութեամբ: 1980ին հրատարակել է Համբարձումեանի կենսագրութիւնը, 1988ին վերահրատարակութեան է պատրաստել Հոմերոսի *Ոդիսական* Համբարձումեանի թարգմանութեամբ: 1964ին պաշտպանել է «Հոմերոսը եւ Հայ Գրականութիւնը» թեմայով թեկնածուական թեզ եւ շարունակել իր ուսումնասիրութիւնները շուշա-հայկական գրական կապերի ասպարէզում:

1960ից մինչեւ կեանքի վերջը Գրիգորեանն աշխատել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտում, նախ՝ կրտսեր, ապա՝ աւագ եւ առաջատար գիտաշխատողի պաշտօններով: Զբաղուել է բանահաւաքչական, բանագիտական աշխատանքներով, որոնք արգասաւորուել են մի շարք ժողովածուների հրատարակմամբ՝ *Հայ ժողովրդական Օրօրոցային եւ Մանկական երգեր* (1970), *Հայ ժողովրդական Հեքիաթներ*, հատոր VIII (1977), *Գնդարդումներ* (1983), *Մանկապատում* (1991), *Սասնայ Ծռեր. Ֆ Նոյեմբերյան Պատմվածքներ* (2000):

1996ին Գրիգորեանը պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն՝ «Հայ Մանկական Բանահիւսութիւնը» թեմայով, որը արդէն առանձին մենագրութիւն տպագրուել է 2002ին՝ *Հայ Մանկական Բանահիւսութիւն (Ժողովրդական Օրօրոցային եւ Մանկական երգեր)* վերնագրով: Գրիգորեանը հայ մանկական բանահիւսութեան մեծագոյն գիտակն էր:

Նա հեղինակ է բազմաթիւ բանահիւսական եւ բանագիտական յօդուածների: Զգալի աշխատանք է կատարել հայ ժողովրդական խաղիկների գիտական համահաւաքի, մոտիւային համաբարդարդի կազմման, ինչպես նաեւ Հնագիտութեան եւ Ազգագրութեան Ինստիտուտի բանահիւսական արխիւի մշակման գործում:

Ոգին Գրիգորեանը մահացել է 2003ի Օգոստոսի 13ին, Երեւանում:

ԵՐՎԱՆԴՈՒՀԻ ՄԵԼԻՔ-ՄԻՐԶԱԴԵՄԱՆ

ԳԷՈՐԳ ԱՒԱՋԵԱՆ
(1920–2003)



Քաղաքագէտ, բանասիրական գիտութիւնների թեկնածու Գէորգ Համբարձումի Աւաջեանը ծնուել է Կողբաղաց աշխարհի Շնող գիւղում: Պատանեկութիւնն ու երիտասարդութիւնը անցել են Շիրակի դաշտավայրի Շիրակ գիւղում, ապա՝ Գիւմրիում: Երկրորդ Աշխարհամարտից առաջ որպէս դերասան աշխատել է Գիւմրիի Տիկնիկային Քաղաքում: Իբրեւ պատահի՝ 20 տարեկանում դարձել է ստալինեան բանակայութեան զոհերից մէկը՝ ենթարկուելով ազատրի: Երկրորդ Համաշխարհային Պատերազմի տա-

իմ ընկերին կամաւոր մեկնել է ռազմաճակատ: Պատերազմից յետոյ վերադարձել է Գիւմրի, որպէս դերասան աշխատել տեղի Դրամատիկական Թատրոնում: Այստեղ նրա կատարած կարեւոր դերերի մէ Ֆերդինանդը (Ֆրիդրիխ Շիլլերի *Սէր եւ Հոգեգնութիւն*), Օթարեանը (Ալիքսանդր Շիրվանզադէի *Պատուի Համար*) եւ Գազիկ բազատրը (Ներսէսիկ Դեմիրճեանի *Երկիր Հայրենի*): Ծողմնդով բեմը՝ ծուխլուել է թատերագիտութեանը: 1956ին կնոջ՝ դերասանուհի, Հայաստանի ժողովրդական արտիստուհի Վարդուհի Վարդերեսեանի հետ հաստատուել է Երեւանում: Այստեղ երկու տասնամեակ դեկավարել է Հայաստանի Հեռուստատեսութեան եւ Ռադիոյի Պետական Կոմիտէի Գլխաւոր Խմբագրութիւնը: Հեղինակ է երկու տասնեակից աւելի մեծ եւ փոքր գրքերի, բազմաթիւ յօդուածների: Առաջին գրքերով յոյս տեսած աշխատութիւններից յիշատակեմ են *Մարտի Մարտնեաց* (1959), *Խոսեակ Ալիխանեանց* (1967), *Գաղթէն Յանգստեան* (1983), *Լեռան Ջանդարեան* (1984), *Արուեստը Իմչպէս Տեսայ* (Վահրամ Փափազեանի մասին, 1986), *Քառեմբատմութիւն* (1988), *Աղաւի Աւազեան եւ Հրաշալի Ուղեկցակիցները* (1989), *Գիւմրիի Քաղաքացի Մարգիկ* (1989), *Երկու Դիմանկար. Ասիա Բէնդոյեան, Արամ Ղազանճի* (1990), *Քաղաքական Ակնարկներ* (1996), *Մարդիկս Գրիգորեան* (2000), *Անանիք Խաչատրեանը եւ Հայոց Ազգութագրութիւնը* (2001): Կեանքի վերջին տարիներին եղել է ՀՀ Ազգային Ակադեմիայի Ճեղաստագրութեան Քաղաքագրան-Իմաստասիրական ամազ գիտաշխատող: Երկու անգամ ստրժանացել է Հայաստանի ժառանգաւորների Միութեան առաջին մրցանակի, իմչպէս նաեւ ՀՀ արուեստի վաստակաւոր արտիստ կոչման:

Գէորգ Աբաջեանը վախճանուեց 2003 Հոկտեմբերի 6ին, Երեւանում:

ՀԱՅԿԱՋ ԵՐԱՆՈՍԵԱՆ

ԼԵՕ ՀԱՄԱԼԵԱՆ
(1920-2003)



Ականաւոր եւ բեղմնաւոր գրող, ուսուցիչ եւ խմբագիր Լեւ Համալեան ծնած է 1920ին: Ան աւարտած է Նիւ Եորքի Քօրնէլ եւ Քոլումպիա Համալսարանները եւ անցած ուսուցչական ասպարէզի՝ իբրեւ գրելու եւ գրականութեան դասախօս:

Դեկտ. Համալեան սիրուած դասախօս մըն էր: Ան գրականութիւն դասաւանդեց Համպուրկի, Փաբիզի, Նիւ Եորքի, Քոլումպիա, Քենըսըի համալսարաններում, իմչպէս նաեւ California Institute Of The Artsի մէջ: Այդ հաստիքներէ իր ուսուցչական բնօրրանը եղաւ Նիւ Եորքի Սիթի Քոլէճը ուր դասաւանդեց 1955էն մինչեւ իր մահը: Հոն էր որ ան արժանացաւ մրցանակներու, իմչպէս՝ «Անգամաւոր Ուսուցիչ»ի (1985)ի, ծառայեց իբրեւ Guidanceի տեսուչ (1964-66), ապա եղաւ տնօրէնը Creative Writing Graduate programի (1972-75): Ան գործեց իբրեւ տեսուչը

Academic Affairsի՝ California Institute of Artsի մէջ, եղաւ խորհրդականը Մ. Նահանգներու Կրթական Հաստատութիւնին:

Ան անդամ էր P.E.N.ի Freedom to Write յանձնախումբին: Համալեան մաս կազմեց նաեւ չարք մը կարեւոր ամսագրերու խմբագրութեան, ինչպէս՝ *The Literary Review, Coloumbia*, եւ *Humerus*: Խմբագիրն էր *American Book Review*ին: 1958էն 1964 աշխատած է Harper's Magazineի մէջ եւ հանախմբագիրն էր *Artists Influence* երկամեայիին որ Ափրիկո-ամերիկեան արուեստին նուիրուած հրատարակութիւն մըն է:

Հանսակոսի ու Թեհրանի համալսարաններուն մէջ դասատուութեան ընթացքին, Համալեան սկսաւ խորացնել իր ծանօթութիւնը հայ գրականութեան:

Ան հայ մշակոյթի երկարամեայ մշակ մըն էր, որ գործեց հայ անգլիատառ գրականութեան ամրաստանին մէջ: Ան 1972էն մինչեւ 2003 խմբագիրն էր անգլիատառ *Ararat* գրական պարբերականին: Գրական եւ մշակութային այս եռամսեան թերթս չատագոյն ամբիոնը եղաւ որով Համալեան ի գործ դրաւ իր կախարդանքը: Պարբերականը՝ ՀԲԸՄի հովանիին տակ կը հրատարակէ կայացած եւ նոր գրողներու երկեր, եւ կը ծառայէ իբրեւ ամերիկահայ համայնքի միակ գրական խօսափողը: Այսուհանդերձ, *Ararat*ի հոչակն ու ընթերցողներուն շրջանակը կ'անցնին հայ համայնքէն անդին: Համալեանի դերը մեծ եղաւ նաեւ ամերկահայ նոր գրողներու ճանաչման եւ ստեղծումին մէջ: Ան 14 տարի առնչուեցաւ Անահիտ Գրական Մրցանակի Յանձնախումբը, որ առնչուած է Քոլումպիա Համալսարանի Հայկական Ամբիոնին:

Ան մեծ ազդեցութիւն ունեցաւ ամերիկահայ գրականութեան վրայ ոչ միայն իբրեւ գրող, քննադատ եւ ընտրանիներ կազմող, այլեւ նոր գրողներ հասարացրող եւ անոնց գրական զարգացման աջակցող: Իր ազնիւ եւ օգնող բնաւորութիւնը իր շուրջ համախմբեց ժամանակակից գրողներու բաւական մեծ խումբ մը, որ գնահատողը հանդիսացաւ իր գրական գիտելիքներուն եւ կարողութիւններուն:

Իբրեւ գրող եւ խմբագիր Համալեան մեծ նպաստ ունեցաւ ամերիկահայ գիր ու գրականութեան: Ան համախմբագրեց ամերիկահայ գրականութեան ծաղկաքաղ մը՝ *Crossroads: Short fiction by Armenian American Writers* (1992) հատորը որ տեղ գտած Լէոնարտոս Ալիշանի, Հերի Պարսկեանի, Ճոն Պարսամեանի, Էմմ Քալիճի, Մարկոս Քէյսէի, Ռիչըրտ Յակոբեանի, Րոպըրթ Հիւսերի, Քարլ Գալֆայեանի, Լորա Գալփաքեանի, Մայքըլ Գրիգորեանի, Քերրիճ Մանուկեանի, Փիթըր Նահապետեանի, Ռոպըրթ Ներսէսեանի, Ուիլիըմ Սարոյեանի, Փիթըր Սորեանի եւ Լեւոն Միրմէկեանի պատմուածքները, խմբագրեց Սարոյեանի պատմուածքները՝ *Madness in the Family* (1988), ընդգրկեց հայ գրականութեան ծնունդներ՝ լայն ընդգրկում ունեցող գրական ծաղկաքաղներու մէջ, ինչպէս՝ *New Writing From the Middle East* (1978), որ արտաքսական, խորհրդեհական եւ քրդական ժամանակակից հեղինակներու կողքին ներկայացուց հայ գրականութիւնը յանձինս Վահրամ Ատրպետեանի, Գուրգէն Մահարիի, Սեդա Հրաճգադեանի, Հրանդ Մաթեւոսեանի, Գեղամ Եմինի, Սիլվա

Կապուտիկեանի, Անուշիք Խոսիակեանցի, Պարոյր Սեւակի, Չահրատի, Անդրանիկ Ծառուկեանի եւ Կարիկ Պատմաճեանի երկերուն:

Ան գրեց հայերու մասին՝ գրականութեան իբրեւ ամբողջական փոքրամասնութեան դիտանկիւնէն՝ *As Others See Us: The Armenian Image in Literature* (1980), ուր ներկայացուց հայուն կեպարը՝ իբրեւ առեւտրական, գրականութեան մարդ, մասոնիկ ու խորհրդական, արուեստագէտ ու սիրող, խնամատար եւ աշխատասիրաղաքաքի՝ համեմով զայն կարծրատիպէ (stereotype): Խմբագրեց Ուիլիըմ Սարոյեանի *The Man and the Writer Remembered* (1987) հատորը եւ բազմաթիւ յօդուածներ հրատարակեց տարբեր ժողովածուներու մէջ, ինչպէս՝ Ռիչըրտ Հովհաննիսեանի՝ *New Perspectives on the Armenian Genocide*:

Հեղինակեց շարք մը գիրքեր, ինչպէս՝ *Burn After Reading* (1978), *D. H. Lawrence in Italy*, եւ համահեղինակեց *Grammar in Context* գիրքը: Առանձին է այդ խմբագիրքերու հետ հրատարակեց վէց դասագիրքեր՝ վիպակներու, երեւակայական պատմուածքի (fiction), ռուսական վիպակներու, եւ գրականութեան մասին, ինչպէս նաեւ՝ շարք մը ծաղկաքաղներ, ինչպէս՝ *The Existential Imagination*, *In Search Of Eden*, եւ *The Fourth World*: Ան հրատարակեց նաեւ երեւակայական պատմուածքի ծաղկաքաղ մը՝ *The Outposts of Imagination*, ու համախմբագրեց *Eleven Modern Short Novels*, *The Naked I*, *The Radical Vision* գիրքերը, եւ կնոջական երկեր՝ *Solo* եւ *Ladies on The Loose*:

Համալսարան կառաւարած է նաեւ գրական-գրաքննադատական ամսագրութիւններ՝ հայ եւ միջին արեւելեան:

Շուրջ 200 յօդուածներու եւ տարբեր նիւթերու գրախօսականներու հեղինակ Լէօ Համալեան մահացաւ Նիւ Եորքի մէջ, 8 Նոյեմբեր 2003ին:

ԱՐԱՄ ԱՐՓՈՒՆ

ՄԻՇԷԼ ՎԱՆ ԷՊՊՈՒԿ
(1934-2003)



22 Նոյեմբերի 2003ին, Նոր Լովէնում, 69 տարեկան հասակում, անսպասելիօրէն իր մահկանացուն կնքեց մեր ժամանակներուն նշանաւոր արեւելագէտներից մէկը՝ հայագէտ, վրացագէտ եւ քրիստոնեայ Արեւելքի մատենագրութիւններուն հմուտ մեկնաբան պրոֆ. Միշէլ Վան Էպպուկը:

